

ՀԱՅԱՍՏԱՆ  
ԵՎ ԻՐ  
ԱՆՄԻԶԱԿԱՆ  
ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ



9147.925  
h-94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅՔ (ԱՄՆ-ՀԱՅԱՍՏԱՆ) ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ԵՎ ԻՐ  
ԱՆՄԻԶԱԿԱՆ  
ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

2782

Սեպտեմբերի 22-ից-25-ը  
Երեանում կայացած գիտական  
հստաշրջանի նյութերը



ԵՐԵՎԱՆ 1992 թ.

Հնթերցողի ուշադրությանը ներկայացվող ժողովածում  
պարունակում է այս թեմայով կայացած գիտաժողովի  
եղույթների աղաջրական վերաբույրությունը և բնական է, որ  
չի կրում ծրագրային բնույթ:

1992թ. սեպտեմբերի 22-25-ը Երևանում, Հայաստանի գի-  
տությունների ակադեմիայի և ՀԱՅՔ (ԱՄՆ-ՀԱՅԱՍՏԱՆ)՝  
հաստատության համագործակցության շրջանակներում կազ-  
մակերապեց քննարկումների շարք՝ նվիրված «Հայաստանը և  
իր անմիջական հարեւամները» պրոբլեմին, որի ընթացքում  
լուսարամփեց ժողովրիայի, Իրանի, Վրաստանի և Աղրբեջանի  
հետ Հայաստանի հարաբերությունների արդի վիճակը և  
զարգացման հեռանկարները։ Քննարկումներին մասնակցեցին  
Հայաստանի երեսելի գիտնականներ, մասնավորապես, ՀԳԱ  
Արեւելագիտության, Պատմության, Տնտեսագիտության, Փիլի-  
սոփայության և իրավունքի ինստիտուտների, Սփյուռքա-  
հայության բաժնի, Երևանի պետական համապարբերական ճանաչ-  
ված մասնագետներ, ինչպես նաև պետական մարմինների  
աշխատակիցներ։

Ստորև տպագրվում են այդ քննարկումների նյութերը՝  
անվիրուի պահելով հեղինակային տեքստերը, հարցադրում-  
ները, տեսակետները, գնահատականները և ուրիշներ։

Նիկոլայ Հովհաննիսյանի  
(պ.գ.դ., պրոֆեսոր, ՀԳԱ-ՀԱՅՔ  
համատեղ աշխատանքների  
համադրող) բացման խոսքը:

Հարգելի գործընկերներ,

Անկախություն նվաճած Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքանության առջև կանգնած են բազում դժվարին եւ բարդ խնդիրներ: Նման խնդիրներ են կանգնած նաև նրա մերձավորարեւելյան քաղաքականության առջև: Դրանց լուծումը, լուծման ճիշտ տարրերակների առաջադրումն ու ընտրությունը անհնար է բացառապես պետական պաշտոնյաների ուժերով, որքան է որ նրանք լինեն օժնության անձնավորություններ՝ գործելով փակ դռների հետեւում եւ առանձնասենյակներում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ իրենց առջև ծառացած խնդիրները համեմատաբար հաջող են լուծում այն երկրները, որտեղ իշխանությունները սերտորեն համագործակցում են մասնագետ-գիտնականների հետ, օգտվում նրանց գաղափարներից եւ հաշվի առնում նրանց առաջարկությունները եւ ծրագրերը: Իշխանություն-մտավորականություն դաշինքը կամ համագործակցությունն առավել անհրաժեշտ է անկախության ուղին նոր ուռ դրած եւ այդ բնագավառում մեծ փորձ չունեցող պետությունների համար, որոնց շարքին է դասվում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Ցավով պետք է արձանագրել, որ առայժմ նման համագործակցություն մենք չենք տեսնում մեր հանրապետության իշխանությունների եւ մասնագետ-մտավորականների միջև, հատկապես միջազգային հարաբերությունների մասնագետների միջև: Սակայն հավատացած ենք, որ վաղ թե ուշ այդ համագործակցությունը կայանալու է, որովհետեւ դա են պահանջում մեր Հանրապետության արտաքին քաղաքական կուրսի ճիշտ մշակմանն ուղղված խնդիրները եւ մեր ազգային շահերը:

Բայց դրա համար պետք է, որ իրենք մասնագետներն էլ պատրաստ լինեն, ունենան համապատասխան եւ հիմնավորված ծրագրեր եւ առաջարկություններ՝ իրենց տարրերակներով, որպեսզի անհրաժեշտ պահին դրանք ներկայացնեն կառավարությանը:

Առաջնորդվելով այդ մտահոգությամբ՝ Հայաստանի գիտությունների ակադեմիան եւ ՀԱՅՔ (ԱՄՆ) հաստատությունը համատեղ աշխատանքների վերաբերյալ 1992թ. ապրիլին նրանց միջև ստորագրված Համաձայնագրին համապատասխան, ձեռնամուխ եղան կազմակերպելու քննարկումների շարք՝ նվիրված «Հայաստանը եւ նրա անմիջական հարեւանները» պրոբլեմին: Մեր նպատակն է օբյեկտիվորեն եւ անաչառ կերպով վերլուծել թուրքիայի, Իրանի, Վրաստանի եւ Ադրբեյջանի հետ Հայաստանի հարաբերությունների արդի վիճակը, դրանց բնույթը եւ զարգացման հեռանկարները՝ այդ ուղղությամբ կատարելով հիմնավորված առաջարկություններ, իսկ հնարավորության դեպքում՝ նաև համապատասխան կանխագուշակումներ: Կարծում ենք, որ սա իր նախադեպը չունեցող գիտական եւ քաղաքական կարենոր երեսույթ է: Առաջին անգամ մեր հանրապետության մասնագետների մի ստվար խումբ, պետք է քննարկման ենթարկի Հայաստանի հարաբերությունների հարցը իր անմիջական հարեւան պետությունների հետ: Մեր գլխավոր նպատակն է մեր առաջարկություններով, ինչպես նաև դիտողություններով եւ անգամ քննադատությամբ օգնել մեր նորանկախ հանրապետությանը մշակելու հիմնավորված եւ իրատես արտաքին քաղաքականություն եւ գտնել ճիշտ լուծումներ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

Կցանկանայի ավելացնել, որ բնակ էլ պատահական չէ, որ մեր քննարկումները սկսում ենք առաջին հերթին մերձավորաբեւելյան տարածաշրջանի մեր հարեւանների հետ հարաբերությունների պարզաբանումով: Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանն ինքը պատմաշխարհագրական առումով եւ քաղաքականապես պատկանում է Մերձավոր

Արեւելքին: Նրա ազգային անվտանգությունը, հայ ժողովով ապահով գոյատետմը մեծապես կախված էն այն հանգամանքից, թե ինչպիսի հարաբերություններ կատեղվեն, մի կողմից, «Հայաստանի», իսկ մյուս կողմից, նրա անմիջական հարեանների՝ Թուրքիայի, Իրանի, Վրաստանի եւ Ադրբեջանի միջև։ Չնուանք նաեւ, որ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներում գոյություն ունեն հայ համայնքներ, որոնց կենսագործունեությունը շատ բանով կախված է նաեւ այն հանգամանքից, թե ինչպիսի քաղաքական մթնոլորտ է տիրում մեր տարածաշրջանում։

Ուզում եմ ձեզ միաժամանակ տեղյակ պահել, որ մենք չենք սահմանափակվի միայն այս քննարկումով։ Առաջիկայում ՀԳԱ-ն եւ ՀԱՅՔ հաստատությունը կկազմակերպեն քննարկումների մի նոր շարք՝ այս անգամ նվիրված Հայաստանի հարաբերություններին Ռուսաստանի, արարական երկրների եւ ԱՄՆ-ի ու արեւմտյան այլ պետությունների հետ։

Ես վստահ եմ, որ թե՛ գեկուցողները, թե՛ ելույթ ունեցողները ազատորեն եւ անկաշկանդ կարտահայտեն իրենց անձնական տեսակետները եւ կանեն համապատասխան առաջարկություններ՝ իիմնավորելով դրանք գիտական տեսանկյուններից, չնուանալով, անշուշտ, հավատարիմ մնալ իրատեսությանը։ Եւ եթե քննարկումների ընթացքում արտահայտվեն միմյանց հակառիք, անգամ իրարամերժ տեսակետներ եւ դրույթներ, ապա դա թող չմտահոգի որեւէ մեկին։ Միայն տարբեր տեսակետների համադրումով հնարավոր կլինի հասնել ճշմարտության։

Եւ, վերջապես, կցանկանայի ձեզ հայտնել, որ այս քննարկումների հյութերը առանձին պրակով կիրատարակվեն ՀԱՅՔ հաստատության Տեղեկագրում։

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ 22.9.1992

Ուրիշ Սահակյան

(պ.գ.դ., ՀԳԱ Արեւելագիտության ինստիտուտ)

Այսօրվա մեր քննարկման նպատակը, իմ կարծիքով, պետք է լինի հայ-թուրքական հարաբերությունների պատմությունն ուսումնասիրողների ջանքերն ուղղել Հայաստանի Հանրապետության թուրքական, այսինքն, Թուրքիայի նկատմամբ տարվելիք քաղաքականության մշակմանը։ Այս հարցի շուրջ Հայաստանի մի քանի պատմաբան-թուրքագետներ, կանխավ արտահայտել են իրենց տեսակետները։ Երկու տարի առաջ ես նույնպես Հայաստանի Գիտությունների ակադեմիայի «Միաց» շաբաթաթերթում տված հարցազրույցում /20.12.1990թ./, համառոտակի շարադրել եմ իմ կարծիքը, մասնավորապես ընդգծելով, որ եթե Թուրքիայի նկատմամբ հայկական պետական պաշտոնական քաղաքականություն ըստ էռույն նոր է մշակվում, ապա Թուրքիայի հայկական քաղաքականությունը, ձեւագրվելով դարեր առաջ, վաղուց արդեն ստացել է կուռ եւ ամբողջական տեսք, այն է՝ արյան մեջ խեղդել հայ ժողովրդի ազգային ազատագրական ընդգրումները, առավել եաւ, ինքնուրույնության եւ ամկախ պետականության հաստատման ամեն մի լուրջ փորձ։ Այդ քաղաքականությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի։

Առաջին փուլն ընդգրկում է Արեւմտյան Հայաստանի վերջնական զավթումից /1639թ./ մինչեւ 1918 մայիսի 28-ի Հայաստանի Հանրապետության հիմնումը։ 2-րդը՝ 1918թ. մայիսի 18-ից մինչեւ 1920թ. դեկտեմբերն ընկած շրջանը, որը բնորոշվում էր Հայաստանի Հանրապետության եւ հայկական անկախ պետականության ոչնացման քաղաքականությամբ (այն պակվեց հաջողությամբ ոչ առանց բոլոր մեծ տերությունների,

ներառյալ ՌԽՖՍՀ-ի, օգնության): Յ-ը փուլը վերաբերում է 1920—1921 թվերին, երբ 1920թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի, 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի՝ Հայաստանի համար ստորացուցիչ պայմանագրերի կնքումից հետո Հայաստանում կասեցվեց ինքնուրույն պետականության գործընթացը և մեր հանրապետությունը, առավել սեղմված տարածքով, մտցվեց 1922թ. դեկտեմբերի 30-ին ստեղծված ԽՍՀՄ-ի մեջ: Այդ պահից մինչեւ ԽՍՀՄ-ի փլուզումը Թուրքիան իր հայկական քաղաքականության մեջ ելնում էր այդ փաստից՝ ճանաչելով մեկ ինքնիշխան պետություն՝ Խորհրդային Միությունը:

Հարցի մյուս կողմն այն է, որ հետապերազմյան ողջ ժամանակաշրջանում՝ ամբող 45 տարի, Թուրքիան ունեցել է Խորհրդային Միությանը թշնամի մի վստահելի քարեկամ՝ ԱՄՆ-ը, որն այսօր, սակայն, դառնում է Խորհրդային Միության ժառանգորդի՝ Ռուսաստանի քարեկամը: Այս հանգամանքն է, որ չի կարելի անտեսել, եթե որը չի կարելի նաև գերազահատել, որովհետեւ Թուրքիան իր փայլուն դիվանագիտությամբ սակավաթիվ այն պետություններից է, որոնք բոլոր դեպքերում հետեւել են իրենց ինքնուրույն պետական-քաղաքական գծին՝ հմտորեն օգտագործելով մեծ տերությունների միջև մշտապես առկա սուր հակասությունները: Իսկ ո՞րն է այն լավագույն գիծը, որն այսուհետեւ պետք է վարի Հայաստանի Հանրապետությունը Թուրքիայի հանդեա:

Լինելով պատմաբան, բայց ոչ քաղաքագետ, ես կփորձեմ պատասխանել նաև այդ վերջին հարցին:

Որպես Թուրքիայի նոր շրջանի պատմության մասնագետ, միաժամանակ իբրև Հայաստանի քաղաքացի չեմ ցանկանա, որ Հայաստանի նորաստեղծ Հանրապետությունը, նրա խորհրդարանն ու կառավարությունը՝ կողմնորոշվելով դեպի Հայաստանի ներկան ու ապագան, մոռացության տային անցյալը, մասնավորապես, Հայաստանի առաջին Հանրապետության

կարձատել, բայց վերին աստիճանի ուսանելի փորձը:

Շեի ցանկանա, որ գերազահատվեր Հայաստանի քաղաքական ու տնտեսական կարետրությունը թուրքիայի համար, այլ վերջինս, որպես Հայաստանի մերձավոր հարեւան, ի թիվս Վրաստանի, Աղրբեջանի եւ Իրանի իր արժանի տեղը գրավեր նրանց նկատմամբ մշակվող մեր արտաքին քաղաքական ծրագրերում, որոնց հիմքում, անկասկած, ընկած պիտի լինեն մեր փոքրիկ, բայց անսահման թանկ երկորի ազգային պետական շահերը:

Այդ բոլորի հետ միասին վերջին շրջանում տեղի են ունեցել մեծ ու փոքր իրադարձություններ, որոնք հարկ է հաշվի առեն:

1) ԽՍՀՄ-ը փլուզվել է,

2) Նախկին Խորհրդային հանրապետությունները հռչակել են իրենց անկախությունը եւ ճանաչվել աշխարհի տասնյակ պետությունների կողմից,

3) Ռուսաստանը իրեն հռչակել է նախկին ԽՍՀՄ-ի օրինական ժառանգորդ եւ միջազգային-իրավական ճանաչում գտել հենց որպես այդպիսին,

4) Ռուսաստանը առավել սերտացրել է իր հարաբերությունները մի կողմից ԱՄՆ-ի, մյուս կողմից Թուրքիայի հետ, եւ նա ներկայումս չի փորձում Թուրքիային կտրել ԱՄՆ-ից, ինչպես դա արվել է հետպատերազմյան ողջ ժամանակաշրջանում,

5) ԱՄՆ-ը առավել սերտացրել է իր հարաբերությունները Թուրքիայի հետ՝ նպաստելով վերջինիս ուժեղացմանը մերձավորաբենյան տարածաշրջանում, մի կողմից, եւ Թուրքիայի միջոցով միջինասիական թուրքալեզու հանրապետություններ ներթափանցելու իր միտումներին՝ մյուս կողմից,

6) Սաստկացել է Արցախի պատերազմը եւ հօդս են ցնել մեր դիվանագիտության ակնկալությունները՝ Թուրքիան տեսնել չեզոք դիտորդի դերում,

7) Թուրքիան իր հերթին, ԱՄՆ-ի հավատարիմ ու կայուն

դաշնակիցը մնալով հանդերձ, ընդառաջ է գնում այդ պլաններին եւ հանձն է առնում դրանք իրականացնելու՝ ելնելով, անշուշտ, իր ազգային պետական շահերից:

Թվարկված եւ մի շարք այլ գործուներ, մեր կարծիքով, չի կարելի անտեսել, ուստի, Թուրքիայի նկատմամբ տարվելիք արտաքին քաղաքական կուրսը մշակելիս Հայաստանի հանրապետությունը ստիպված է հաշվի առնել, որ այդ կուրսը այս կամ այն չափով կախված է լինելու միջազգային մեծ քաղաքականությունից եւ, առաջին հերթին, ԱՄՆ-Ռուսաստան եւ ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների ներկա վիճակից եւ դրանց զարգացման միտուներից:

Այժմ դառնանք հայ-թուրքական քաղաքական հարաբերություններ հաստատելու ճանապարհին կանգնած առավել կնճռուս հարցին՝ 1915-ի ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչմանը Թուրքիայի ներկա կառավարության կողմից:

Ինչպես հայտնի է, սկսած 1965-ից, երբ աշխարհի տասնյակ երկրներում նշվեց Մեծ եղեռնի հիսնամյակը, եւ վերջացրած 75-ամյակով, երբ այդ հարցը արդեն քննարկման առարկա էր դարձել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության ենթահանձնաժողովում եւ ճանաչվել Եվրախորհրդարանի կողմից, Խորհրդային Միության ղեկավարությունը համառոք հրաժարվում էր պարզ ու շիտակ կերպով դատապարտել իր երկրի ժողովուրդներից մեկի նկատմամբ Թուրքիայի նախկին կառավարողների կողմից գործադրված ցեղասպանությունը՝ դրանով իսկ անշափ դժվարացնելով կատարված փաստի գոնե ճանաչումը մյուս մեծ տերությունների կողմից:

Ի վերջո, Հայաստանը, պերեստրոյկայի ստեղծած խառնաշփոթությունից օգտվելով, համարձակություն ունեցավ ինքնուրուց ու միայնակ դատապարտել հայոց ցեղասպանությունը պաշտոնապես՝ 1988-ի նոյեմբերի 22-ին ընդունելով Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի հայտնի դրոշումը:

Հայաստանի նոր ղեկավարությունը, ձգտելով դիվանագիտա-

կան հարաբերություններ հաստատել հարեւան Թուրքիայի հետ, զանում է լուրջամբ անցնել նախկին Գերագույն Խորհրդի ընդունած որոշման կողմքով, ըստ եռթյան ելնելով այն իրողությունից, որ Թուրքիան, միեւնույն է, չի ճանաչի հայոց ցեղասպանությունը: Ավելացնենք մեր կողմից, որ երբեք չի ճանաչի, որովհետեւ 1915-ի գենոցիդի ընդունումը, որպես Հայկական հարցի լուծման թուրքական մեթոդ, իր հետ անխուսափելիորեն բերում է տարածքային, դրամական, նյութական, բարոյական եւ այլ փոխհատուցումների մի ամրող շարան:

Բացի նշվածից, կա չափազանց կարեւոր մի հանգամանք, որը հստակորեն առանձնացրել է ցեղասպանության պատմության ֆրանսիացի հետազոտող դոկտոր Էվլ Տերնոնը, ընդգծելով, որ հայոց ցեղասպանությունը ճանաչելու դեպքում «հարկ կլիներ վերաշարադրել թուրքական պատմությունը»:

Ուստի միանգամայն բնական է, որ Թուրքիան ինչպես պաշտոնապես, այնպես էլ ԱՄՆ-ի թուրքական լորրիի միջոցով խանգարում է հարցի քննարկմանը եւ Օսմանյան կայսրության կառավարողների հանցագործությունը դատապարտող որեւէ որոշման ընդունմանը:

Ելնելով նման դիրքորոշումից՝ Թուրքիան փաստորեն որպես նախապայման պահանջում է ոչ միայն պաշտոնական հրաժարում 1915-ի ցեղասպանության նույնիսկ հիշատակումից, այլև՝ Հայաստանի բարձր ղեկավարության միջամտությունը, նրա ներգործությունը Սփյուտքի այն կուսակցությունների ու կազմակերպությունների վրա, որոնք տակավին շարունակում են իրենց գործունեությունը հայոց ցեղասպանությունը միջազգային չափանիշով դատապարտելու ուղղությամբ եւ հանդես են գալիս պահանջատիրությամբ:

Հայաստանի ղեկավարության վիճակն այս տեսակետից քավականին ծանր է, եթե ի նկատի ունենանք, որ կյանքը ինքը եւ երկրի ծայրահեղ բարդ տնտեսական ու քաղաքական

կացությունը թելադրում են դիվանագիտական հարաբերություններ հաստատել առաջին հերթին անմիջական հարեւաների հետ:

Սակայն պատմական փորձը ցույց է տալիս, որ խիստ կարեւոր է չմոռանալ, թե ում հետ գործ ունենք, եթե խոսքը գնում է Թուրքիայի մասին, եւ տարբեր մակարդակի հայ-թուրքական բանակցությունների ժամանակ հասնել այն բանին, որ թուրքական կողմը, որպես դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախապայման, առաջ քաշի ընդունված փաստաթղթից (խոսքը 1988-ի նոյեմբերի 22-ի որոշման մասին է) պաշտոնապես հրաժարվելու պահանջ, որովհետեւ սկզբունքային ամեն մի զիջում իր հետ բերում է այլ զիջումներ քաղաքական կարեւոր հարցերում:

Ինչ վերաբերում է պահանջատիրությանը, սփյուռքահայության վրա ճնշում գործադրելուն եւ այլն, ապա Հայաստանի Հանրապետության դեկավարությունը՝ կարող է պարզորոշ կերպով թուրքական կողմին հասկացնել, որ ինքն իրավասույթ այդ բանն անելու, թեկուզ այն պատճառով, որ նախ հայկական սփյուռքն անկախ, ինքնուրույն միավոր է, եւ ապա՝ որ հենց նա՛ է պահանջատերը, քանի որ պահանջատիրության տակ հասկացվում է ցեղասպանության հետեւանքով բռնագրաված հայկական հողերը վերադարձնելու հարցը:

Ուստի չպետք է ընդառաջ գնալ թուրքական կողմի նախապայմաններ եւ պաշտոնական հայտարարություններ չանել հոդային պահանջներից հրաժարվելու մասին:

Նաև՝

Պաշտոնական հայտարարություններ չանել Հայաստանի ու Ռուսաստանի կողմից 1918—1921 թվականներին Թուրքիայի հետ կնքած պայմանագրերը (1918-ի հունիսի 4-ի Բաթումի, 1920-ի դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի, 1921-ի մարտի 16-ի Մոսկվայի եւ 1921-ի հոկտեմբերի 13-ի Կարսի) ճանաչելու վերաբերյալ, թեկուզ այն պատճառով, որ նրանցից առաջին

երկուար կնքվել են Հայաստանի նախկին Հանրապետության, երրորդը՝ Մոսկվայի կառավարության կողմից, իսկ վերջինը՝ Կարսի պայմանագիրը, պարզապես կրկնում է 1921 թվականի Մոսկվայի պայմանագրի դրույթները, թեեւ պայմանագրի տակ դրված է Խորհրդային Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների ստորագրությունը:

Նաև՝

Ընդառաջ չգնալ թուրքական կողմի փորձերին՝ Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը կապելու Աղրբեջանին զիջումներ անելու կամ որեւէ այլ նախապայմանի հետ:

Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ հաստատվելիք այլ հարաբերություններին՝ առեարական, տնտեսական, մշակութային եւ այլն, դրանց զարգացումն, անկանած, կնպաստի բարիդրացիական հարաբերությունների սկզբանակրմանն ու կայունացմանը, սակայն այստեղ էլ պետք է հանդես բերել բանական մոտեցում՝ խուափելով հախուսն եւ հապճեպ քայլերից, որոնք հաճախ վեաս են հասցնում պետականության նոր-նոր արթնացող զգացման ամրապնդմանը՝ Հայաստանի քաղաքացու մեջ:

Վերջացնելով հայ-թուրքական կապերի զարգացման հեռանկարների հետ առնչվող իմ խիստ համառուս մեկնարանությունը, իհարկե, չեմ մոռանում, որ Հայաստանի ու Թուրքիայի միջեւ պետական հարաբերություններ հիմնելու ու դրանց վարելու գործը Հայաստանի Հանրապետության դեկավարության ու Երիտասարդ, ծլարձակող դիվանագիտության անմիջական խնդիրն է:

Իսկ մեր, Հայաստանի ու Թուրքիայի նոր պատմության մասնագետների, պատմաբան-միջազգայնագետների պարտքն է ծեռք բերած զիտելիթներով ու փորձով համեստ ավանդ մուծել այդ հարաբերությունների մշակման ծրագրերում, եթե մեր այդ ցանկությունն արժանանա համապատասխան մարմինների ու շաղրությանը:

Հարց (Լ. Խոլոշովյան, ԳԱ թղթակից անդամ)։

- Մենք ունենք կառավարություն, նախագահ։ Այդ կառավարությունն ունի արտաքին քաղաքականության գիծ, որը բխում է ՀՀ կազմակերպության ծրագրի դրույթներից։ Մենք այստեղ եկել ենք, որ ասենք, թե ինչպիսի վերաբերմունք ենք ցույց տալիս կառավարության այդ երկու տարվա քաղաքականությանը եւ ինչ ուղիներ ենք տեսնում մեր ապագա գործունեության համար։

#### Պատասխան։

- Ուսաստանը հայ-թուրքական սահմանը միշտ կհամարի ռուս-թուրքական սահման։ Նա Անդրկովկասից չի գնա։ Ես ուրախ եմ այսօր հաստատելու, որ այդ բանը իրականանում է։ Չնայած ժամանակավոր ելեւշներին, ինչ-որ տեղ անգամ հահանջ կա Ուսաստանի կողմից, Թուրքիայի հետ դեռ պահպանվում են սերտ կապեր, բայց այս ամենը հիմնականը չէ։ Ուսաստանը ունի կայուն քաղաքականություն։ Ճիշտ է, ուսաները պատերազմի ճանապարհով, նվաճման եղանակով են ձեռք բերել Հայաստանը, բայց մենք լավ գիտենք, թե ինչ է շահել դրանից մեր ժողովուրդը։

Ինչ վերաբերում է մեր այսօրվա արտաքին քաղաքականությանը, կարող եմ ասել, որ Հայոց համազգային շարժումը բոլորովին էլ հայոց համազգային շարժում չէ։ Եթե նա քաջություն չունի այդ բանն ընդունելու՝ ավելի վատ։ Բայց ես գտնում եմ, որ ՀՀ-ականները լիովին միայնակ են մշակում իրենց քաղաքականությունը։ Ես ասացի, թե ինչ չպետք է արվեր, որ արվել է։ Եթե այստեղ մեկը կա, որ գիտի 100%-ով, թե ինչ պիտի արվի Թուրքիայի կապակցությամբ թող ելույթ ունենա։

#### Հոփիսիմե Կորիսմազյան

(պ.գ.թ., ՀԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ)

Հայ-թուրքական հարաբերությունների պրոբլեմը խիստ բարդ է եւ բազմաբովանդակ։ Այն կարող է քննարկվել միմիայն մեր տարածաշրջանի հարեւանությամբ տեղաբաշխման, ինչպես եւ հեռավոր արտասահմանյան երկրների հետաքրքրությունների շրջանակներում, ընդհանուր միջազգային դրույթան զարգացման միտումների ֆոնի վրա։ Դրան զուգահեռ գոյություն ունեն որոշակի հանգամանքներ եւս, որոնք նույնպես պետք է հաշվի առնեն։ Այսպես, թեկուզ անհրաժեշտություն չի զգացվում պարզաբանելու այսօրվա հայ-թուրքական հարաբերությունների եւ դրանց հեռանկարների գնահատման համար հարցի հանրահայտ նախապատմությունը, սակայն առկա է այդ նախապատմության փաստը, ավելին, դրա ժառանգական բարդացումը։ Այդ իսկ պատճառով Հայաստանի եւ Թուրքիայի միջաեւտական փոխհարաբերություններում վերը նշված նախապայմանների բացառումը եւ դրան համապատասխանող ներքին քաղաքականության միջոցով այդ հարաբերությունների անհապաղ, հեղափոխական, հոգեբանական վերակառուցումը այսօրվա մեր քաղաքագետների կողմից ի սկզբանե, մեղմ ասած, անհեռանկար պետք է դիմել։ Այստեղ հարցը կապվում է ոչ միայն մեր մտածողության պահպանողական ընույթի հետ։ Հասարակությունը պահանջում է գոնե իրական ապացույցներ այն մասին, որ թուրքական հասարակական շրջանակներում ես ընթանում եւ անցյալի ողբերգական իրադրությունների վերագնահատման գործնթաց, ինչը եւ թույլ կտար հուսալու, որ թուրքական քաղաքականությունը այսօր եւ ապագայում անկախ Հայաստանի հետ հարաբերություններում ծայրահեղ դեպքում զուտ կլինի։ Մինչդեռ դրա ապացույցները չեն եղել չկան։ Առկա է միմիայն մեր քաղաքագետների գաղափա-

իական եավատամքը, այն է՝ Հայաստանը ամեն կերպ պետք է հասնի Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների: Սակայն այստեղ հարց է ծագում, իսկ ի՞նչ են մտածում թուրքերը: Եթև ինչպիսի՞ն են թուրքական ստրատեգիական, ռազմաքաղաքական եւ այլ նրագրերը, ինչի՞ վրա են դրանք խարսխված: Ինչպիսի՞ Հայաստան է ձեռնուու Թուրքիային:

Այս հարցին պատասխանելու համար հարկավոր է հաշվի առնել նաեւ մեկ այլ հանգամանք: Ոչ թէ Թուրքիան, այլ Հայաստանն է սկսում կառուցել իր քաղաքականությունը, այն էլ դատարկ հիմքի վրա, զրոյից, իր քաղաքական գաղափառախոսությունը մշակում՝ ելնելով ընթացիկ իրավիճակից: Իսկ Թուրքիան վաղուց ունի մշակված ստրատեգիական ծրագրեր, կազմակերպված քաղաքական նպատակներ ու խնդիրներ:

Եւ վերջապես, պետք է նշել նաեւ այն հանգամանքը, որ ինչպես մեր, այնպես էլ սուսական եւ արեւմտյան քաղաքականության մեջ լայնորեն տարածված եւ մշտապես օգտագործվող «Հնախատեսված հանգամանքներ» եւ «անկանխատեսելի հետաւանքներ» հասկացությունները իրադարձությունների գնահատման ժամանակ թուրքական քաղաքականության մեջ գործնականորեն չեն կիրառվում:

Այնպիսի խոշոր իրադրություն, ինչպիսին համաշխարհային գերտերության՝ ԽՍՀՄ-ի վլուգումն էր եւ նրա վլատակների վրա անկախ պետությունների կազմավորումը, նույնպես անսպասելի չեր Թուրքիայի համար: Իհարկե, թուրքական քաղաքագետները չգիտեին, թե դա ե՞րբ կլիներ, կամ կլինե՞ր ընդհանրապես թե ոչ, սակայն նրանք գիտեին ինչպես կառուցել իրենց երկրի քաղաքականությունը, ինչպես գործել ԽՍՀՄ-ի վլուգման այս կամ այն սցենարի դեպքում, եթե դա տեղի ունենար: Ճիշտ այդ ձեւով նկատի էին առնված համապատասխան տարբերակներ հենց իր՝ Ռուսաստանի, վլուգման դեպքում, եթե դա տեղի ունենար, կամ եթե տեղի ունենա ապագայում: Թուրքիան դրան լիովին պատրաստ է երեկով:

Չարքելով այն հարցի քննարկմանը, թե Թուրքիայի այսօրվա քաղաքագետների ծրագրերում եւ աշխարհայացքում ինչ չափով են առկա պանթուրքիզմի եւ թուրանիզմի գաղափարները, պետք է ընդգծել, որ մերձավոր եւ միջին արեւելյան տարածաշրջաններում Թուրքիայի համար մեծ տերություն դառնալու, մուսումանական աշխարհում վճռորոշ դեր խաղալու չքողարկված ծգուումը բնորոշում է թուրքական զաների ուղղվածությունը դեպի ընդարձակ թյուրքաբնակ տարածքները՝ որպես նրա ընդարձակման եւ ազդեցության ամրապնդման տեսանկյունից առավել հեռանկարային, քանի որ հենց այստեղ են միաձուվում եթնիկական եւ կրոնական ընդհանրությունները:

Այսպիսով, ինչպես էլ որ այն կոչենք, Թուրքիայի քաղաքականության մեջ ստրատեգիական ուղղվածությունը հստակ որոշված է եւ կազմում է Թուրքիայի ազգային քաղաքականության կարեւորագույն մասը:

Իսկ ինչ վերաբերում է քաղաքական ասպարեզում հայմանված Հայաստանի անկախ հանրապետությանը, դա ընդամենը Թուրքիայի կողմից արդեն հաշվարկված եւ կանխատեսված իրադարձության իրականացում էր, որը թեև չդրդեց Թուրքիային վերանայել իր քաղաքական կողմնորոշումները՝ Հայաստանի հանդեպ ստրատեգիական պլանների տեսանկյունից, սակայն Թուրքիան ձեռնարկեց հետագա իրադարձություններին լրեսայն հետեւելու եւ զուսպ չեզոքություն պահպանելու քաղաքականություն: Նա իրեն արդեն իսկ բավարարված էր զգում այն օգոստներից, ինչ շահել էր ԽՍՀՄ-ի վլուգման հետեւանքով:

Մինչ այդ էլ թուրք քաղաքագետները ոչ մի առիթով չեն թաքցնում իրենց կարծիքները այն մասին, թե ոչ մի հանգամանքում չին ցանկանա տեսնել ԽՍՀՄ-ը կամ Ռուսաստանը որպես ուժեղ եւ զորեղ տերություն, քանի որ թուրքերի համար սարսափեցու էր այն, որ հենց այդ իսկ տերությունների կողմից կարելի էր սպասել ոչ այնքան գաղափարական կամ կոմունիստական հավակնություններ, որքան տարածքային պա-

հանջների դրսեւորում:

Այստեղից միանգամայն պարզ է դառնում, որ բոլքերային տիպի պետությունների, այդ թվում նաև Հայաստանի երեսն գալը չեր կարող ողջունվել Թուրքիայի կողմից: Ինչ վերաբերում է մեր դիվանագիտական շրջանակների գործունեությանը, ապա նրանց կողմից ճիշտ կլիներ ոչ թե ջանքեր գործադրել ԽՍՀՄ-ի փլուզման արագացման ուղղությամբ, այլ պատրաստվել դիմագրավելու փլուզման հետեւանք կազմող դժվարություններին՝ քաղաքական, տնտեսական եւ ռազմական փոխհարաբերություններում: Մեր քաղաքագետները կարծում էին, թե այդ փլուզման ընթացքում իրենց կհաջողվի կրակից իրենց համար շագանակներ հանել: Ատացվեց սակայն այնպես, որ այդ շագանակները նրանք հանեցին ոչ թե իրենց, այլ ուրիշների համար: Նկատելով 1991թ. սկզբներից Թուրքիայի ընդունած խիստ օգուշավոր, չեզոք եւ չափավոր դիրքորոշումը՝ մեր քաղաքագետները խուճապի մեջ ընկան եւ շփոթեցին Թուրքիայի հանդեպ իրենց ստրատեգիական դիրքորոշումը՝ մտածելով իրենց հակառական նոր կողմնորոշումներով հասնել Թուրքիայի եւ, ինչու չե, նաև ԱՄՆ-ի, Եվրոպական մյուս երկրների հանդեպ ունեցած քաղաքականության մեջ սկզբունքային փոփոխությունների: Ավելին, Հայաստանի նորընտիր դեկադարները կարծում էին, թե Թուրքիան, ԱՄՆ-ը եւ Եվրոպան ըստ արժանվուն կանահատեն իրենց դեմոնստրատիվ քայլերը, այսպես ասած՝ «զնացքից շուտ թռչելով» կապակցությամբ:

Մինչդեռ 1991թ. մարտին Թուրքիայի՝ Մոսկվայում ստորագրած համաձայնությունը հատկապես կանգ էր առնում «քաղաքական փոխադարձ անկախության, սուվերինիտետի, տարածքային ամրողականության խիստ պահպաննան, միմյանց ներքին գործերին չմիջամտելու կետերի վրա: (Թուրքիան իր դիրքորոշումներում բոլորովին չեր շտապում, քանի որ ԱՆՊԿովկասում դեռ առկա էր եւ պահպանվում էր սուսական

ազդեցությունը):

Իրավիճակը կարուկ փոփոխվեց ԽՍՀՄ-ի լրիվ փլուզումից եւ պրեզիդենտի հրաժարականից հետո: Բնական է, որ փոխվեց նաև Թուրքիայի վերաբերմունքը Հայաստանի եւ Ղարաբաղի հանդեպ:

Այժմ, ինչպիսի հիմքի վրա եւ Հայաստանը կառուցի իր նոր քաղաքականությունը Թուրքիայի հանդեպ, նա պետք է զնալուր զիջումների ճանապարհով՝ կախյալ Վիճակ ստեղծելով իր համար: Պատահական չե, որ հայկական կողմի նոր առաջարկությունները Յ-րդ տնտեսական կոնգրեսում թուրքական կողմի հետ բանակցությունների ժամանակ՝ հաղորդակցության ուղիների հնարավորին օգտագործման, փոխադարձ առեւտուր սկսելու վերաբերյալ, Նեմիրելի կողմից մնացին անպատճախան: Ինչպես հետո դրան անդրադարձավ թուրքական մամուլը, Թուրքիան առաջմն այդ առաջարկությունները ամուր պահում է իր գզոցներում: Իսկ դրա դիմաց թուրքական կողմը չի խորշում առաջադրելու իր պահանջները: Դրանք են՝ 1) հայերի անհապաղ հեռանալը Շուշիից ու Լաշինից, 2) որոշակի փոխզիջումներ Հռոմի եւ Մինսկի խորհրդաժողովներում: Թուրքերի կարծիքով, իրենց այդ առաջարկությունների կատարումը հայերի կողմից օգոստ կրերեր հենց իրենց հայերին:

Սակայն իրականում թուրքական նման պահանջների կատարումը Հայաստանի կողմից կհանգեցներ Թուրքիայի եւ Ադրբեյջանի գերազանցության ապահովմանը Հայաստանի հանդեպ, ցանկացած պահին, ցանկացած առիթով կկասեցվեր ամեն տեսակի տրանսպորտային հաղորդակցություն: Առեւտրական կապերը եւ մղվում են ամենահետին պլան:

Այժմ, արդեն համոզված լինելով դրանում, մեր դիվանագիտությունը փորձում է Թուրքիայի հետ հարաբերություններում հասնել հակակշռ՝ կառուցելով իր նոր տիպի հարաբերությունները Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ: Հայաստանը խիստ շահագրգուված է ամուր Ռուսաստանի՝ ԱՊՀ-ի պահպանմամբ:

Այժմ մեր դիվանագիտությունը դատում է այսպես՝

Եթե Ռուսաստանի եւ Թուրքիայի շահերը բախվեն մեր տարածաշրջանում, ապա դա երկար կտեիք: Իսկ եթե Ռուսաստանն այդ պայմանում թուլանա, ինարավոր է, որ ԱՄՆ-ը եւ Թուրքիան դրդեն նրան գնալու զիջումների, որը կլինի, ինչ խոսք, Հայաստանի հաշվին եւ կիհանգեցնի հայերի կողմից տարածքային նոր կորուստաների:

Թուրքիայի համար խիստ կարետը է Ղարաբաղի հարցում Ադրբեջանին օգնելը: Դա, այսպես ասած, նրա համար իր քաղաքական վարկի ապահովումն է:

Սա, իհարկե, չի նշանակում թե Թուրքիան կդիմի Հայաստանի դեմ կոնկրետ ռազմական ազրեսիայի, չնայած թուրքական կողմի հայտարարությանը, որ ինքը պատրաստ է զորք մտցնել Նախիջևան: Այս հայտարարությունը ավելի շատ նպատակ էր հետապնդում ստուգել Ռուսաստանի ռեակցիան:

Այնքան հավանական չէ Թուրքիայի ռազմական ազրեսիան Հայաստանի դեմ, որքան նրա մերձեցումը Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ, եւ վերջիներիս հետ համատեղ ճնշման գործադրումը Հայաստանի վրա:

Մեր դիվանագիտության համար այժմ խիստ կարետը է Ռուսաստանի՝ որպես իհմնական դաշնակցի, պահպանումը:

Այժմ Հայաստանի համար թերեւս ամենակարեւորն այն է, որ Թուրքիան պատերազմող Ադրբեջանի չեզոք դաշնակցն է: Հենց այս հանգամանքից ելնելով էլ պետք է կառուցել ներկայիս մեր դիվանագիտությունը:

Վատն այն է, որ մեր կառավարությունը երբեմն ձգտում է անհնարինեն, այսինքն, Թուրքիայի հետ անմիջական, շտագ մերձեցմանը, այն էլ՝ զգալի զիջումների գնով, որի հետեւանքները խիստ վտանգավոր կարող են լինել: Էլ չենք խոսում այդ կապակցությամբ Ռուսաստանի համապատասխան ռեակցիայի մասին:

Այս պարագաներում Հայաստանը պետք է ձգտի լավագույն

փոխհարաբերություններ հաստատել Ռուսաստանի եւ ԱՊՀ-ի այլ երկրների հետ (ասենք՝ համագործակցության, զենքի արտադրության, գիտության բնագավառներում): Նման քայլերը խիստ կամրապնդեն Հայաստանի քաղաքական դիրքերը, ինչպես նաև կապահովեն նրա սպառագինությունների մակարդակի նվազագույնը:

Իսկ Թուրքիայի հետ պետք է ձգտել խիստ զգուշավոր, դանդաղ մերձեցման:

### Հակոբ Չաքրյան

(պ.գ.թ., ՀԳԱ Արեւելագիտության ինստիտուտ)

Սկզբնական շրջանում միշտ կողմ եմ եղել հայ-թուրքական հարաբերությունների հաստատմանը: Մենք գիտեինք, որ Հայաստանը պետք է անկախանա եւ, ինչպես L. Տեր-Պետրոսյանն ասաց, քաղաքակիրթ հարաբերություններ ստեղծի բոլոր հարեւան երկրների, այդ թվում նաև Թուրքիայի հետ: Միաժամանակ Թուրքիայում մտավախություն կար, որ ԽՍՀՄ-ը կփուզվի եւ կառաջանան մի շարք փոքրիկ, մանր պետություններ: Իսկ, ինչպես ասում էր Թուրքիայի պրեմիեր մինիստրը: «Մեզ համար նախընտրելի է մեր հարեւանությամբ ունենալ հզոր մի պետություն, եւ ոչ թե մի քանի մանր պետություններ»: ԽՍՀՄ-ը փլուզվեց, եւ թուրքերի ցանկությունը չիրականացավ: Առաջացան մի շարք մանր պետություններ: Հայաստանի անկախության հռչակումից հետո Թուրքիան Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ մի շարք հայտարարություններ արեց: Օրինակ, Հայաստանի անկախացումից հետո, 1991թ. դեկտեմբերի 7-ի իր ելույթում Օգալը հայտարարություն արեց. «Ես նոր կառավարությանը առաջարկում եմ անմիջապես դիվանագիտական հարաբերություններ հաստատել Թուրքիայի համար յուրահատուկ նշանակություն

ունեցող Հայաստանի հետ: Լավ կլինի, որ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու կողքին ստորագրվի Երկկողմանի տնտեսական պայմանագիր եւ անհապաղ բացվի Մարդարայի կամուրջը»: Անցավ մի քանի շաբաթ, եւ երբ Դեմիրելը եւ Օզալը հեռուստատեսությամբ ելույթ էին ունենում, եւ լուսադրությամբ դժոխություն է առաջացնում թյուրքականու այլ հանրապետություններում, պրեզիդենտը պատասխանեց. «Ես նրանց խոսք կհասկացնեմ»: Նույնը պատասխանեց Դեմիրել՝ ավելի մեղմ ձեւով: Այն հարցին, թէ ինչ շահ պետք է ունենա Թուրքիան, որպես պատասխան հնչեց, որ շատ շահեր կան Հայաստանի հետ կապված: Անցավ որոշ ժամանակ, եւ, համկապես Խոչալուից հետո, Թուրքիան սկսեց Ադրբեջանի իրավունքները միջազգային ասպարեզում պաշտպանելու քայլերը: Հակահայկական հիստերիան տեղափոխվեց միջազգային ասպարեզ: Թուրքիան ամեն կերպ, ընդ որում, հաջող կերպով, համոզում էր, որ ազրեսորդ հայն է: Հիմա նույն Դեմիրելը գտնում է, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար պետք է, որ Հայաստանը զիջի Լաշինը ու Շուշին եւ այլ զիջումներ անի: Ես մի այլ առիթով գրել եմ, որ եթե Հայաստանը փորձ անի դիվանագիտական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ, չի բացառվում, որ Թուրքիան առաջ քաշի Կարսի պայմանագիրը նորոգելու հարցը: Մի բան այսօր պարզ է. Հայաստանի Ծերկայիս իշխանությունների արտաքին քաղաքականության մեջ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու միակ փորձը անհաջողության է մատնվել: Հայ-թուրքական հարաբերությունների մասին մեր մամուլում գրեթե ոչինչ չի հաղորդվում: Այդ ամենի մասին մենք տեղեկանում ենք միայն թուրքական թերթերից: Այստեղից որեւէ ճշգրիտ եղուակացություն անել հնարավոր չէ: Հետեւարար, մենք պետք է ելնենք արդյունքներից: Արդյունքը

իիմա այն է, որ Թուրքիան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար ուժի մեջ է պահում Շուշին եւ Լաշինը զիջելու պահանջը: Այդ մասին Ռիո-դե Շանեյրոյում L. Տեր-Պետրոսյանի այցի ժամանակ Դեմիրելը նորից ասել է. «Դուք աշխարհի վրա շատ հոյս մի՛ դրեք, եկեք մեզ հետ լավ հարաբերություններ հաստատեք, եթե պատմական խնդիրներ ունեք, կարող եք մեզ հետ քննարկել եւ պարզել»: Ուրեմն, ներկա պայմաններում կամ պետք է զիջենք, կամ եւ դիվանագիտական հարաբերություններ չհաստատենք:

Ի՞նչ կարելի է անել: Ոչ թե ուղղակի դիմել Թուրքիային, այլ այնպիսի պայմանների մեջ դնել նրան, որ ինքը ձգտի դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Դրա համար անհրաժեշտ է սերտ հարաբերություններ հաստատել այն երկրների հետ, որոնք Թուրքիայի հետ խնդիրներ ունեն՝ Հունաստան, Սիրիա, Իրաք, Իրան: Իհարկե, այդ անելուց առաջ պետք է ուսումնասիրել Կիպրոսի խնդիրը, Էգեյան ծովի խնդիրը Հունաստանի հետ, Սիրիայի Ալեքսանդրեսի սահչակի խնդիրը, Պարսից ծոցի պատերազմից հետո առաջացած թուրք-իրաքյան խնդիրը: Բացի դրանից, պետք է ուսումնասիրել նաև քրդական բարդ խնդիրը:

Թուրքիան կիասկանա, որ Հայաստանը իր հայ դատի պահանջատիրությամբ կարող է մեծ գլխացավանք պատճառել: Բացի այդ, իրապարակի վրա ունենալով քրդական հարցը եւ այլ պրոբլեմներ, ինքը կձգտի մեզ հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել:

Երբ Միացյալ Նահանգներում ընտրություններ են գնում, Թուրքիան դրա նախօրյակին հսկայական գումարներ է ծախսում, որպեսզի կասեցնի հայերի հայ դատով տարվող աշխատանքը, կասեցնի հայկական բանաձեւի քննարկումը Կոնգրեսում: Միայն այս տարի է, որ Թուրքիան հանգիստ շունչ է քաշում, ոչ մի մտահոգություն այդ առիթով նա: Չունի:

Ինչո՞ւ: Մեր նախագահը բոլոր հարեւան երկրներից նախապատվությունը տպեց Թուրքիային: Սփյուռքը բաժանվեց 2 մասի՝ Թուրքիայի հետ փոխհարարերություններ հաստատելու կողմնակիցների եւ հակառակորդների: Եթե այսօր սփյուռք կա, դա հայ դատի եւ պահանջատիրության շնորհիվ է: Իսկ Հայաստանում ազգային վերածննդի գաղափարի փոխարեն հայկական մաֆիայի վերածննդի գաղափարը գոյություն ունի: Սփյուռքը կիսվեց՝ դա շատ մեծ անզգուշություն էր:

Երկրորդ, ի՞նչ պետք է անի Հայաստանի Գերազուն խորհուրդը: Դեսք է մի տեղ հավաքել բոլոր կուսակցությունները եւ ասել. «Թողե՛ք ձեր միջկուսակցական կողմները եւ հավաքվեք հայկական պետականության գաղափարի շուրջ»: Այդ բանը չարվեց: Ընդհակառակը. իհմա Թուրքիայի հետ հարարերություններ հաստատելու ձգող Հայաստանին Սփյուռքը ինչպե՞ս օգնի: «Կա դատի հարցը բարձրացնի», թե՞ ոչ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսանանը նախապատվությունը տպեց Թուրքիային, ոչ թե Իրանին: Լ. Տեր-Պետրոսյանը ընդունելի համարեց, որ Թուրքիան Ղարաբաղում միջնորդի դեր կատարի, Ռուսաստանը նույնպես ընդունում է Թուրքիայի միջնորդությունը: Հայաստանը ինցնուրույն արտաքին քաղաքականություն չի վարում: Իմ խորին համոզմամբ, այս քաղաքականությունը հրահանգված քաղաքականություն է:

Մեր բոլոր աշխատանքները իզուր են, եթե հանրապետության նախագահը ելույթ է ունենում եւ ասում. «Ես ազգի կործանման ավելի կարճ ճանապարհ չգիտեմ, քան ազգային քաղաքականությունը»: Եթե իսկապես ազգային քաղաքականությունը ազգի կործանման ամենակարճ ճանապարհն է, ապա ի՞նչ ճանապարհով կարելի է փրկել ազգը:

«Կարց (Գ. Գալոյան, ՀԳԱ ակադեմիկոս).

- Հայաստանի արտաքին քաղաքականության մասին խոսելիս դուք թվարկեցիք մի շարք երկրներ, որոնց միջոցով Հայաստանը կարող է ներազդել Թուրքիայի վրա: Այդ

ցուցակում բացակայում էր Ռուսաստանը: Ենթադրու՞ն եք, որ այդ հարցերը հնարավոր է լուծել առանց Ռուսաստանի, թե՞ ինչ-որ այլ նկատառումներով բաց թողեցիք Ռուսաստանը:

Պատասխան.

- Առանց Ռուսաստանի, իհարկե, չենք կարող: Եվ Ռուսաստանն եւ, կարծում եմ, իր ռազմա-սարաւաեգիական դիրքերը դժվար թե զիշի: Ռուսաստանի համար էլ կարելի է որոշ պարտադրող միջոցներ գտնել: Օրինակ, նոր աշխարհակարգի պայմաններում Եվրոպամայնքը վերածեավորվում է:

Ես գտնում եմ, որ Ռուսաստանը չի կարող սերտածել Եվրոպայի հետ: Անգլիայի, Ամերիկայի, Գերմանիայի համար դա նախընտրելի չի լինի: Եւ չի բացառվում, որ այս պայմաններում Ռուսաստանը թեքվի դեպի Մերձավոր Արեւելք: Եթե մենք կարողանանք Մերձավոր Արեւելքի, հատկապես արարական երկրների հետ որոշակի մակարդակի փոխհարերություններ ստեղծել, ապա այդ ժամանակ Հայաստանը կշահի:

Այսինքն, մենք կշահենք այն դեպքում, եթե մեր շահերը կներդաշնակեն Ռուսաստանի շահերի հետ: Կոպիտ ասած, պետք է ինչ-որ միջնորդի դեր ունենալ: Եվ դա մեզ համար ավելի հեշտ է, քան Ռուսաստանի համար: Եթե այդպիսի փորձը մերժվի, դա ավելի վիրավորական կլինի Ռուսաստանի համար, քան մի փոքրիկ Հայաստանի:

«Կարց.

- ԶԵ՞՞ր գտնում, որ Թուրքիայի վրա ազդելու ամենամեծ գործոնը Ռուսաստանի հետ սերտ կապերի մեջ լինելն է:

Պատասխան.

- Թուրքիայի վրա չի ազդում այդ հանգամանքը. Հայ ժողովրդի ամենածակատագրական պահերին միշտ ձեւավորվում է ռուս-թուրքական գործարք, բայց Ռուսաստանը ոչ մի շանք չի թափում հայերին օգնելու համար:

**Հակոբ Հակոբյան**  
(պ.գ.թ., Երեսանի պետական  
համալսարան)

Ես, իհարկե, չեմ կարծում, որ այս պահին, եւ գուցե բավականին երկար ժամանակ, Հայաստանի համար իդեալը Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելն է:

Թող ինձ շատ ներեն նրանք, որոնք ակամայից արդարացնում են ներկայիս իշխանությունների հրեշավոր քաղաքականությունը, երբ ասում են, թե պետք է զրոյից սկսել: Հայ ժողովորդը միշտ էլ ունեցել է օրիենտացիա, դարերով մշակված վերաբերմունք եւ փորձ, հատկապես հայկական 1-ին հանրապետության փորձը: Այնպես որ, մենք չպետք է սկսենք դատարկ տեղից: Իսկ ներկայիս իշխանությունները դեռ իշխանության գլուխ գալուց առաջ, ՀՀ-ի 1-ին համագումարում, երբ ընդունեցին իրենց ծրագիրը, որոշակիորեն վճռեցին ժառանգել չգիտես ինչու, անգիտայի դիվանագետ Պալմերստոնի կարգախոսը. չկան հավերժական բարեկամներ, չկան հավերժական թշնամիներ, կան հավերժական շահեր: Եվ սա, իրենց կարծիքով, մի տեսակ խայծ էր՝ նետված Թուրքիային, թե տեսեք, մենք հրաժարվում ենք ռուսական օրիենտացիայից: Կարծում են, որ սրանով կարող են գայթակղել Թուրքիային, բարեկամներին փոխել, Ռուսաստանը մեկուսացնել հայկական հարցերից եւ բարեկամանալ Թուրքիայի հետ: Տարօրինակն այն է, որ այս, սկզբից եւեթ արդեն ոչինչ չխոսացող քաղաքականության ձախողումից հետո, նրա հեղինակները շարունակում են կառչած մնալ իրենց այդ սնանկացած տեսակետին: Ավելին, նոյնիսկ Հայաստանի հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը 1992թ. հուլիսի 29-ի իր հեռուստատեսային ելույթում իրեն թույլ է տալիս խոսելու ինչ-որ ֆաստաթղթի մասին, որը ստորագրել են դաշնակցութ-

յան լիդերները ՊԱԿ-ի ներկայացուցիչների հետ եւ ասում է, որ այս ֆաստաթղթում պարտավորվածություն կա հայ ժողովորդի շրջաններում վարել ոռանֆիլ քարոզություն:

Այստեղ հարց եղավ Ռուսաստանի հետ մերձենալու, հարաբերությունները բարելավելու մասին: Եթե մենք ուզում ենք, որ Ռուսաստանը լինի մեր դաշնակիցը, մենք պետք է ունենանք որոշակի վերաբերնունք ոռա մարդու նկատմամբ: Հայ-թուրքական հարաբերություններում, հատկապես ներկա պահին, Ռուսաստանի գործոնը վճռական պիտի դառնա, որոշիչ դառնա, ձևականագրական դառնա: Իսկ որպեսզի այս գործոնը գործի, անհրաժեշտ է Հայաստանի իշխանությունների քաղաքականության որոշակի շրջադարձ: Դա ոչ թե Մոսկվա գնալու, բանակցություններ վարելու շրջադարձն է, այլ շրջադարձ ողջ ռուս ժողովորդի նկատմամբ, ոռա հասարակության, ռուսական պետության նկատմամբ:

Ավելի վաղ, քան 2 տարի առաջ ես մամուլում հայտնել եմ այն կարծիքը, որ եթե Հայաստանը անկախանա, կիսաթուրքական շրջափակման մեջ մնալով միայնակ, նա կհայտնվի մի տարօրինակ վիճակի մեջ, որը իրենց կներկայացնի Խորայելի եւ Պաղեստինի միմյանց հակադիր վիճակների խառնուրդը: Այսինքն, մենք պաղեստինցիների պես պետք է շարունակենք մեր հողերի համար պայքարը, իսկ Խորայելի պես պետք է գտնվենք պաշարման մեջ եւ ապրենք զորանոցային կյանքով տասնամյակներ շարունակ: Դրա համար մեզ անհրաժեշտ կլինի ունենալ մեծ բանակ, մեծ սպառազինություն, որը մեր ուժերից վեր է: Ուստի, ինչպես էլ որ ընթանան հայ-թուրքական հարաբերությունները, այստեղ ռուսական գործոնը պետք է լինի ամենավճռականը, ամենակարենը:

**Երկրորդը:** Ես կարծում եմ, որ կոպիտ սխալ է, եւ այդ սխալը շարունակում են Հայաստանի ղեկավարները, երբ ուզում են ամեն ինչ լուծել Եվրոպական անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության շրջանակներում: Դա այն մի-

ջազգային կազմակերպությունը չէ, որը կարող է լուծել մեզ համար ճակատագրական նշանակություն ունեցող հարցերը: Մեզ անհրաժեշտ է դիմել 3-րդ աշխարհի երկրների օգնությանը, այդ հարցը տեղափոխել ՄԱԿ-ի 24-ի հանձնաժողովի օրակարգի մեջ, այն հանձնաժողովի, որը գրադաւում է ապագայութացման հարցերով:

Խորհրդային Միության օրոք վերջինս դիմվել է ՄԱԿ-ի կողմից որպես մեկ ամբողջականություն: Կազմակունդվելուց հետո, միության մասերը պետք է դիմավեն իրեր գաղութների, այլ ոչ թե ինքնակառավարվող երկրների գործավիճակ ունեցող միավորներ: Այդ դեպքում հնարավոր է ինչ-որ բան անել: Բացի դրանից, 3-րդ աշխարհի երկրները անցել են այդ ազգային-ազատագրական գործընթացը, նրանք կարող են հասկանալ մեր խնդիրները եւ օգնել մեզ այդ հարցում:

Երրորդ հարցը: Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններում մենք չպետք է զանց առնենք Ղարաբաղի պրոբլեմը եւ պանթուրքական ծրագրերը: Վերջերս Լոնդոնում անգլիացիները վերահրատարակեցին թեքիդ Ալթի «Թուրքական եւ պանթուրքական իդեալները» գրքով: Այդ գրքով կը լուս է տեսել 1915-ին: Գերմանացիներն այն անմիջապես թարգմանել են գերմաներեն եւ հրատարակել Դրեզդենում: Հետո 1916-ին այդ գրքով կը հրատարակել է Անգլիայում, ռազմածովային նախարարության շտաբի կողմից: Հիմա անգլիացիները վերահրատարակել են նախարանով: Այսօր պանթուրքիզմը ստանում է որոշակի ուրվագծեր, ձեռք է բերում գործնական իրականացման որոշակի շաներ: Մենք չպետք է մոռաննեք այդ բանը: 1938-ին Փարիզում ոռաերեն լեզվով լուս տեսած պանթուրքիզմի մասին Զարեւանդի գրքի մեջ ասված է, որ պանթուրքիստական իդեալը կարող է իրականանալ միայն՝ 1) Ռուսական կայսրության քայլայման դեպքում, 2) դրա համար անհրաժեշտ է վերացնել հայկական ամբարտակը: Հայկական ամբարտակը պետք է կործանել, որպեսզի հնարավոր լինի

թուրքական աշխարհի ժողովուրդներին միավորել միմյանց հետ: Հասկանալի է, որ 24 թուրքական ժողովուրդներից 23-ը Խորհրդային Միության մեջ են ապրում: Բացի թուրքերից, կան, իհարկե, ժողովուրդներ, որոնք ունեն արտասահմանում իրենց հայրենակիցները, բայց իրենց հիմնական զանգվածը, Վարչական միավորումը Խորհրդային Միության մեջ է: Այնպես որ այս հարցում Ռուսաստանի շահերը անմիջականորեն շոշափվում են: Ի հայտ են գալիս հայ-ռուսական երկրաքաղաքական շահերի ընդհանրության երեսույթներ, որոնք մենք պետք է անպայման օգտագործենք: Ասել, որ՝ գիտեք, Մոսկվայում հիմա այդպես չեն մտածում, սխալ է: Կան Ռուսաստանում ուժեր, որոնք ուրիշ տեսակետից են մոտենում այդ հարցերին:

Մենք, գիտականներս, չպետք է սահմանափակվենք միայն այսպիսի ժողովներով: Պետք է դիմել ռեալ միջոցների՝ ներազելու քաղաքականության վրա:

### Մկրտիչ Ներախյան (ՀԳԱ ակադեմիկոս)

Երկրի արտաքին քաղաքականությունը մշակելու ժամանակ պետք է հաշվի առնել նաև պատմության դասերը, մեր հայրենասեր նախնիների պատգամները, նրանց կյանքի ու գործունեության փորձը: Ինչպես կարելի է անտեսել, օրինակ Խորայել Օրու, Խաչատուր Արովյանի, Ներսես Աշտարակեցու, Ստ. Նազարյանի, Մ. Նալբանդյանի, Գր. Արծրունու, Հովհ. Թումանյանի, Կոմիտասի, Գր. Զոհրաբի, գորավար Անդրանիկի խորը համոզումն այն մասին, որ հայ ժողովրդի բնական եւ հուսալի դաշնակիցը Ռուսաստանն է: Նժրախտաբար, այսօր նորելուկ մի շարք «քաղաքագետներ», աղավաղելով պատմությունը, առանց լուրջ փաստարկների պնդում են հակառակը:

Վերջին տարիներին մեր մամուլում հրապարակեցին ոչ քիչ

հոդվածներ, որոնցում այն միտքն է զարգացվում, թե հայկական կոտորածների պատճառը իենց իրենք հայերն են, քանի որ Երանք, դիմելով «Երրորդ ուժի» օգնությանը, դրանով իսկ իրենց դեմ գրգռեցին թուրքերին: Չարամիտ զրպարտանք: Միթե հայտնի չէ, որ Օսմանյան բանապետության դեմ ուղղված ազգային ազատագրական շարժումը ուներ գերազանցապես ինքնապաշտպանական բնույթ եւ հետեւանք էր դաժան, բարբարոսական ճնշումների ու կեղեցումների: Միթե պատահական է, որ սուլթանական բանապետությունը զանգվածային կոտրածներ է կազմակերպել իր լծի տակ գտնվող բոլոր երկրներում՝ Հունաստանում, Սերբիայում, Բուլղարիայում, Մակենդոնիայում, արաբական երկրներում եւ այլուր:

Նկատենք նաև, որ մի շարք «գիտուններ» տարածում են ժողովրդին ընեցնող այն տեսակետը, թե այսօրվա Թուրքիան քաղաքակիրթ երկիր է եւ խիստ տարբերվում է իին Թուրքիայից: Նորից անհիմն դատողություն: Կույր պետք է լինել, որպեսզի չտեսնել, թե ինչ է կատարվում Կիպրոսում, Ջրդատանում, կամ թե ԱՄՆ-ի հովանավորությամբ ինչպիսի «եռանդուն» քաղաքականություն է վարում այսօր Թուրքիան Անդրկովկասում ու ողջ Կովկասում, Միջին Ասիայում, Բալկաններում եւ այլ ռեգիոններում:

Իհարկե, պետք է խաղաղ, դրացիական հարաբերություններ ստեղծել մեր բոլոր հարեւանների, այդ թվում նաև Թուրքիայի հետ: Վերջինիս հետ ես օգտակար է հաստատել տնտեսական-առեւտարական կապեր: Բայց կարծում եմ, որ հայ ժողովրդի ազգային գոյության ու պետականության հետագա ապահովության գործում մեծ դեր կխաղա Ռուսաստանը: Մենք չպետք է հեռանանք ոչ Ռուսաստանից, ոչ էլ ԱՊՀ-ից:

### Երվանդ Սարգսյան

(պ.գ.դ., պրոֆեսոր, ՀԳԱ

Արեւելագիտության ինստիտուտ

Մեր խորհրդարանում դեպուտատներից մեկը գովարանեց Թուրքիան, ասելով, որ այսօրվա Թուրքիան այն Թուրքիան չէ, որ եղել է երեկ: Դա բոլորովին սխալ մոտեցում է հարցին: Պահթուրքիզմը, ինչպես անցյալում, այնպես էլ իիմա հանդիսանում է Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքը, իիմնահարցը: Դա ամբողջ պատմության ընթացքում առկա է: Մեր կառավարության այն վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ, որով որոշ անտեսական հույսեր են կապվում Թուրքիայի հետ, անիրազործելի բան է: Կարաբաղի հարցում Թուրքիան ցույց է տալիս, որ անգամ պատրաստ է պատերազմ սկսել մեր դեմ: Այնպես որ ոչ մի սպասելիքներ Թուրքիայից մենք չունենք:

### Լենորուշ Խուրշուդյան

(ՀԳԱ թղթակից-անդամ,

Երեւանի պետական

համալսարան)

Այսօր մենք պետք է իիմնվենք մի ելակետի վրա: Ստեղծվել է հայոց պետականություն: Սա մի սուրբ գործ է, որի համար պետք է մենք անենք ամեն ինչ: Պատասխանատվությունը այս գործում ընկնում է ոչ միայն մեր իշխանությունների, այլև ողջ հայ մտավորականության, քաղաքական մտքի վրա: Տպավորություն է ստեղծվում, որ քաղաքական միաքը խուճապային վիճակում է, վախենում է իր տեսակետը արտահայտելուց: Այն քաղաքական գիծը, որով մենք գնում ենք, փրկելու՝ է Հայաստանը, թե՛ կործանելու: Այսօր մենք, պետք է պատասխան տանք այս հարցին:

Ի՞նչ քաղաքական գիծ է վարում մեր կառավարությունը: Մեր

պետությունը եւ պրեզիդենտը, ըստ էության, իր քաղաքականությունը վարում է ղեկավարվելով՝ ՀՀ կազմակերպության ծրագրի դրույթներով։ Անցել է 2 տարի եւ այս քաղաքականությունը տվել է իր պատուինը։ Անկախ պետությունը իր արտաքին քաղաքականությունը պետք է կառուցի այն գործոնների հիման վրա, որոնցով շրջապատված է։ Հաշվապահի պես պետք է հաշվել այս գործոնների դրական եւ բացասական կողմերը, մեր ղեկավարությունը հաշվեց թուրքական գործոնի գերակշռությունը, բայց մինչեւ վերջ չհաշվեց։ Որովհետեւ շատերը պատմության իմացության մեջ պարզապես տգետ էին։ Այդ տգիսության հիման վրա ստեղծվեց այն քաղաքականությունը, որն այսօր վարում են։ Մենք հույս ունեինք, որ 2 տարուց հետո մոտավոր աշխարհի հետ լեզու կգտնենք։ Մենք շտեղծեցինք սեփական բանակ այն ժամանակ, երբ մեր հակառակորդը բանակ ստեղծեց։ 2 տարի անց կորցրեցինք Շահումյանը, Մարտակերտը, Արծվաշենը։ Փաստորեն, մենք 4 կողմից հարվածի տակ ենք։ Հետեւարար, մենք պետք է մտածենք, թե ինչ քաղաքականություն պետք է վարել։ Այսաեղ երկու կարծիք լինել չի կարող։ Հայաստանը պետք է ղեկավարվի ոչ թե մի կուսակցության կողմից, այլ կուալիցիոն կառավարության կողմից, որի մեջ պետք է ընդգրկվեն ազգի լավագույս ուժերը։ Բայց առանց միասնության դժվար է խոսել այս մասին։ Միասնություն կարելի է ստեղծել ազգային գաղափարի շուրջը։ Եթե պետությունը հրաժարվում է իր փաստական իրավունքից, ցեղասպանության ճանաչումից, Ղարաբաղից, ապա ազգային գաղափարը վերանում է։ Վերացնել ազգային գաղափարը նշանակում է կուտել ազգի ողնաշարը եւ ազգը վերածել ամբոխ։ 1988-ին մենք ունեինք ժողովուրդ հիմա՝ ամբոխ։

Ես գտնում եմ, որ ելքը կուալիցիոն կառավարություն ստեղծելը է, կուակցական վեճերին վերջ դնելը, եւ ամենակարեւորը, այն ուժերի հրաժարականը, որոնք ցույց տվեցին

իրենց անկարողությունը պետությունն այս վիճակում ղեկավարելու։ Մյուս կողմից հույսը պետք է դնել սեփական ուժերի վրա՝ մի քանի որ մենք չենք անում, եւ որը արել է Խորայելը։ Ճիշտ է, Խորայելը իր թիկունքում ուներ ԱՄՆ։ Մենք եւ պիտի մտածենք այն ուժերի մասին, որոնք այսօր կարող են թիկունք դառնալ մեզ։ Ճիշտ է այն, որ դա առաջին հերթին պետք է լինեն այն ժողովուրդները, այն երկրները, որոնց շահերը հակաթուրքական են։ Նրանց մեջ անպայման պետք է լինի նաև Ռուսաստանը։ Իմ կարծիքով, այսօր ամենառեալ ուժը, որը մենք կարող ենք օգտագործել, Ռուսաստանն է։ Ճիշտ է, Ռուսաստանը իր սեփական շահերն է ունի։ Այսօր Հարավսլավիան քայլայվում է, ստեղծվում է Սերբիա, որը վարում է հակաթուրքական քաղաքականություն։ Մի ուժ, որը մենք պետք է նույնպես օգտագործենք։ Մեր ռազմական եւ արտաքին քաղաքականության մեջ պետք է մտցնենք ողոշակիություն։ Ղարաբաղը հանձնելու մասին խոսք չի կարող լինել, որովհետեւ հաջորդը Զանգեզուրը կլինի, պետք է ստեղծել ռազմական բլոկ բոլոր ժողովուրդների հետ, որոնք հակաթուրքական քաղաքականություն են վարում։ Այդ բլոկը, մանավանդ Ռուսաստանի հետ, մեզ հնարավորություն կտա որոշ ժամանակ ապրելու, մինչեւ որ ուարի կկանգնենք։

Մեզ, հայ պատմաբաններիս, վայել չէ, որ արդեն 2 տարի է բերաններս ջուր առած նայում ենք, թե ինչ են անում մարդիկ, որոնք այրոֆեսիոնալիներ չեն։ Եվ մենք պետք է ոչ միայն խորհուրդներ տանք մեր կառավարությանը, այլ նաև ազդենք նրա քաղաքականության վրա։

#### Հարց.

- Չե՞ք գտնում, արդյոք, որ Ռուսաստանը խիստ շահագրգռված է լավ հարաբերություններ ունենալ Թուրքիայի հետ։

#### Պատասխան.

- Եթե մեր օրակարգում Ռուսաստանի հարցը քննարկվեր, կարելի էր մանրամասն խոսել այդ հարցի շուրջ։ Թուրքական

գործոնը այսօր Ռուսաստանի քաղաքականության մեջ մեծ դեր է խաղում: Թուրքական գործոն ասելով, ես հասկանում եմ ոչ միայն Թուրքիան, այլ Ռուսաստանի ֆեղերացիայի մեջ մտնող բռնոր թյուրքական ժողովուրդների առկայությունը, որի դեմ գործելով, Ելցինը կմասնաւի առանց այդ էլ վտանգի տակ դրված Ռուսաստանի ամբողջականությունը: Մյուս կողմից, ես գտնում եմ, որ ամեն մի ոռու մտածում է Հայաստանը զկորցնելու մասին:

*Դարպոյր Մուրադյան  
(պ.գ.դ., ՇԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ)*

Ուզում եմ մի քանի միտք արձարծել.

Այս տարիների ընթացքում հնարավորություն ունեցած Հայաստանի անցուղարձը դրսից դիտելու կամ էլ դրսի մամուլի արձագանքների միջոցով հետեւելու: Ես կարծում եմ, որ որեւէ պետության կայացումը,՝ ամրապնդումը,՝ հետեւարար, նրա ներքին եւ արտաքին քաղաքականության կուրսը, մշակվում է նաև քարոզությամբ: Դժբախտարար, Հայաստանի այսօրվա իշխանությունների քարոզությունը երկրի սահմաններից դուրս, արտաքին քաղաքականության քարոզությունը, չափազանց փոքր է եւ գրեթե չի ընդդիմանում Թուրքիայի եւ Աղրբեջանի կողմից դրսում տարվող քարոզությանը: Թուրքիայի եւ Աղրբեջանի բազմաթիվ հորինված վավերագրերը, որոնք տարածվում են ՄԱԿ-ում եւ նրա շրջանակներով ավելի հեռու, որեւէ հայկական պաշտոնական ժեն ստանում: Կարծում եմ, որ մեղքը, մասամբ, պատմաբաններին է:

Սա առաջինը:

Երկրորդ, մենք մոռանում ենք այն հանգամանքը, որ Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից ղարաբաղարնակ աղրբեջանցիները նոյնպես բարձրացնում են անջատվելու

գաղափարը: Սա սոցիալական, տնտեսական շարժում էր ըստ եռթյան: Ռուսաստանը եւ Աղրբեջանը (Թուրքիայի պաշտպանությամբ) կարողացան այս շարժումը ազգայինի վերածել:

Հաջորդը: Միջազգային կարծիք ստեղծելու պակասը Հայաստանը դրսեւորում է նաև մարդու իրավունքների պաշտպանության միջազգային զանազան ատյաններում: Ես ներկա եմ եղել Ֆրանկֆուրտի մի այդպիսի ատյանում, որտեղ աշխարհի տարբեր երկրների ներկայացուցիչներ են մասնակցում: Աղրբեջանը այստեղ պաշտոնական պատվիրակություն ուներ եւ հսկայական ցուցահանդես էր կազմակերպել, նվիրված այն բանին, թե հայերը ինչպես են կազմակերպել Խոչալուի ջարդը, իսկ Ռուսաստանը ինչպես է ջարդել Բաքուն: Հայաստանից ոչ ոք չկար, Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեից՝ ոչ մի պաշտոնյա: Վերջերս հայտնի դարձավ այն փաստը, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի աշխատանքների ժամանակ Հայաստանի կողմից ոչ մի նյութ չի ներկայացվել եւ Հայաստանը չի մասնակցել: Նոյնպիսի քննարկում եղավ Աթենքում, որտեղ հայերը շահերը պաշտպանում եր պարսիկ մի գիտնական:

Կա մի ուժ, որի հետ ընդհարվելու է Թուրքիան, որը նրան ներսից բզեցում է. դա քրդական շարժման գործոնն է: Ամենահամեստ հաշվարկներով քրդերը ունեն 12 մլն. բնակչություն, որը գերազանցապես բնակվում է Արեւմտյան Հայաստանի տարածքի վրա: Մենք չունենք մշակված քաղաքականություն այդ բնակչության հանդեա, ավելին մեր իշխանությունները այդ հարցը նվիրաբերեցին Թուրքիային, հայտարարելով, թե Հայաստանում քրդեր չկան: Սա լուրջ քաղաքական ակտ էր, որով Հայաստանը իրեն հեռու պահեց այդ հզոր միջազգային շարժումից: Այնինչ, Թուրքիան կարող էր խնդրել Հայաստանին, որ Հայաստանը մեղմացնի իր հակաթուրքական քարոզությունը, եւ ինչ-որ տեղ նաև միջնորդի դեր խաղա քրդերի եւ թուրքերի միջեւ:

**Այսան Գրիգորյան**  
(ՀԳԱ Արեւլագիտության  
ինստիտուտի ասպիրանտ)

Հայ-թուրքական հարաբերությունների պատմության մեջ շրջադարձային կետ էր Հայաստանի անկախացումը և նրա ի հայտ գալը տարածաշրջանում՝ որպես ինքնուրույն աշխարհագործական միավոր:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անկախ պետություն եւ միջազգային հարաբերությունների սուրյեկտ, գոյություն ունի ավելի քան մեկ տարի, եւ արդեն կարելի է որոշ դասողություններ անել այդ ժամանակահատվածում հայ-թուրքական հարաբերությունների զարգացման շուրջ:

Սույն ելույթի շրջանակներում քննության կառնվեն Թուրքիայի քաղաքանությունը Հայաստանի նկատմամբ վերջին մեկ տարվա ընթացքում, ինչպես նաև այդ երկրի քաղաքանության այլ հայեցակերպեր, որոնք ուղղակի կամ անողղակի առնչություն ունեն հայ-թուրքական հարաբերությունների հետ:

Ժամանակագրական առումով ելույթը սահմանափակվում է նշված մեկ տարով, սակայն անհրաժեշտ է նաև թուրքիկ անդրադարձ կատարել նախորդող ժամանակաշրջանում տեղի ունեցած որոշ երեսությունների վրա, որոնք այս կամ այն չափով հետագայում պայմանավորեցին այդ հարաբերությունները: Մի կողմից դա պատմականորեն ժառանգած ծանր բեռն էր՝ ցեղասպանության եւ հայ ժողովրդի պատմական հայրենիքի մեծ մասի կորսայան խնդիրը, մյուս կողմից՝ Ղարաբաղյան շարժումը, որը վերածվել էր հայ-ադրբեջանական հակամարտության: Դրական գործոն էր այն, որ Հայաստանում հայ-թուրքական հարաբերությունների հարցում ձեւավորվել եր նոր քաղաքական մտածողություն:

Դեռևս Խորհրդային Միության վիլուգումից առաջ Թուրքիան արդեն կայուն հետաքրքրություն էր ցուցաբերում Կովկասում

տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, սակայն միաժամանակ պաշտոնական քաղաքականությունը բավական զգուշակոր էր ու շրջահայաց: Մինչեւ 1991թ. օգոստոսյան հեղաշրջումը Թուրքիան խուափում էր միջամտել այնպիսի հարցերի, որոնք համարվում էին Խորհրդային Միության ներքին գործը: Որպես ասկածի ապացույց կարելի է վկայակուել Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը 1990 թ. Բաքվի հունվարյան իրադարձություններին, երբ հասարակական կարծիքն ու ընդդիմադիր ուժերը կառավարությունից ակտիվ գործողություններ էին պահանջում, իսկ նախագահ Օզալը բառացիորեն հետևյալը հայտարարեց. «Աղբեղանցիները շիաներ են, մենք սուննի: Նրանք ավելի շատ Իրանին պետք է հետաքրքրեն»:

Իրադրությունը կտրուկ կերպով փոխվեց 1991 թ. օգոստոսյան հեղաշրջման անհաջող փորձից հետո, երբ շատերի համար պարզ դարձավ, որ ԽՍՀՄ-ի վլուգումը ժամանակի հարց է: Սաեղծված իրադրությանը հատկապես ակտիվ կերպով արձագանքեց Թուրքիայի հասարակական-քաղաքական միաքը: 1991 թ. սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին թուրքական մամուլը հեղեղվեց հոդվածներով, որոնցում առաջարկություններ էին արվում Թուրքիայի քաղաքականության վերաբերյալ: Հատկապես գերիշխում էին երկու թեմաներ՝ թյուրքալեզու հանրապետությունները եւ Հայաստանը:

Այդ շրջանում Հայաստանի վերաբերյալ լույս տեսած հոդվածների ճշշող մեծամասնության համար ընդհանուր էր մեկ դրույթ՝ Թուրքիան շահագրգռված է Հայաստանի հետ նորմալ հարաբերություններ զարգացնելու մեջ: Թուրք մեկնաբաններն այդ դրույթը հիմնավորում էին մի շարք փաստարկներով.

ա) Հայաստանի հետ հնարավոր է կառուցել այնպիսի հարաբերություններ, որ նա չերգրավվի Թուրքիայի նկատմամբ թշնամարար արամադրված որեւէ երկրի ռազմավարության մեջ եւ չօգտագործվի Թուրքիայի դեմ,

բ) Հայաստանի հետ նորմալ հարաբերությունների գարգացումը կրացածի Թուրքիայի վրա արեմտյան տերությունների կողմից գործադրվող ճնշումը՝ կապված ցեղասպանության խնդրի հետ,

գ) Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների գարգացումը կարող է աշխուժացնել Թուրքիայի առավել վատ զարգացած արեւելյան նահանգների կյանքը, ինչը նույնիսկ կարող է թուլացնել լարվածությունը քրդական հարցում:

Միաժամանակ մեծ անհանգստություն էր արտահայտվում հայ-ադրբեջանական հակամարտության ծավալման կապակցությամբ, որի մեջ թուրքական կողմը միանշանակ կերպով մեղադրում էր Հայաստանին: Առաջ էր քաշվում այն տեսակետը, որ Թուրքիան պետք է նպաստի հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ Ադրբեջանի տարածքային ամրողականության պահպանման սկզբունքի շրջանակներում:

Ահա այսպիսին էր իրերի ընդհանուր դրությունն ու ստեղծված հասարակական-քաղաքական մթնոլորտը, երբ Թուրքիան 1991 թ. դեկտեմբեր ամսին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Դրանից անմիջապես հետո օրակարգ մասվ դիվանագիտական հարաբերությունների հաստատման խնդիրը: Հայաստանի իշխանություններն առանց որեւէ նախապայմանի դիվանագիտական հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն հայտնեցին, մինչդեռ թուրքական կողմը առաջ քաշեց երեք հիմնական նախապայման՝ Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու մասին պաշտոնական հայտարարություն, իրաժարում ցեղասպանության մասին պնդումներից, «ազրեսիայի» դադարեցում Ղարաբաղում:

Փաստորեն, սկզբից եւեթ թուրքական կողմն ընտրեց Հայաստանի վրա ճնշում գործադրելու քաղաքականությունը՝ փորձելով օգտագործել Հայաստանի տնտեսական ու քաղաքական դժվարությունները՝ նրանից զիջումներ կորցելու նպատակով:

Այսպիսին է հայ-թուրքական հարաբերությունների սկզբնա-

վորման համարում նախապատմությունը:

Հայաստանի վրա ճնշում գործադրելու Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը շարունակվեց 1991թ. դեկտեմբերից մինչեւ 1992թ. հունիս ամիսն ընկած ժամանակաշրջանում: Առևա էին այս քաղաքականությունը պայմանավորող մի շարք գործոններ, որոնց վրա կանգ կառնենք ստորեւ:

Առաջին եւ կարեւորագույն գործոնը Խորհրդային Միության վիլուգման հետևանքով տարբեր տարածաշրջաններում՝ այդ թվում Կովկասում առաջացած ուժի որոշակի վակուումն էր: Ռուսաստանի դիրքերի թուլացումը հնարավորություն էր տալիս Թուրքիային ավելի ու ավելի ընդգծելու իր ներկայությունը տարածաշրջանում: Սա կայսրության վիլուգմանը հաջորդած ժամանակաշրջանին բնորոշ օբյեկտիվ գործընթաց էր, որն ավելի էր բարդանում այն դժվարին քաղաքական ու տնտեսական խնդիրներով, որոնց բախվեց Ռուսաստանը ձմռան ընթացքում: Մի կողմից՝ Ռուսաստանում նկատելիորեն ուժեղացան իզոլիացիոնիստական տրամադրությունները, մյուս կողմից՝ Ռուսաստանում դեռեւ չը ձեավորվել նոր իրավիճակին համապատասխան արտաքին քաղաքական ու ռազմական դոկտրինան: Այլ կերպ ասած, սա Ռուսաստանի շահերի վերագիտակցման ժամանակաշրջանն էր:

Երկրորդ կարեւոր գործոնը, որը սերտորեն կապված է առաջինի հետ, Թուրքիայի արտաքին քաղաքական դոկտրինի մեջ տեղի ունեցող փոփոխությունները էին: Տասնամյակներ շարունակ զրկված լինելով Կովկասում եւ Միջին Ասիայի թուրքական հանրապետություններում ուղղակի քաղաքականություն իրականացնելու հնարավորությունից, Թուրքիան փորձում էր եւ այժմ էլ փորձում է ակտիվ քաղաքականություն վարել եւ հատուկ դեր ստանձնել այդ տարածաշրջաններում:

Հայ-թուրքական հարաբերությունների վրա ուղղակիորեն ներգործող հաջորդ գործոնը հայ-ադրբեջանական հակամարտության ծավալումն էր, որը Թուրքիայում դիտարկվում է

որպես անմիջական սպառնալիք իր անվտանգությանն ու կայունությանը, ինչպես նաև խանգարում էր Կովկասում քաղաքական ավելի մեծ ակտիվություն ձեռք բերելու նպատակի իրագործմանը: «Արարաբերությունները ժամանակ առ ժամանակ լարվածության հատկապես մեծ աստիճանի էին հասնում Դարաբաղում հայկական ինքնապաշտպանական ջոկատների հաջողություններին զուգընթաց: Մասնավորապես, իրադրությունը լարվածության մեծ աստիճանի հասավ փետրվար-մարտ ամիսներին՝ Խոչալուի եւ մի քանի այլ աղբբեջանարնեկ բնակավայրերի գրավումից, ինչպես նաև այն քանից հետո, երբ Շուշին գրավելու լուրջ հնարավորություն ստեղծվեց: Այդ ժամանակ էր, որ Թուրքիայում սկսեցին ռազմական միջամբության կոչեր հնչել: Որպես նման քաղաքականության կողմանակից հանդես եկավ նաև երկրի նախագահ Թուրքութ Օզալը, որը հայտարարեց, որ «հայերին պետք է վախեցնել»: Այստեղ պետք է անպայման նշել այն հանգամանքը, որ 1991 թ. ընտրություններում Օզալի հիմնած Մայր հայրենիքի կուսակցության պարտությունից հետո պետական քաղաքականությունը հիմնականում կենտրոնացավ ընտրություններում հայթած ձըշմարիտ ուղղու կուսակցության ու այդ կուսակցության դեկավար, վարչապետ Սուլեյման Նեմիրելի ձեռքում, իսկ Օզալը սկսեց ավելի շատ արտահայտել ընդդիմության տեսակետները:

Վարչապետ Նեմիրելը քննադատեց Օզալի դիրքորոշումը եւ բացառեց որեւէ ռազմական միջամտության հնարավորությունը: «Ետաքրքիր է թուրքական մամուլում այդ ժամանակ լուս տեսած հոդվածների վերլուծությունը: Փաստորեն Թուրքիայում ձեւավորվել էր երկու հստակ մոտեցում.

ա) Թուրքիան պետք է ձգտի կայունություն եւ խաղաղություն հաստատել Կովկասում առանց ակտիվ միջամտության, խուսափի բացահայտ աղբբեջանամետ դիրքորոշումից՝ միաժամանակ ձգտելով հասնել Աղբբեջանին ձեռնուու լուծումների՝ օգտագործելով Թուրքիայի դիվանագիտական հնարավորությունները:

յունները:

թ) Թուրքիան պետք է ակտիվորեն աջակցի Աղբբեջանին, անհրաժեշտության դեպքում ռազմական օգնություն հատկացնելով նրան, եւ ձնշում գործադրի Հայաստանի վրա: Այս տեսակետը պատկանում էր ավելի ազգայնական ուղղվածություն ունեցող ընդդիմադիր ուժերին:

Ապրիլ ամսին նկատված լարվածության որոշ թուլացումից հետո իրադրությունը նորից խիստ սրբեց մայիս ամսին՝ Շուշիի գրավումից եւ Նախիջենանի հետ տեղի ունեցած բախումներից հետո: Այս անգամ լարվածությունն իր ծայրակետին հասավ: Նախագահ Օզալը հանդես եկավ բացահայտ ռազմական միջամտության օգտին: Նրան ձայնակցում էր ազգայնական ուղղվածություն ունեցող ընդդիմությունը: Նրանք ռազմական միջամտության անհրաժեշտությունը փորձում էին հիմնավորել Կարսի պայմանագրի այն կետով, որ Նախիջենանի կարգավիճակի փոփոխման հարցում Թուրքիան ձայնի իրավունք ունի: Այս լարվածությունը լիցքաթափվեց Ռուսաստանի ավելի քան պարզորդ արտահայտած դիրքորոշմամբ: Անկախ Պետությունների Ընկերակցության գինված ուժերի հրամանատար Շապոշնիկովի հայտարարությունը Թուրքիայի միջամտության դեպքում երրորդ համաշխարհային պատերազմի վտանգ ծագելու մասին եւ Ռուսաստանի պետքարտուղար Բուրբուլիսի երեւան կատարած այցելությունն ու արած հայտարարությունները սթափեցնող ներգործություն ունեցան Թուրքիայի քաղաքականության համար: Փաստորեն թոթափելով ԽՍՀՄ-ի փլուզմանը հաջորդած ժամանակաշրջանի առաջին դժվարություններն ու անորոշությունն արտաքին քաղաքականության մեջ, Ռուսաստանն ընդգծեց իր կայուն շահերը տարածաշրջանում:

Ամփոփելով նշված ամիսների ընթացքում Թուրքիայի քաղաքականության մասին ասվածը, կարելի է եզրակացնել, որ այդ քաղաքականությունը նրան որեւէ հաջողություն չի երեց, չարդարացած Հայաստանից ճնշման միջոցով գիշումներ կոր-

գելու Թուրքիայի ակնկալիքները:

Թուրքիայի համար բավականացափ ուսանելի էր նաև Իրանի օրինակը, որն ունենալով եր՝ Հայաստանի, եր՝ Ադրբեջանի համաձայնությունը, կարողացավ ավելի հեշտությամբ մուտք գործել Կովկաս եւ հարաբերականորեն ակտիվ քաղաքականություն վարել այնտեղ:

Այս իրավիճակը ստիպեց Թուրքիայի կառավարող վերնախավին որոշ խմբագրումներ կատարել Հայաստանի նկատմամբ քաղաքականության մեջ, ինչը նույնպես ուղղակի ապացուցն է այն բանի, որ այդ քաղաքականությունն արդյունավետ չէր: Արդեն հունիս ամսին նկատելի էր, որ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության մեջ տեղաշաժեր են կատարվում: Ակզբանական շրջանում դա արտահայտվեց այն բանով, որ համարյա դադարեցվեց հակահայկական քաղոզդությունը: Կարետոր նշանակություն ունեցավ նաև Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հունիսի 23-ից 26-ը Թուրքիա կատարած այցելությունը: Կրկին մամուլը սկսեց հոդվածներ իրապարակել Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հնարավորությունների մասին: Այս անգամ արդեն ցեղասպանության վերաբերյալ պնդումներից իրաժարվելու ու Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչման մասին Հայաստանի իշխանությունների պաշտոնական հայտարարության անհրաժեշտությունը չէին դրվում որպես դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախապայմաններ: Խոսք էր գնում միայն Ղարաբաղից հայկական զինված կազմավորումները հանելու մասին, ընդ որում, շեշտադրումների մեջ առկա էին որոշ փոփոխություններ՝ մեղմացել էր նախկին ուլումատիվ տոնը: Նորից սկսեց քննարկել Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացնելու անհրաժեշտության հարցը: Մասնավորապես մեծ կարետրություն էր տրվում Հայաստանով կոմունիկացիաներ անցկացնելու խնդրին:

Միաժամանակ Թուրքիայում սկսեցին ավելի սթափ գնահատել տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը եւ Թուրքիայի հնարավորությունները: Հատկապես ուշագրավ է այն հանգանանքը, որ Ադրբեջանի հետ հարաբերություններում Թուրքիան խուսափում էր այնպիսի քայլերից, որոնք կարող էին իր քաղաքականությունը կախման մեջ դնել Ադրբեջանի գործողություններից: Դա պարզորոշ կերպով արտահայտվեց հուլիս ամսին Թուրքիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Օզդեմ Սանթերքի Բաքու կատարած պաշտոնական այցելության ժամանակ, որի նպատակն էր նախապատրաստել հետագայում կայանալիք Էլշիբեյի այցը Թուրքիա: Ադրբեջանական կողմն առաջարկել էր փոխադարձ անվտանգության պայմանագիր նախապատրաստել, ինչը կարականապես մերժվել էր թուրք պաշտոնյայի կողմից: Ադրբեջանին հասկացվել էր, որ Թուրքիան ոեգինալ անվտանգության համակարգը չի ուզում կառուցել երրորդ կողմի դեմ ուղղված երկկողմանի դաշինքների ձեւով:

Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխության գործնական դրսեւրում էր օգոստոս ամսին Թուրքիայի փոխարտգործնախարարի աեղակալ Բիլագին Ունանի գլխավորած պատվիրակության Երևան կատարած այցը: Այդ այցի հիմնական իմաստն այն էր, որ դրանով Թուրքիան ուզում էր սկիզբ դնել երկկողմանի կանոնավոր շփումներին:

«Ենվելով վերը նշված փաստերի ու մեկնաբանությունների վրա, կարելի է ենթադրել, որ թուրք-հայկական հարաբերություններում այսպիսի մթնոլորտի պահպանումը հեռանկարներ կարող է ստեղծել երկու երկրների միջևն նորմալ փոխահավետ հարաբերությունների զարգացման համար:»

Անուշ Հովհաննիսյան  
(«ԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ»)

Խորհրդային Միության փլուզումը եւ անկախ հանրապետությունների ձեւավորումը ստեղծեցին բոլորովին նոր իրավիճակ մեր տարածաշրջանում: Պարզ է, որ նման պայմաններում Թուրքիան պետք է վերանայեր իր արտաքին քաղաքականության տակածիկան (չիոխելով, սակայն, սարատեգիական պլանները), իսկ Հայաստանը պետք է սկսեր ձեւավորել ինքնուրույն արտաքին քաղաքականության կոնցեպցիա: Հայաստանի հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարել է, որ Հայաստանը ցանկանում է բարիդրացիական հարաբերություններ հաստատել բոլոր հարեւան երկների՝ այդ թվում նաև Թուրքիայի հետ: Թուրքիայում շատ լավ են գիտակցում, որ Հայաստանի համար չափազանց կարետը է նորմալ հարաբերությունների հաստատումը իրենց հետ, «չէ» որ նա ուրիշ ձար չունի» («Հյուրիյեթ», 5 հոկտեմբերի 1990թ.):

Պարզ է, որ հայ-թուրքական դիվանագիտական երկխոսության մեջ Թուրքիան պետք է թելադրեր իր պայմանները: Դրանք հայտնի են՝ հրաժարվել ցեղասպանության պահանջատիրությունից, ընդունել Թուրքիայի ժամանակակից սահմանները եւ դադարեցնել պայքարն Արցախի համար: Պայմաններից երկրորդը կնշանակեր 1921թ. Մոսկվայի Երաժշտական պայմանագրերի հետ համաձայնություն, իսկ հայ-թուրքական հակասությունների ողջ կծիկը բացելը չափազանց դժվար է, մանավանդ որ Վերջերս ստորագրված ոռա-թուրքական խաղաղության եւ բարեկամության մասին պայմանագրով հաստատվում են նախկինում ձեռք բերված պայմանագրով վերաբերությունները: Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցին, ապա Թուրքիան երեք էլ չի թաքցրել, որ Ադրբեյջանը իր համար «Երկիր-բանալի» է, ինչպես իրենք են նշում՝ «կամուրջ», որը Թուրքիայի համար ձանապարհ կրացի դեպի

Միջին Ասիայի թյուրքալեզու հանրապետությունները:

Թուրքական էջապանսիայի տարածման այդ անընդմեջ գոտում Արցախը մի միջաբերդ է, արգելօ, որը ամեն գնով նրանք կփորձեն ոչնչացնել: Սակայն Թուրքիայի անմիջական ռազմական միջամտությունը դարաբաղյան կոնֆլիկտում թվում է խիստ պրոբլեմատիկ, մանավանդ գեներալ Շապոշնիկովի պերծախոս հայտարարությունից հետո, թե այսուղ առկա են նաև Ռուսաստանի շահերը, որոնք նա պատրաստ է պաշտպանել: Իրանը նույնպես շահագրգռված է թույլ չառալ թուրքական ազդեցության տարածումը այս տարածաշրջանում:

Եվ այսպես, տարածաշրջանում գործում են երեք ուժեր՝ Թուրքիա, Իրան, Ռուսաստան: Բայց նրանց ետևում աննկատելիորեն ներկա է մի ուրիշ գերուժ՝ ԱՄՆ-ը, որը ցանկանում է Թուրքիայի միջոցով վերահսկել Անդրկովկասը եւ դիմակայել Իրանի իսլամական ֆունդամենտալիզմի տարածմանը: Հենց դրա համար էլ պրեզիդենտ Բուչը հավանություն է և վել այսպես կոչված «Դեմիրելի ծրագրին», որը նպատակ ունի տարածել զարգացման թուրքական մողելը թյուրքալեզու հանրապետություններում: Այս ծրագրի իրականացման մեջ ԱՄՆ-ը չէր ցանկանա առծակատել նաև Ռուսաստանի հետ, եթե, իհարկե, վերջինս ընթանա ուժորմների ճանապարհով, այն սեփորմների, որոնք նախագծված են Արեւմուտքում:

Ահա այսպիսի բարդ ու հակասական իրավիճակի մեջ է գտնվում Հայաստանը: Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին, թուրքական «Հյուրիյեթ» թերթը 1992 թ. օգոստոսի 18-ի համարում գրում է, որ Թուրքիան, իհարկե, կցանկանար նորմալ հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, «սակայն մեզ պետք չէ ուժեղ Հայաստան», գրում է նա: Նոյնը, երեսի թե, կարող էին կրկնել բոլոր նշանակած շահագրգռված կողմերը: Բայց քանի որ նրանք մի քանիսն են, Հայաստանը ստանում է քաղաքական հաշվեկշռի հետապորություն՝ դիմակայելու այս չափազանց ծանր իրավիճակում:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ  
23.9.1992

Համեստ Եզանյան  
(պ.գ.դ., պրոֆեսոր, ՀԳԱ  
Արենելագիտության ինստիտուտ)

Ինձ միշտ զարմացրել է մեր ժողովրդի մեջ տարածված մի կարծիք, որ Իրանի հետ հարաբերություններ հաստատելը շատ հեշտ է, Իրանը կա ու կա: Մենք միշտ ասում ենք, որ այս կամ այն երկրի հետ մեզ համար բարեկամանալը ձեռնուու է, մոռանալով, թե այդ երկրի համար մեզ հետ բարեկամանալը ձեռնուու՞ է, թե՞ ոչ: Թե ինչու ենք մենք բարեկամական կապեր հաստատելու գործում առաջին տեղը համար կամ Իրանին, դա հասկանալի է: Դրա մասին չեմ ուզում խոսել: Ինչո՞վ բացատրել, որ Իրանն է ուզում Հայաստանի հետ բարեկամանալ: Մահմեդական Ֆունդամենտալիզմի հայրենիքը հանկարծ մտածում է Հայաստանի հետ կապեր հաստատի: Ինչո՞ւ? Դա առաջին հարցը: Երկրորդ, ի՞նչ կարող է Իրանը ստանալ մեզանից: Մենք կարիք ունենք մազութի, գազի, նավթի, սննդամթերքի: Իրանը կարող է այդ ամենը մեզ տալ: Ի՞նչ կարող ենք մենք տալ Իրանին: Ի՞նչ ենք արտադրում, որ ի՞նչ տանք: Իրանը այն երկիրն է, որ միայն նավթից տարեկան ունի ավելի քան 20 մլրդ. դոլարի եկամուս:

Մեր դեկավարությունը անտեսում է, ըստ իս, մի կարետրագույն հարց: Դա այն միջազգային վիճակն է, որի մեջ գտնվում է Իրանը: Կա մի տարրական ճշմարտություն. Իմ թշնամու հետ բարեկամացող մարդը կարող է իմ թշնամին էլ դառնալ: Նույնը վերաբերում է նաև երկրներին:

Հիմա ես ուզում եմ խոսել Իրանի միջազգային վիճակի մասին, կապված Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու հարցի հետ: Վերջին երկու ամիսների, հատկապես

Վերջին շաբաթների ընթացքում, այդ բնագավառում տեղի են ունեցել շատ լուրջ փոփոխություններ: Իրանը այդ ժամանակահատվածում իր համար 7 ուղղությամբ կոնֆլիկտներ ստեղծեց, որոնք մենք հաշվի շառնել չենք կարող:

Առաջինը, Իրանի եւ Թուրքիայի հարաբերություններն են: Այս հարաբերությունները միշտ ել եղել են ոչ բարեկամական: Այսօր բարեկամական չեն նաև այն պատճառով, որ նախկին Խորհրդային Միության հարավում առաջացած վակուումը լրացնելու համար կատաղի պայքար է սկսվել Թուրքիայի եւ Իրանի միջնեւ: Ամեն մեկը ձգտում է հաստատել այստեղ իր դիրքերը: Հայտնի է, որ Թուրքիան պանթուրքիզմի, կամ ավելի շուա, թյուրքալեզու ժողովուրդներին միավորելու գործունեւ է օգտագործում, իսկ Իրանը պանխականիզմի, այսինքն՝ այդ ժողովուրդների իսլամական հավատքի դերը օգտագործելով, ուզում է իր ազդեցությունը տարածել եւ՝ Անդրկովկաստան, եւ՝ միջինասիական երկրներում: Ըստ երեսույթին, Թուրքիան ավելի շատ հաջողություն ունեցավ այս մի տարվա մեջ Միջին Ասիայում, քան Իրանը: Եվ դա ունի իր պատճառները:

Վերջերս թուրք-իրանական հարաբերությունները խիստ սրվեցին: Թուրքիայում գոյություն ունի մի հսկայական քրդական շարժում թուրքական իշխանությունների դեմ, եւ այնտեղ իսկական քաղացիական պատերազմ է գնում: Թուրքիան հայտարարեց, որ 500 հոգիանոց մի քրդական զորամաս, հարձակվելով թուրքական զորքերի վրա, փախել-մտել է իրանական տարածք: Մի քանի օր անց, արդեն Իրանի կողմից 1000 հոգիանոց քրդական զոկատը վերադարձել էր Թուրքիա: Թուրքիան մեղադրեց Իրանին այն բանում, որ վերջինս հովանավորում է քրդական շարժումը: Սակայն, ինչքան էլ Թուրքիայի եւ Իրանի միջեւ հակասություններ լինեն, որոշ հարցերում նրանք հեշտությամբ կարողանում են լեզու գտնել:

Երկրորդ, վերջերս Լիրանանում տեղի ունեցան պաղամենտական ընտրություններ, որոնք քրիստոնյա բնակչության

կողմից բոյկոտի ենթարկվեցին, սակայն հաղթեցին այն դեպուտատները, որոնք հովանավորվում էին Իրանի կողմից: Սա անհանգստության մեծ ալիք բարձրացրեց արարական երկրներում եւ ԱՄՆ-ում: Մտավախություն կա, որ քաղաքական իրավիճակը կարող է շուտով փոխվել նաև Լիբանանում՝ հօգուտ Իրանի:

Արեւելյան երկրների հետ կապված երրորդ հարցը այն է, որ Պարսից ծոցի ծայրամասում, Հորմուզյան նեղուցի մոտ, կա մի կղզի՝ Արու-Մուսա, որը մինչեւ հիմա կառավարվում էր համատեղ ձեռվ՝ Իրանի եւ Արարական Էմիրությունների կողմից: Դուրս մղելով Էմիրությունները, Իրանն այժմ ինքն է տիրապետում այդ կղզուն: Սա շատ մեծ դժգոհություն առաջացրեց արարական երկրներում: Այստեղից՝ հետեւություն մեզ համար: Երբ Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հոյստեր է կապում արարական երկրների հետ, նա պիտի հաշվի առնի այն հանգամանքը, թե չի՞ վճարի, արդյոք, այդ քայլը հայ-իրանական հարաբերություններին:

Չորրորդը Աֆղանստանի հարցն է: Այն շարժումը, որը դեկավարում է Գուլբեղդինը, պաշտպանվում է Իրանի կողմից: Քարուի կօթվները, փաստորեն, Աֆղանստանում ապրող ուգրեկական եւ տաշիկական զորամասերի միջեւ են ընթանում: Բնականաբար, Իրանը պաշտպանում է տաշիկներին:

Վերջապես, Տաշիկստանի դեպքերը: Այստեղ նույնպես Իրանի կողմից լուրջ, խորը գնացող միջամտություն է զգացվում: Եվ սա անհանգստացնում է Ռուսաստանին: Այս հարցը մենք նոյնպես չենք կարող անտեսել, որովհետեւ մենք ձգտում ենք Ռուսաստանի հետ ունենալ սերտ բարեկամական կապեր:

Հաջորդը: 1992-ի սնապտեմբերի 18-ին ԱՄՆ-ը նույն հանձնեց Թուրքմենստանին, պահանջելով, որ նա անմիջապես դադարեցնի Իրանի հետ կնքած պայմանագրի իրականացումը, այլապես Ամերիկան կդադարեցնի ամեն տեսակի օգնությունը Թուրքմենստանին: Ինչ պայմանագրի մասին է խոսքը: Մի

քանի շաբաթ առաջ Աշխարադում Իրանը պայմանագրի ստորագրեց, որով Թուրքմենստանը գաղամուղ է կառուցելու հյուսախային Իրանի վրայով դեպի Թուրքիա՝ Թուրքմենստանի գաղը Եվրոպային վաճառելու համար: Եթե այս ծրագիրը իրականանա, Թուրքմենստանը կդառնա Միջին Ասիայի ամենահարուստ հանրապետությունը: ԱՄՆ-ը պահանջում է, որ Թուրքմենստանը կառուցի այդ գաղամուղը դեպի Ազրբեջան, իսկ այստեղից՝ Հյուսախային Կովկասով, Վրաստանով, Փոքի նավահանգստից դեպի Ֆրանսիա եւ այլ երկրներ: Հարաբերությունների բարդացման դեպքում մենք կարող ենք շատ տուժել, քանի որ Հայաստանի գաղը գալիս է Թուրքմենստանից:

Մի հարց եւս: Դա Հարավսլավիայի հարցն է: Սերբիային ներկայացնում են ազրեսիա կատարելու մեղադրանք: Իրանը ժամանակ առ ժամանակ զենք է մատակարարում Բունիային: Հետաքրքիր է այն փաստը, որ այդ զենքը մի կողմից Իրանն է տալիս, մյուս կողմից՝ Թուրքիան: Այս երկու պետությունները միասնաբար զենք են տալիս մահմեդական Բոսնիային:

Ինչպես տեսնում ենք, Իրանի առակամատումը միջազգային առումով ընդգրկում է ոչ միայն արարական երկրները, որոնց հետ Հայաստանը ձգտում է բարեկամական կապեր հաստատել, ոչ միայն Ռուսաստանը, որի հետ մենք մեր բարեկամությունը կորցնելու իրավունք չունենք, այլեւ ԱՄՆ-ը, որի հետ մենք նոյնպես ձգտում ենք բարեկամանալ: Եվ այս առումով պետք է մշակվի այնպիսի հարաբերությունների տակտիկա Իրանի հետ, որը չվճարի մեր մյուս շահերին:

### Հարց.

- Իրանի հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ ի՞նչ քաղաքական ասպեկտներ ունի:

### Պատասխան.

- 1. Իրանը ձգտում է թույլ չտալ Թուրքիայի ազդեցության ուժեղացմանը այս տարածաշրջանում: Միակ ռեալ ուժը, որը

կարող է ազդել Թուրքիայի վրա եւ ունի պատմական արմատներ, Հայաստանն է: Եթե Իրանը Հայաստանին քաջալիքի, գորացնի, դա կթուղացնի Թուրքիային.

2. Եթե Իրանը անհանգստացած է Իրանական Աղբեջանով, ապա նա չպետք է թույլ տա, որ նախկին Խորհրդային Աղբեջանը գորանա: Եթե Ղարաբաղը անկախանա, դա կթուղացնի Աղբեջանին: Եվ այս հարցում միակ ռեալ հենարանը Հայաստանն է:

**Գաղիկ Շալջյան**  
(«ԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ»)

Ներկա ժամանակաշրջանում, ներքին եւ արտաքին բազմաթիվ խնդիրների լուծման համար Հայաստանը անհրաժեշտաբար պետք է մշակի եւ իրականացնի հետեւղական եւ սթափ արտաքին քաղաքականություն:

Նկատի ունենալով Իրանում իրականացվող խոշորածավալ փոփոխությունները, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ոլորտներում, ինչպես նաև այդ երկրի առանցքային նշանակությունը Հայաստանի համար, կարելի է ենթադրել, որ այժմ բարենպաստ պայմաններ են ստեղծվել այդ երկուակի միջև արդյունավետ համագործակցության համար:

Ներկա պայմաններում, եթե Հայաստանի տնտեսությունը գտնվում է ծանր ճգնաժամի մեջ, մեր հանրապետության համար կարետրագույն ուղղություն կարող է դառնալ երրորդ աշխարհի երկրների հետ առեւտրատնեսական կապերի հաստատումը: Այս տեսակետից Իրանը կարող է Հայաստանի համար բացառիկ միջնորդ դառնալ:

Եղափոխությունից հետո, Արեւմուտքի զարգացած երկրների հանդեպ իր առակաման քաղաքականության հետեւանցով հայտնվելով քաղաքական եւ տնտեսական խիստ մեկուացման

մեջ, Իրանը ստիպված էր իր տնտեսության ճգնաժամային երեսութերը ինչ-որ չափով մեղմելու եւ արտաքին քաղաքականության ոլորտում որոշակի ազդեցություն պահպանելու համար սերտ հարաբերությունները հաստատել երրորդ աշխարհի երկրների հետ: Այստեղ Իրանի հաջողությունները ակնհայտ են: Իրանի արտաքին առեւտքի հիմնական մասը կազմում է առեւտուրը հենց այդ երկրների հետ:

Այդ երկրները հիմնականում ազրարային երկրներ են՝ թույլ զարգացած արդյունաբերությամբ, որն ի վիճակի չէ ապահովելու դրանց տնտեսության պահանջները, եւ համեմատաբար աղքատ լինելով, ինարավորություն չլինեն բավարար չափով անհրաժեշտ ապրանքներ գնելու զարգացած Արեւմուտքից: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև անհրաժեշտ նախապայմանների առկայության դեպքում, նրանք շահագրգռված կլինեն Հայաստանի միջոցով լրացնելու իրենց արդյունաբերական դեֆիցիտը՝ փոխարենը Հայաստանին մատակարարելով այնչափ անհրաժեշտ գյուղատնեսական զանազան ապրանքները: Եվ այստեղ Իրանը կարող է կարեւոր միջնորդի դեր ստանձնել, տրամադրելով անհրաժեշտ տրանսպորտային միջոցներ՝ դրա դիմաց ստանալով համապատասխան եկանուու:

Հայաստանի կողմից համապատասխան նախաձեռնության դեպքում, Իրանը կարող է նաև Հայաստանին վարկ տրամադրել, որպեսզի նա ինարավորություն ունենա գնելու, ինչպես Իրանում արտադրված, այնպես էլ այլ երկրների ապրանքներ, միաժամանակ Հայաստանին ինարավորություն տալով վերավաճառելու դրանց ավելցուկները:

Հայաստանի եւ Իրանի համագործակցությունը նպաստավոր կարող է լինել նաև Հայաստանի՝ Զմիացած երկրների շարժման անդամ դառնալու գործում: Այդ շարժման շրջանակներում Իրանը վերջերս ակտիվ քայլեր է ձեռնարկում առաջատար դիրք գրավելու նպատակով: Հայաստանը այդ

կազմակերպության անդամ դառնալով եւ երրորդ աշխարհի մաս կազմելով, միաժամանակ մասնակցելով այդ շարժման նոր քաղաքականության մշակմանը, այդ կազմակերպության շրջանակներում երկվողմանի եւ բազմակողմանի կապեր հաստատելով, առավել արդյունավետ կդարձնի իր քայլերը, ուղղված 3-րդ աշխարհի հետ իր հարաբերությունների հաստատմանը, միաժամանակ ավելացնելով սեփական քաղաքական եւ տնտեսական կշիռը: Այստեղ կարետը է նաեւ այն հանգամանքը, որ շարժման անդամ-երկրների մեծամասնությունը մուռակմանական երկրներ են:

Եթե հաշվի առնենք, որ Իրանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը ԵՀ-ի երկրների հետ սերտ կապեր հաստատելն է, ապա հասկանալի է Իրանի ցանկությունը՝ սերտ համագործակցության հիմք ստեղծել համար նաեւ այդ ընկերակցությանը անդամակցելու հայտ ներկայացրած երկրների հետ, որոնցից են առաջին հերթին Ֆինլանդիան, Շվեդիան եւ Ավստրիան:

Մոտ ապագայում սպասվում է Իրանի եւ Ֆինլանդիայի միջև քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների աշխուժացում: Այդ երկու երկրների միջև ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, տնտեսական եւ առեւտրական փոխանակումների զգալի մաս է կազմելու իրանական նավթի առաքումը Ֆինլանդիա: Եվ նկատի ունենալով, որ Ռուսաստանը արդեն պայմանագիր է ստորագրել Իրանի հետ օդային եւ ցամաքային հաղորդակցության մասին, հավանական է, որ այդ փոխանակումների որոշ մասը իրականացվելու է Ռուսաստանի տարածքով: Եվ այստեղ Հայաստանը կարող է կապող հանգույց հանդիսանալ:

Գոյություն ունի նաեւ մեկ այլ չափազանց կարետը հանգամանք՝ Հայաստանի բազմակողմանի կապերի հաստատման խնդիրը իսլամական աշխարհի հետ: Այստեղ Իրանը իր վրա

կարող է վերցնել Հայաստանը իսլամական աշխարհին բարենպաստ ձեռվ ներկայացնելու նախաձեռնությունը:

Այս տեսակետից, հաշվի առնելով Իրանի համար Պարսից ծոցի երկրները, հետ հարաբերությունների ստրատեգիական կարեւորությունը, որոնց հետ կապը Հայաստանի համար ոչ հեռու ապագայում եւս կարող է կարեւոր ուղղություն դառնալ, ակնհայտ է այն հսկայական դերը որ կարող է խաղալ Իրանը Հայաստանի եւ Պարսից ծոցի երկրների միջև քաղաքական եւ տնտեսական կապերի հաստատման եւ ամրապնդման գործում:

Իսլամական աշխարհի հետ բարիդրացիական կապերի հաստատման գործում նպաստավոր դեր կարող է խաղալ Երեւանում իսլամական հետազոտությունների եւ ուսումնասիրությունների գիտական կենտրոնի հիմնումը, որը Հայաստանի համար հիմնականում կունենա պրոպագանդիստական նշանակություն, միաժամանակ ցույց տալով Հայաստանի լոյալությունը Խալամի նկատմամբ, մանավանդ իսլամական աշխարհում հերթական գաղափարական մեծ վերելքի պայմաններում: Կենտրոնի ստեղծման գործում Իրանը, անկասկած, մեծ աջակցություն կցուցաբերի Իրանական մասնագետների, կրոնական գ.լ.դիլների եւ իսլամական աստվածաբանների մասնակցությամբ: Դա կնպաստի ինչպես Իրանի հետ կապերի ամրապնդմանը, այնպես էլ Հայաստանի հեղինակության բարձրացմանը իսլամական աշխարհում:

Իսլամական աշխարհի հետ մերձենալու փորձեր նպատակահարմար կլինի իրագործել նաեւ Խալամական Կոնֆերանս կազմակերպության շրջանակներում, որտեղ Իրանը եւս կարող է օգտակար լինել Հայաստանի համար: Տարածաշրջանում ստեղծված իրավիճակում Հայաստանի համար կարեւոր է հատուկ ծրագրեր մշակել ուսումնասիրելու ծավալման միտում դրսեւորող քրդական գործոնը եւ Ծրա ազդեցությունը Հայաստանի եւ Իրանի փոխհարաբերությունների վրա, ինչպես նաեւ

այդ գործոնի հնարավոր օգտագործումը այլ արտաքին քաղաքական ուղղություններով, նկատի ունենալով Թուրքիայի հարավ-արևելյան մասերում աննախադեպ զինված բախումները քուրդ ապստամբների եւ թուրքական իշխանության զինված ուժերի միջեւ, որոնք ընդարձակման միառն են դրսետրում, եւ որոնցում ազդեցիկ դեր են խաղում, բացի Իրանից, նաև Ռուսաստանը, Սիրիան եւ Իրաքը:

Մեկ այլ կարեւոր հանգամանք է այն, որ Իրանը հետեւղականորեն հակաթուրքական բլոկ ստեղծելու քաղաքականություն է վարում եւ այդ ուղղությամբ հասել է շոշափելի հաջողությունների, մի կողմից՝ բարելավելով իր հարաբերությունները Պակիստանի հետ, մի հանգամանք, որն Իրանը նպատակ ունի օգտագործել որպես Թուրքիայի վրա ազդելու միջոց նախ ECO-ի (Տնտեսական համագործակցության կազմակերպություն) շրջանակներում եւ ապա չեղոքացնելու Թուրքիայի հավակնությունները միջինասիական հանրապետությունների նկատմամբ, մյուս կողմից՝ ակտիվորեն ընդարձակելով իր հարաբերությունները Հունաստանի եւ Բուլղարիայի հետ: Որպես լրացուցիչ գործոն հանդես են գալիս նաև ռուս-իրանական կապերը, ինչը ընականաբար, Հայաստանի համար նպաստավոր հանգամանք է հանդիսանում:

Այժմ ակնհայտ են Իրանի հետեւղական եւ նպատակային քայլերը միասնական խլամական շուկա եւ միասնական խլամական բանկային համակարգ ստեղծելու ուղղությամբ, որոնց համար գոյություն ունեն լուրջ նախադրյալներ թեկուզ ոչ ամբողջ խլամական աշխարհի մասշաբով, այլ սկզբում միայն մի քանի հանգուցային երկրների մասնակցությամբ, այսինքն, ստեղծել տարածաշրջանային խլամական կառույցներ, օրինակ՝ Իրան, Պակիստան, Աֆղանստան, այնուհետեւ՝ միջինասիական հանրապետություններ եւ Ղազախստան: Չի բացառվում նաև Ադրբեջանի անդամությունը: Այդ համակար-

գին կարող են հարել նաև Ռուսաստանը եւ Չինաստանը, որոնց հանդիսանում են խոշորագույն մուսուլմանական երկրներ: Նման ծրագրերի իրականացման դեպքում, նշված բոլոր երկրները եւ այդ համակարգը ձեռք կրերեն քաղաքական եւ տնտեսական մեծ ազդեցություն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային փոխհարաբերությունների ոլորտում, որին հարելու ցանկություն կարող են հայտնել նաև այլ երկրներ: Եվ քանի որ իր աշխարհագրական դիրքի պատճառով Հայաստանը ներգրավվելու է Արեւելքի քաղաքական եւ արևտեսական հարաբերությունների ոլորտում, ապա գերադասելի կլիներ, որպեսզի Հայաստանը պատրաստ լիներ դեպքերի այսպիսի հեռանկարային զարգացմանը, եւ իր կողմից մշակված սթափ ծրագրերի համաձայն իրականացներ իր ինտերացիան այդ համակարգում:

Հայաստանի մասնակցությունը այդ կառույցներին այս կամ այլ կերպ, թեկուզ սկզբնական շրջանում՝ կյորի, դիտորդի, եւ այնուհետեւ միայն անդամի կարգավիճակում, լրացուցիչ նպատակոր շփման հնարավորություններ կստեղծի Հայաստանի համար, հետզհետեւ շահեկան եւ կոնկրետ արդյունքներ տալով: Այդ կառույցների ընմինալ խլամական լինելը բնակ չի նշանակում, որ ոչ խլամական երկիրը չի կարող ընդգրկվել այդ կազմակերպությունների մեջ: Ընդհակառակը, կազմակերպողները շահագրգոված կլինեն այդ կառույցների մեջ ներառել նաև ոչ խլամական երկրներ, բարձրացնելու դրանց համակարգերի միջազգային հեղինակությունը եւ ցուցադրելու համար Խլամիդեմոկրատական, հանդուրժողական եւ անկողմնակալ եւթյունը:

Առավել ես դա կվերաբերի Հայաստանին, որն Իրանի համար ներկա պահին ունի կարեւոր քաղաքական նշանակություն:

Այս իմաստով Իրանի եւ Հայաստանի համագործակցության համար կարեւոր հանգույց կարող է հանդիսանալ նաև ECO (Տնտեսական համագործակցության կազմակերպություն) տընտեսական կառույցը:

Անհրաժեշտ է նշել, որ այդ կազմակերպությունը ստեղծվեց 1984թ. Իրանի, Թուրքիայի եւ Պակիստանի մասնակցությամբ, որն ըստ մասնակից կողմերի ծրագրերի, լինելով զուստնեսական կազմակերպություն, պիտի նպաստեր այդ երկրների միջեւ առեւտրատնտեսական համագործակցության արագ եւ արդյունավետ զարգացմանը: Սակայն այդ երեքի միջեւ կազմակերպության ծրագրերի եւ նախապատվությունների վերաբերյալ սուր քաղաքական հակասությունների հետեւանքով ECO-ն փաստորեն վերածվեց զուստ ձեւական կազմակերպության, որի գործունեությունը փաստորեն սառեցվեց:

Սակայն այժմ, երբ իրանա-պակիստանյան հարաբերություններում կատարվեց շրջադարձ դեպի նրանց լավացումը, ինչպես նաև միջինասիական հանրապետությունների անդամակցությունը այդ կազմակերպությանը, հավանական է, որ ECO-ն, մոտ ապագայում կդառնա բավականաչափ ազդեցիկ առեւտրատնտեսական եւ ֆինանսական կառուց, ձեռք բերելով նաև որոշակի քաղաքական ուժ: Եվ քանի որ իրանա-պակիստանյան սերտացումը, Իրանի նկատառումներով, պիտի ունենա որոշակի հակաթուրքական ուղղվածություն՝ միջինասիական հանրապետությունների եւ Պակիստանում վերջերս կրոնական գործոնի աշխուժացման հետ կապված, ինչին Պակիստանը անկասկած որոշ չփոկ պիտի համակերպվի, ապա դժվար չէ ենթադրել, որ ECO-ն եաւ Իրանի կողմից կօգտագործվի որպես լրացուցիչ միջոց Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար: Վերը նշվածը ունակ է դարձնում Հայաստանի հնարավոր անդամությունը այդ կազմակերպությանը, քանի որ Իրանը շահագրգուված է Թուրքիայի դեմ ցանկացած դաշնակից ձեռք բերելու: Եվ կասկածից վեր է, որ Իրանի հակաթուրքական ծրագրերում Հայաստանին բավականաչափ զգալի տեղ է հատկացվում՝ նրա բացառիկ պատմական, հոգեբանական եւ քաղաքական լիցքի պատճառով:

Տնտեսության եւ արդյունաբերության բնագավառներում

Իրանը եւ Հայաստանը կարող են համագործակցել համապատասխան մասնագետների փոխանակման եւ վերապատրաստման, օգտակար հանածոների հետազոտման եւ արտահանման, ծշգրիտ գիտությունների զարգացման, համակառնության այնպիսի կարեւոր մարզում, ինչպիսին է Ֆիզիկայի, էլեկտրոնիկայի, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման եւ այդ բնագավառի ձեռնարկությունների շինարարության եւ շահագործման, նավթաքիմիական արդյունաբերության, որտեղ Իրանը որակյալ մասնագետների խիստ պակաս է զգում, եներգետիկայի, շինառարության, կապի, գյուղատնտեսության (շաքարի ճակնդեղ, հացահատիկ եւ այլն), կոշիկի արտադրության, տեքստիլի եւ այլ ճյուղերում: Դեռ է նշել, որ որոշ բնագավառներում Իրանը ակտիվ քայլեր է ձեռնարկում Ռուսաստանի հետ համագործակցելու համար:

Հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, որի պատճառով Հայաստանը իր արտաքին քաղաքականության մեջ ստիպված է գերազանցապես ուղղված լինել արեւելքի կողմը, նպատակահարմար կլինի հայկական դիվանագիտական կադրերի մի մասը վերապատրաստել Իրանում, նկատի առնելով այդ երկրի բացառիկ դիվանագիտական միջազգային փորձը, մանավանդ, որ Իրանը նմանատիպ պայմանավորվածություններ ունի մի շարք պետությունների, այդ թվում նաև միջինասիական հանրապետությունների հետ:

Համագործակցության հաջորդ ոլորտը Հայաստանում եւ Իրանում հյուպատոսությունների բացումն է, համատեղ քաղաքական, տնտեսական, առեւտրական, մշակութային, կրթական եւ այլ հանձնաժողովների ստեղծումը;

- օդային կապի (քաղաքացիական ավիացիա) ներկայացուցչությունների հաստատում.

- համագործակցություն հեռուատաեսության եւ ռադիոյի բնագավառում:

Առանձնահատուկ կարեւորություն պետք է տալ իրանա-հայ-

կական համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը, թե՛ եղած հզորությունների հիման վրա, եւ թե՛ նոր արտադրություններ հիմնելով, որոնց արտադրանքի մի մասը կարող է լրացնել երկու երկրների պահանջարկը համապատասխան ոլորտներում, իսկ մնացած մասը կարելի կլինի վաճառել երրորդ աշխարհի երկրներին:

Հայաստանի տնտեսական վիճակի բարելավման համար դրական դեր կիսաղա նաեւ իրանա-հայկական համատեղ բանկային համակարգի ստեղծումը, ինչպես նաեւ Երեւանում Իրանի ազգային բանկի մասնաճյուղի բացումը: Դրա հետ մեկտեղ երկու երկրների մաքսաների համակարգի միջեւ պայմանագրերի եւ փոխադարձ համաձայնությունների միջոցով բարենպատ պայմանների ստեղծումը կնպաստի երկու կողմերի ապրանքների եւ մարդկանց փոխադարձ հոսքի ապահովմանը: Նաեւ անհրաժեշտ է ստեղծել նմանատիպ պայմաններ Երրորդ Երկրների արանգիտ ապրանքների համար, ինչը կունենա դրական հետեւանքներ Հայաստանի տնտեսության եւ քաղաքական դերի բարձրացման համար, Հայաստանը դարձելով բանուկ առեւտրական արանգիտ ճանապարհ, որի անխափան աշխատանքի մեջ կիայտնելու բավականաչափ շահագրգռված կողմեր, նպաստելով շրջափակման վերացմանը: Շրջափակման վերացմանը կնպաստի նաեւ այն, որ այս դեպքում Հայաստանի ճանապարհները պաշտպանված կլինեն միջազգային հաղորդակցության վերաբերյալ օրենքներով:

Նույն նպատակին կծառայեն նաեւ փոխադարձ առեւտրական եւ արդյունաբերական ցուցահանդես-վաճառքների եւ տոնավաճառների կազմակերպումը, որոնց մասնակից կարելի է դարձնել նաեւ հարեւան եւ շահագրգռվածություն դրսետրած այլ երկրներ:

Նպատակահարմար է նաեւ Իրանի եւ Հայաստանի միջեւ տուրիզմի զարգացումը: Այստեղ բարդություններ չեն լինի, քանի որ դա համապատասխանում է Իրանի արտաքին

քաղաքականությանը՝ երկրի դռները բաց ամել արտաքին աշխարհի առջեւ: Մանավանդ, որ վերջին մեկ տարվա ընթացքում Իրանի կառավարությունը որոշակի քայլերի և դիմել տուրիզմի բնագավառը զարգացնելու համար:

Վերջերս Իրանը առաջարկ է արել սաեղծելու Միջին Ասիայի եւ Կովկասի միասնական էներգետիկ համակարգ, որին նպատակահարմար կլինի նաեւ Հայաստանի մասնակցությունը: Դա կարող է ինչ-որ չափով թեթեացնել Հայաստանի ծունը էներգետիկ վիճակը:

Հայաստանը եւ Իրանը կարող են արդյունավետ համագործակցել նաեւ սեյսմորգիայի բնագավառում՝ երկու երկրների բարձր սեյսմիկական գոտում գտնելու եւ այդ ոլորտում հարուստ փորձ ունենալու պատճառով:

Նկատի ունենալով Իրանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրոված պայմանագիրը կապի եւ հաղորդակցության բնագավառում, որով նախատեսվում է ընդլայնել հաղորդակցությունը օդային, ջրային եւ ցամաքային ոլորտներում, դժվար չէ կանխատեսել, որ դրա իրագործման դեպքում, համակապես ավտոճանապարհային եւ երկաթուղային ճանապարհների աշխուժացման դեպքում, Հայաստանին զգալի տեղ կհատկացվի, քանի որ վերջինս Իրանը Ռուսաստանին կապող միակ ամենակարճ ճանապարհն է:

Հայաստանի դերը կարող է նշանակալից լինել նաեւ իրանական գագի եւ նավթի եվլուպական երկրներ եւ ԽՍՀՄ-ի նախկին հանրապետություններ հասցնելու գործում:

Հաշվի առնելով, որ Իրանի կրթություն բնագավառում տեղի են ունենում կարեւոր փոփոխություններ եւ Խամենեին ու Ռաֆսանջանին մի քանի ծրագրային ելույթներ են նվիրել կրթության համակարգի հետագա զարգացման եւ վերափոխման կարեւորությանը, նպատակահարմար կլինի զարգացնել համագործակցությունը նաեւ կրթության բնագավառում: Այստեղ հնարավոր կլինի կազմակերպել դասախոսների եւ ուսա-

նողների փոխանակում. վերջերս Իրանում հատուկ ծրագիր է հաստատվել լրացուցիչ գումարներ տրամադրել, որպեսզի իրանցի ուսանողները հնարավորություն ունենան արտասահմանյան բուհերում ձեռք բերել ավելի խոր մասնագիտական գիտելիքներ:

Եզրափակելով կարելի է ասել, որ չնայած այժմ Հայաստանը Իրանի համար առաջին հերթին հետաքրքրություն է ներկայացնում զուս քաղաքական տեսակետից, չի բացազում սակայն, որ հետազայում Հայաստանի կողմից անհրաժեշտ եւ ժամանակին արված քայլերը կարող են մեծ տնտեսական հետաքրքրություն առաջացնել: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ եթե Հայաստանի վերաբերմունքը Իրանի նկատմամբ լինի որպես «պահեստայինի», ապա դա կարող է բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի համար, որի հետեւնքով, հայտնվելով Ռուսաստանի եւ Իրանի միջև, որոնց հարաբերությունները օրեցօր ավելի սերտանալու միտում են դրսետրում, Հայաստանը կկանգնի քաղաքական եւ տնտեսական փակուղու առաջ:

*Բորիս Բաղյան  
(ա.գ.դ., պրոֆեսոր, ՀԳԱ  
Պատմության ինստիտուտ)*

Մի քանի գործնական առաջարկ եմ ուզում անել՝

1. ԳԱ-ի նախագահության կից ստեղծել ինֆորմացիոն կենտրոն:

2. Ակադեմիական հանդես լույս ընծայել, որտեղ պարբերաբար կբարձրացվեն բոլորին հուզող արդի քաղաքական հարցերը: Կարելի է անվանել «Հայաստանը եւ արդիականությունը»:

3. Ստեղծել խմբեր, որոնք կզբաղվեն Արեւելքի երկրներում Հայաստանի պատմաբանների, արեւելագետների գիտական հետազոտությունների տարածմամբ:

**Կարլեն Դալլաքյան**  
(ք.գ.դ., ՀԳԱ Սփյուտքահայ համայնքների պատմության եւ մշակույթի ուսումնասիրությունների բաժին)

Ներկայումս խիստ կարետրվում է այն հարցը, թե Հայաստանը ունի՞ արտաքին քաղաքականության կոնցեպցիա: Ես կարծում եմ, որ այստեղ առկա է կոնցեպցիայի բացակայություն: Դա երեսում է մի շարք փաստերից:

Թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության բնագավառում արիեստական ճանապարհով մեզ պարտադրվում է եվրոպականացումը: Սա շատ թանկ կնսած մեր ժողովրդի ճակատագրի վրա: Եթե այսպես շարունակվի, ապա շատ շոտով մենք կտեսնենք, որ մեր բարոյաքաղաքական մակարդակով մոտ 100–200 տարով հետ ենք ընկել:

Երկրորդ, մենք մոռանում ենք, որ ԱՄՆ-ը, Եվրոպան կանգնած են այսօր Թուրքիայի թիկունքին գրեթե բոլոր հարցերում: Մենք համառեն փնտրում ենք նրանց մեջ դաշնակիցներ, մոռանալով, որ կան ուժեր, որոնք թե՛ պատմական, թե՛ այսօրվա շահերի բերումով կանգնած են Թուրքիայի ոչ թիկունքին, այլ դեմ դիմաց: Այդ ուժերից կարետրագույնը երկուս են՝ Ռուսաստանը եւ Իրանը:

Երրորդ, (այս կետը նոյնպես երեան է գալիս այդ կոնցեպցիայի բացակայությունից), մենք մեզ բացառիկ ենք համարում, բայց բացարձակապես արհամարհում ենք սեփական կադրերի գոյությունը եւ օգտագործումը: Արտաքին քաղաքականության ծյուղերի դեկավարումը սխալ եմ համարում օտար երկրների քաղաքացիներին վստահելը:

Ինչ վերաբերում է հայ-իրանական հարաբերություններին, Իրանի համար շատ կարետր է Հայաստանի գոյությունը. այն ստրատեգիական նշանակություն ունի: Հայաստանը դիտվում

Ե Իրանի կողմից իբրեւ պատվար, հենակետ Թուրքիայի դեմ:

*Հմայակ Մարտիրոսյան*  
(պ.գ.թ., ՀԳԱ Սփյուռքահայ  
համայնքների պատմության  
եւ մշակույթի  
ուսումնասիրությունների բաժին)

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը միանգամից հայտնվեց քաղաքական կապերի կիզակետում: Հայաստանի միջով անցնում են 2 աշխարհաքաղաքական ուղղություններ: Առաջինը հյուսիս—հարավյային գիծն է՝ Ռուսաստան-Հայաստան-Իրան-Արարական երկրներ, հիմնականում Պարսից ծոցի շրջանում: Երկրորդը՝ արեւոտք-արեւելք, անցնում է ԱՄՆ-ով, ՆԱՏՕ-ի որոշ երկրներով, Թուրքիայով, Հայաստանով, Ադրբեյչանով, Միջին Ասիայով եւ հասնում է Չինաստան ու Պակիստան: Ես գտնում եմ, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը, որը ձեւավորվել էր դեռևս 1828-ից, ուներ շատ պարզ եւ հստակ ուղղվածություն՝ դեպի հյուսիս, այսպես կոչված, ոռաական քաղաքականություն: Սովորաբար, արտաքին քաղաքականության կորսը դարերով մնում է անփոփոխ: Ամեն մի երկիր ունի արտաքին քաղաքականության իր կոլուր: Ռուսաստանը ունի արտաքին քաղաքականության կոլուր՝ 3 ուղղություններով դեպի հարավյային ծովերը: Առաջինը՝ Հեռավոր Արեւելքով, Երկրորդը՝ Հայաստանով դեպի Պարսից ծոցը, Երրորդը՝ Միջերկրական ծով: Հեռավոր Արեւելքում Կուրիլյան կղզիների պրոբլեմն է, ճապոնիայի հետ հաշտության պայմանագրի կնքման պրոբլեմն է: Միջերկրական ուղղությամբ կատարյալ պայքար է գնում: Առկա են Մերձդնեպրովյան, Մոլդավական, Ղրիմի նավատորմի պրոբլեմները: Ռուսաստանը երբեք չի հրաժարվի այն

տարածքներից, որոնք ստրատեգիական նշանակություն ունեն իր համար, այդ թվում նաև՝ Հայաստանի միջով դեպի Մերձավոր Արեւելք գնացող ուղղություններ:

Արտաքին քաղաքականության կորսը արագ չի փոփոխվում, անգամ եթե փոխվում է երկրի սեժիմը, քաղաքական դեկապարը, պրեզիդենտը:

Մենք պետք ենք կառուցենք մեր ազգային քաղաքականությունը: Այսօր մեր արտաքին քաղաքականությունը ազգային չէ: Ես համամիտ եմ այն ելույթ ունեցողների հետ, որոնք գտնում են, որ մեր ներկայիս արտաքին քաղաքականությունը ներմուծվում է դրսից:

Առաջարկում եմ ստեղծել ստրատեգիական հետազոտությունների ինստիտուտ Հայաստանում: Ստեղծել կադրերի պատրաստման ինստիտուտներ, դեսպաններ եւ դիվանագետներ պատրաստել:

Եթե մենք ուզում ենք վարել ինքնուրույն քաղաքականություն, ապա պետք է ընդլայնենք մեր միջազգային կապերի շրջանը, դաշնակիցներ փնարենք: Վերջին քաղաքական իրադարձությունները հուշում են, որ մեր միջազգային կապերի շրջանը կարող է ընդլայնվել մինչև Չինաստան եւ Հնդկաստան: Նոր չէ, որ մեր մերձավոր հարեւանի՝ Իրանի հետ մենք բնական դաշնակիցներ ենք:

Շատ ձեռնարկ է մեզ համար նաև մի ուրիշ գծի վերականգնումը՝ Իրան-Հայաստան-Վրաստան:

Երբ խոսում ենք մեր անհաջող աշխարհաքաղաքական դիրքի մասին, մենք մոռանում ենք Թուրքիային: Դա այն երկիրն է, որը շրջապատված է հիմնականում ոչ բարեկամներով: Պատահական չէ, որ Թուրքիան ունի 2 մլն-ոց բնակչություն:

Մեզ անհրաժեշտ է շփման կետեր գտնել Իրաքի, Սիրիայի, Հունաստանի հետ:

*Շաբրու Միույան*  
(«ԳԱ թղթակից անդամ, «ԳԱ.  
Արեւելագիտության ինստիտուտ»)

Ճիշտ է այն մոտեցումը, եթե Հայաստան-Իրան փոխհարաբերությունների խնդիրը քննարկվում է քազմաթիվ այլ պետությունների հետ հարաբերությունների ամբողջության մեջ: Այն սկզբունքային նշանակություն ունի անկախացած Հայաստանի արտաքին քաղաքականության ամբողջական կոնցեպցիայի մշակման գործում: Դժբախտաբար այդ բանը միշտ չէ, որ կյանքում կիրառվում է: Դիշեցնեմ ձեզ այս կապակցությամբ մեր նոր կառավարության արտաքին քաղաքական որոշ քայլեր, որոնք լուրջ մտորումների առիթ են տալիս եւ վիճարկելի են: Հայաստանի կառավարության դեկավարը անցյալ տարի իր հայտարարություններից մեկում ասել է, թե Ռուսաստանը Կովկասից հեռանում է, որովհետեւ նա խրված է ներքին պրոբլեմների մեջ: Պատմական փորձը հիմք է տալիս ենթադրելու, որ այդ եզրակացությունը սխալ է: Եվ ցարական, եւ սոցիալիստական, եւ՝ «Ելցինյան» Ռուսաստանը ունի իր հետաքրքրությունների մշտական շրջանակները, որոնց մեջ Կովկասն ունի առաջնահերթ նշանակություն: Թուրքիայի հետ նոր քաղաքականություն վարելու, նրա հետ մերձենալու քաղաքականությունը եւ ճգբառումների եւ սրբագրությունների կարիք ունի: Հմտա եւ մեծ դիվանագետ պետք չէ լինել տեսնելու համար, որ Աղրբեջանի հետ առձակատման, գրեթե պատերազմի մեջ գտնվող Հայաստանը, չի կարող ակնկալիքներ ունենալ Թուրքիայի հետ մերձենալու խնդրում: Թուրքերը իրենք նախաձեռնություն հանդես բերեցին եւ պարզ հայտարարեցին, որ դա ապագա չունեցող քաղաքականություն է:

Մեկ այլ հարց՝ կապված քննարկվող խնդրի հետ: Խոսքը քրդական գործոնի մասին է: Եվ Թուրքիայում, եւ՝ Իրանում կա քրդական շարժում: Թուրքիայում այն զանգվածային եւ լայն

բնույթ ունի: Սակայն այն պատշաճ չափով չի գնահատվում մեր մամուլում, քաղաքական շրջաններում: Շարժումը, դատելով ըստ նրա միտումների, զարգացում է ունենալու, որն էական փոփոխություններ կանցնի ողջ արածաշրջանի փոխհարաբերությունների մեջ: Թուրքիան աշխատում է քրդական գործոնը օգաագործել Իրանի հետ իր առձականաման համար: Սիրիան վաղուց օգաագործում է այն Թուրքիայի դեմ: Իրանը աշխատում է օգաագործել քրդական գործոնը եւ՝ Թուրքիայի, եւ՝ Իրաքի դեմ: Զարմանալի կերպով, ամենահարմար, նպաստավոր պայմաններ ունեցող Հայաստանը քրդական գործոնը չի ձևաչում, չի օգաագործում: Ինչ դեր ունի քրդական գործոնը Իրանի քաղաքականության մեջ: Ես հակված եմ կարծելու, որ եթե Իրանը տեսնի, որ քրդական գործոնը հսկողությունից դուրս է գալիս, նույնիսկ իր կողմից մերժվող քրդական հարցում նա կարող է զիջումների գնալ, որպեսզի քրդական պետական ապագա միավորումը, ամբողջությունը լինի Իրանի հսկողության տակ:

Եվ Վերջին հարցը, մեր իշխանությունները չեն օգտագործում Հայաստանի քողոք մտավորականների ուժերն ու կարողությունները, որն ինչ խոսք, լուրջ բացթողում է:

*Անուշ Մտամրովյան*  
(պ.գ.թ., «ԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ»)

Այն հանգամանքը, որ Հայաստանը պետք է անհրաժեշտաբար սերտ եւ քազմակողմանի հարաբերություններ հաստատի եւ զարգացնի Իրանի հետ, որեւէ կասկած չի հարուցում: Մանավանդ, որ այս երկրների պահանական անցյալը ծանրաբեռնված չէ ճնշող հիշողություններով, որոնք առկա են Թուրքիայի պարագայում:

Հայաստանը՝ անպայմանորեն հարաբերություններ հաստա-

տելով Իրանի հետ, այնուամենայնիվ, պիտք է կարողանա վարել ճկուն քաղաքականություն, ելելով իր կենսական շահերից հաշվի առնի նաեւ Իրանի հետաքրքրությունները Հայաստանի Ըկատամամբ՝ մշտապես ուշադրության կենտրոնում պահելով Իրանի արտաքին քաղաքականության մյուս ուղղությունները եւ նրանց մեջ կատարվող փոփոխությունները:

Համաձայն եմ այն մտքին, որ Հայաստանը իր աշխարհաքաղաքական դիրքով աննպաստ վիճակում է գտնվում: Բայց այդ հանգամանքը նույր եւ ճիշտ օգտագործելու դեպքում կարող է նույնիսկ օգուտ բերել մեզ: Որպես կայուն թշնամի ունենալով Թուրքիային, Հայաստանը կարող է կայուն բարեկամ ունենալ ի դեմս Իրանի: Ներկայիս իշխանությունները դեռեւ չունեն Իրանի հետ մշակված հարաբերությունների քաղաքականություն եւ, ցավոք, արամադրված չեն հաշվի առնել արեւելագետների, մասնագետների, իրանագետների կարծիքը:

**Անուշ Հովհաննիսյան**  
(«ԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ»)

Վերջերս Թուրքիայում լուս տեսավ մի հոդված, որի հեղինակն է Ալթեմուր Քըլըզը. նա կառավարական խորհրդասուն է: «Ռողկածը վերնագրված է՝ «Կովկասում եւ Միջին Ասիայում. հոլոսեր եւ վատահճներ»:

Թուրքերը շատ լավ են գիտակցում, որ պետության շահերը եւ ստրատեգիական հետաքրքրությունները միշտ մնում են անփոփոխ, եւ Կովկասում բախվում են երեք մեծ պետությունների շահերը. Ուսասատան, Թուրքիա, Իրան: Անդրադառնալով Հայաստանի հարցին, նրանք շատ լավ տեսնում են, թե ով կարող է լինել Հայաստանի ռեալ դաշնակիցը. Պարզ է, որ դա Ուսասատանը եւ Իրանն են: Հողկածում առաջարկվում է ամեն կերպ կասեցնել Իրանի փորձերը մերձենալու թե՛ Հայաստանի,

եւ թե՛ Ուսասատանի հետ:

**Գառնիկ Ասատրյան**  
(ք.գ.դ., «ԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ»)

Ես կանգ կառնեմ հետեւյալ փաստի վրա:

1989-ին Բունիաթովը, Իրանի Աստրատական նահանգից այսպես կոչված Իրանական Ազգի բազան վերադարձնալուց հետո, իր ելույթում նշեց, որ այնտեղի թյուրքալեզու բնակչությունը լավ չի պատկերացնում իրենց պայքարը: «Իմա դրությունը փոխվել է: Եթե սկզբանական շրջանում իսկապես աղրբեջանական գործոնը Իրանում դեռևս զգացնել չեր տալիս, համենայն դեպք՝ սաղմնային վիճակում եր, այսօր այն պարզորոշ ուրվագծվում է: «Իմա ցանկացած աղրբեջանական կազմակերպություն Եվրոպայում, նկատի ունեմ Իրանից եկած աղրբեջանցիներին, նաեւ պրո-Քաջարի-աղրբեջանական կենտրոն է: Գրականություն են տարածում, օգտագործում են հեռուստաեսությունը, ռադիոն»:

Աղրբեջանական գործոնը Իրանի համար չափազանց կարեւոր է Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշման համար: Այսպես ասած, Աղրբեջանի ազգային փոքրամասնության հարցը: Այս պարագայում Արեւելագիտության ինստիտուտի, Համալսարանի դերը շատ է մեծանում՝ իրատարակչական, պրոպագանիստական բնագավառում՝ կապված Իրանի հայկական համայնքի հետ:

**Հակոբ Չաքոյան**  
(պ.գ.թ., «ԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ»)

Երեկ, հայ-թուրքական հարաբերությունների արդի վիճակը բննարկելիս, Թուրքիան բնութագրվեց որպես դարավոր թշնա-

մի: Այսօր Իրանն է բնութագրվում որպես դարավոր քարեկամ: Այս գնահատականները, եթե ոչ չափազանցված, ապա առնվազն զգացմունքային են, որը քաղաքական տեսանկյունից նաև ինչ-որ տեղ անթույլատրելի է:

Ես բնավ էլ այն կարծիքը չեմ արտահայտում երեկ, թե Հայաստանը ոչ մի դեպքում չպետք է Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատի: Ես ասացի, որ վաղ թե ուշ մենք Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ կհաստատենք, բայց սա պետք է կատարվի Հայաստանի համար նպաստավոր պայմաններում, առանց զիջումների:

Ինչ վերաբերում է Իրանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն, այստեղ մենք չպետք է ենթենք այն բանից, որ Իրանը Հայաստանի քարեկամն է են պետք է պաշտպանի հայերի շահերը: Մենք պետք է գտնենք շահերի խաչաձեւման եզրեր: Այսինքն, պետք է ինքներս նախաձեռնություն ցուցաբերենք, որպեսզի Իրանը մեզ համար նպաստավոր քաղաքականություն վարի: Չպետք է հանգստանալ այն բանվ, որ այսօր թուրքական կամ պանթուրքիզմի վտանգը սպառնում է նաև Իրանին:

Այսօր Ռուսաստանը, որին առաջին հերթին է սպառնում այդ Վտանգը, թուրք-իրանական պայքարի, մրցակցության պայմաններում նախապատվությունը տալիս է Թուրքիային:

Քացի ընդհանուր շահերի խաչաձեւման եզրեր փնտրելուց, մենք պետք է մտածենք հավասարակշռության մասին: Երկու հարեւանների՝ Թուրքիայի եւ Իրանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու դեպքում Հայաստանը կարող է ընկնել մեկի ազդեցության տակ: Այդ ազդեցությունից խոռափելու լավագույն միջոցը արաբական երկրները կարող են լինել: Արաբական աշխարհը, որը նաև իսլամական աշխարհ է, պիտի հավասարակշռի Հայաստանի հարաբերությունները մի կողմից Իրանի, մյուս կողմից Թուրքիայի հետ:

Քրդական գործոնը պետք է ոչ թե օգտագործվի, այլ

խորապես ուսումնասիրվի:

*Ռուբեն Սահակյան*

(բ.գ.դ., ՀԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ)

Կա մի դրույթ, որ մի քանի գեկուցումներում առաջ քաշվեց: Մերձենալ առաջին հերթին այն երկրների հետ, որոնք ունեն հակաթուրքական տրամադրություններ, պրորլեմներ Թուրքիայի հետ: Լավ միտք է, բայց այնուամենայնիվ, այսօր աշխարհի բախում որոշում են մեծ տերությունները: Բոլոր արմատական հարցերը իրենց լուծումը գտնում են այս երկրների ակտիվ մասնակցությամբ:

Օրինակ, Կիպրոս կղզու հարցի լուծումը ՄԱԿ-ը տեսնում է հետեւյալ կերպ: Կիպրոսը ֆեղերացիա է, կազմված թուրքական եւ հունական մասերից, որոնք ունեն հավասար իրավունքներ: Կարո՞ղ ենք մենք այս մոտեցումը Աղրբեջանի վրա տարածել: Աղրբեջանը նույնպես ֆեղերացիա էր, որի կազմում երկու ինքնավար կար՝ Նախիջևանի ինքնավար հանրապետությունը եւ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Սակայն մենք չենք կարող նույն մոտեցումը ցուցաբերել, ինչ Կիպրոսի հարցում: Չենք կարող, որովհետեւ դա ձեռնառու չէ ԱՄՆ-ին, որի համար Թուրքիան դեռ երկար տարիներ, հավանաբար, կմնա իր կայուն, հավատարիմ դաշնակիցը:

Նոյնը Իրանի վերաբերյալ: Մենք պետք է հաշվի առնենք իրանա-ամերիկյան հարաբերությունների գործոնը:

Նորից Ռուսաստանի հետ ենք կապում մենք մեր հույսերը, որը ձգտում է ԱՄՆ-ի հետ բարեկամական կապեր ունենալ: Եթե մենք դարաբաղյան հարցում ինչ-որ փոխգիջումային լուծում գտնենք, դա նորից մեր հյուախային մերձավոր հարեւանի միջոցով կարվի: Այս իրականությունը պետք չէ ոչ թերագնահատել, ոչ էլ գերագնահատել:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ

24.9.1992

### Պարույր Մուղաղյան

(պ.գ.դ., ՀԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ)

Այսօր մենք մշակում ենք մեր հարաբերությունների ծրագիրը  
մի երկրի հետ, որը մոտ անցյալում մեր հայրենիքի մասերից  
էր: Այդ իսկ առումով, եթե Իրանի եւ Թուրքիայի հետ մենք  
ունենք համապատասխան դիրքորոշում արտաքին հարաբե-  
րությունների հարցում, ապա Վրաստանի դեպքում այդ դիր-  
քորոշումը բացակայում է:

Ամեն ինչ կախված է Հայաստանի կառավարության քաղա-  
քական հեռատեսությունից եւ Ծրանից, թե ինչպիսին կլինի  
Վրաստանի նոր իշխանությունների դիրքորոշումը հարեւաննե-  
րի նկատմամբ:

Վրաստանը իրեւ քաղաքական միավոր անհամեմատ ավելի  
բարդ կառուցվածք, բարդ խնդիրներ ունի, քան Հայաստանը:  
«Վրաստան» ընդհանուր տերմինի տակ հասկանում ենք մի  
տարածք, ուր ապրում են, բացի վրացիներից, բավական թվով  
մեգրելներ, սվաններ, լազեր: Վրացիներից ժամանակի ընթաց-  
քում ինչ-ինչ պատճառներով ինքնուրույնացել են, մասամբ  
օտարացել՝ աջարները, ինգիլները, որոնց մի մասը ադրբե-  
ջանախոս է, մյուսը շարունակում է վրացերեն խոսել, թուրք-  
մեսիներցիները, որոնց նշանակալի մասը եթնիկապես  
վրացիներ են:

Այս բարդ եթնիկական կազմին պետք է գումարել 90  
հազարից ավելի արխազներ, տասնյակ հազարավոր հայեր,  
ադրբեջանցիներ, օսեր, ռուսներ եւ այլ ազգային միավորներ: Պաշտոնական տվյալներով Վրաստանում ապրում են 450 հազ.  
հայեր, 400 հազ. ադրբեջանցիներ: Վրաստանը իրենից ներկա-

յացնում է բավականին բարդ եթնիկական, դավանական,  
մշակութային խճանկար:

Վրաստանում ապրում են ե՛ հայախոս, ե՛ վրացախոս, բայց  
եթնիկապես հայեր: Վրաստանում կա նաև մահմեդական  
հայերի փոքր համայնք՝ համշեններ, որոնք հիմնականում  
թուրք-Վրացական սահմանի վրա են ապրում:

Բավական նկատելի է հայ կաթոլիկական համայնքը:

Գուգարքի շրջանի հայությունը անհամեմատ նոսր է, այս-  
տեղից տեղի է ունեցել աստիճանական ներթափանցում դեպի  
Հայաստան: Այդ տարածքում այնպիսի հավաքականություն,  
ինչպիսին կա Զավախթում, Ախալցխայի շրջանում, չի դիմվում:

Ի՞նչ քաղաքականություն է վարում Վրաստանը այս եթնի-  
կական միավորների հանդեպ տասնամյակներ շարունակ: Արխազների նկատմամբ վրացականացումը բավական վաղ է  
սկսվել, եւ այսօրվա մեզքելական շրջանի մի հատվածը  
արխազական է: Արխազները վաղուց արդեն դադարել են  
Արխազիայի բնակչության մեծամասնությունը կազմել: Տեղի է  
ունեցել եթնիկական կազմի աստիճանական փոփոխություն: Սակայն պետք է շեշտել, որ արխազները ապրում են իրենց  
պատմական տարածքում: Հայաստանը պետք է ելնի այդ  
իրողությունիցից:

Միանգամայն այլ է վրացական քաղաքականությունը օսերի  
նկատմամբ: Օսերը իրենց պատմական հայրենիքում չեն ապրում: Մինչեւ XII ներառյալ այստեղ օսեր չեն ապրել: Շատ ընդհանուր  
գծեր ունեն հայկական (արցախյան) եւ օսական ազգային  
շարժումները՝ միանալ հայրենիքի հետ: Բայց, եթե դարաբաղցին  
իր հետ պետք է բերեր իր պապերի ստեղծած արվեստը եւ  
հայրենի հողի մի մասը, ապա օսը, Հյուսիսային Օսեթիային  
միանալով, կամ Ռուսաստանի կազմի մեջ մտնելով եւ Վրա-  
ստանից դուրս գալով, իր հետ կտանի վրաց ժողովրդի հայրենիքի  
մի մասը: Սա շատ բարդ խնդիր է:

Ի՞նչ քաղաքականություն է վարում վրաց մտավորականութ-

յունը: «Այսատանի մտավորականության եւ իշխանությունների միջեւ տասնամյակներ շարունակ անհամաձայնություն է եղել: Հայ մտավորականը իրեն չի զգացել քաղաքական կյանքի մասնակից: Վրաց գիտականը միշտ էլ ազդել է քաղաքականության վրա, վրացական եւ աղրբեջանական գիտական քաղաքականության կուրսը լիովին համաձայնեցված է եղել պաշտոնական քաղաքականության հետ: Այս իմաստով վրաց գիտականները տասնամյակներ շարունակ աշխատել են աստիճանաբար տեսություններ մշակել, որոնք տանում են Վրաստանի էթնիկական ամրապնդմանը: Լուրջ վրացականացման պրոցես է գնում այստեղ: «Իշեցնեմ երկու տեսություն, որոնք կատարելապես հորինված են: Առաջինը՝ Վրաստանի հայերը (լուսավորչականների մասին է խոսքը) վրացի լուսավորչականներ են, որոնք իրեն լուսավորչության հետեւրդներ հարել են հայ եկեղեցուն, հայացել են, նրանց մեջ աստիճանաբար զարգացել է հայկական ինքնագիտակցություն: Այսօր նրանք պետք է վերադառնան իրենց էթնիկ ժողովորդի գիրկը: Սա ակադեմիական լսարաններում մշակված տեսություն է, որի իրագործումը կատարվում է չափազանց հետաքրքիր եղանակով. Ակադեմիայի պատմության ինստիտուտ կարող է գնալ հայը եւ հարցնել իր բուն ազգանունը, արմատները: Նրան շատ արագ տալիս են իր «քուն» վրացական ազգանունը:

«Զջորդը՝ հայ կաթոլիկների էթնիկական պատկանելիությունն է: Քանի որ, ասում են, վրացական կաթոլիկ ծիսարան, ժամագիւք եւ այլն վրացերենով չկար, իսկ հայերենով կար, Օսմանյան կայսրության սահմաններում ապրող վրաց կաթոլիկե համայնքը աստիճանաբար հարկադրված եղավ Վրաստանում հայախոս դառնալ, եւ հետագայում այդ վրացիները սկսեցին իրենց հայ համարել:

Ինչպիսի՞ տրամադրվածություն կա Վրաստանում Հայաստանի նկատմամբ: Ռուսաստանը միշտ ուշադրության կենտրոնում էր պահում այն փոքր ճեղքածքներն անգամ, որոնք գոյանում

էին, եւ ոչ արիեստականորեն, հայկական էթնիկական տարրի եւ վրաց պաշտոնական շրջանների միջեւ: Խսկ Հայաստանը դիտորդի դերում էր եւ այս հարցում:

«Հայտնի է, որ անիշխանության ժամանակ շատանում է իշխանության ճգոնողների թիվը: Այդ ընթացքում հայ համայնքում զգալիորեն ակտիվացան ոչ իրազեկ, Հայաստանի բուն շահերը չպատկերացնող որոշ քաղաքական գործիչներ: Դա մասնաբ վճասեց հայ-վրացական հարաբերություններին: Վրացական մամուլը սկսեց զանգվածային հակահայկական քարոզություն, որն առ այսօր, դժբախտաբար, շարունակվում է: Ամենախոշոր խնդիրը, որն այսօր կա եւ հետագայում կարող է բարդություններ առաջացնել, Վրաստանի կառավարության այն որոշումն է, որով արգելվում է 21 կմ. խորությամբ սահմանամերձ շրջանում սեփականաշնորհման անցկացումը: Հիմնական հայկական զանգվածը այդ հոդի վրա կմնա ապրելու իրավունքով, բայց ոչ որպես հաղի սեփականատեր:

Հայաստանն այսօր Վրաստանի հանդեպ միասնական, որոշակի քաղաքականություն չունի: Դա քաղաքականության բացակայության քաղաքականություն է: Հայաստանում գործող քաղաքական ուժերը, ամեն մեկն առանձին, ունեն հետաքրքրություններ, նաև ազգային շահագրգուվածություն: Բայց այդ ամենը կատարվում է մեկուսի:

Վրաստանը մեծ տարածքային պրոբլեմներ չունի Թուրքիայի հետ: Ես կարծում եմ, որ հայ-թուրքական երկխոսությանը ինչ-որ չափով կարելի է միջնորդ կամ մասնակից դարձնել Վրաստանին: Պետք է հաշվի առնել նաև այն, որ Վրաստանը բավականաշափ զուսպ, բայց գործնական հարաբերություններ ունի Աղրբեջանի հետ:

Հայաստանը Վրաստանին կարող էր օգտակար լինել Վրաստան-Իրան հետաքրքրություններ ծավալելու բնագավառում:

Բոլորովին վերջերս նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Վրաստանի հետ երկխոսությունը սերտացնելու ուղղությամբ:

Դա Հյուսիսային Կովկասի Ֆեդերացիայի ձեւավորումն էր: Այն հայտնվեց Վրաստանի թշնամիների շարքում: Այսօր Վրաստանը շատ ավելի կարու է իր հարավային հարեւանի հետ մերձենալու եւ անվանգություն հաստատելու:

Մենք չփորձեցինք վրաց ղեկավարներին զգացնել առաջ Վրաստանի ներքին գործերին հայկական զանգվածի չեղոքության քաղաքականության դրական ազդեցությունը: Նման աշխատանք չի տարվում:

Վրաստանը՝ հակառակ իր ավանդական գերմանական կողմությանը, այսօր փորձեր է անում, եւ բավականին հաջող, Խորայելի հետ եղայրացման քաղաքականության: Ըստ եռության Վրաստանը դժվարանում է ստեղծել, ունակ տնտեսական, մշակութային եւ այլ հարաբերությունների: Տնտեսապես նա կարու է կապիտալ ներդրումների, եւ այստեղ սփյուտքահայությունը կարող է միջնորդի դեր խաղալ՝ արտասահմանյան երկրների եւ Վրաստանի միջեւ կապեր հաստատելու գործում:

Հարց (Լ.Հախվերդյան, ՀԳԱ թղթակից անդամ, ՀԳԱ Արքեստի ինստիտուտ):

- Ես հոգեբանորեն Արխագիայի կողմն եմ, քաղաքականապես՝ Վրաստանի: Այս պարագայում ինչպես պետք է վարվենք մենք:

#### Պատասխան.

- Արխագիների խնդիրը ես, դժբախտաբար, համարում եմ տանով տված: Եթե որեւէ եթոս բնակչության 3-րդ կամ 4-րդ տեղն է գրադեցում իր պատմական տարածքում, իր տան տիրոջ իրավունքը շատ դժվար է պահպանելու: Այստեղ կարելի էր աշխատել, որ արխագահայությունը չմասնակցի այդ կոնֆլիկտին:

Հարց (Գ. Գայոյան, ՀԳԱ ակադեմիկոս):

- Ճիշտ հասկացա, որ ասացիք, թե այդ Ֆեդերացիան, որ ստեղծվել է Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մեջ, առաջին երեսութեան է, այդպիսի բան չի եղել պատմության մեջ:

#### Պատասխան.

- Ֆեդերացիա՝ իբրև քաղաքական պետական կազմում, ժամանակակից անդամություն է անել, որ ուղղությամբ պետք է գործել: Արդյոք ժամանակը չէ, որ Հյուսիսային մշակվի

պատմության մեջ չի եղել: Իհարկե, ընդհանուր թշնամու դեմ միհանալու զանգվածն որվագներ եղել են, բայց հնարավոր չէ պատկերացնել, որ մի օր չեւնեները, ինգուշները եւ օսերը կողք-կողքի գնան թշնամու դեմ: Հնարավոր չէ, որովհետեւ մեծ է ներքին թգկավածությունը: Ավելին, Դաղստանը իրանական ճանապարհով է մահմեդականության ենթարկվել, Հյուսիսային Կովկասի Արեւմտյան մասը՝ թուրքական ճանապարհով: Այստեղ կա շիաների եւ սուննիների խնդիր: Բայց XVIIIդ. առաջացել էր չափազանց ազնիկ մի գաղափար՝ հայ-վրացական միացյալ թագավորություն ստեղծելու գաղափարը: Այսօր թագավորություն կամ միացյալ իշխանություն կարելի է չստեղծել, բայց շահերի միասնականություն դաշինք կարելի է ունենալ:

Հարց (Ա. Համբարյան, ՀԳԱ Պատմության ինստիտուտ):

- Ի՞նչ կասեք Վրաստանում ապրող աղբբեջանցիների եւ վրացիների, նաեւ հայերի եւ աղբբեջանցիների հարաբերությունների մասին:

#### Պատասխան.

- Վրացիները առանձնապես ակտիվ հակահայկական արամադրություններ չեն իրակրում աղբբեջանական միջավայրում: Հայերի թթնիկական ներկայությունը Վրաստանում շատ ավելի շոշափելի է եւ իրեն զգացնել է տալիս վրաց հասարակության կյանքի բոլոր բնագավառներում: Մինչդեռ աղբբեջանական ներկայությունը գերազանցապես շուկայական միջավայրում է: Այդ պատճառով նրանց ներկայությունը վրաց մտավորականությանը շատ մտահոգություն չի պատճառում:

Հարց (Կ. Մարգարյան, «Զավախը» հայրենակցական միություն):

- Վրացահայության բնակության շրջաններում, մանավանդ այնտեղ, որտեղ հայերը բնակչության մեծամասնություն են կազմում, չգիտեն, թե ինչ պետք է անել, որ ուղղությամբ պետք է գործել: Արդյոք ժամանակը չէ, որ Հյուսիսային մշակվի

Վրացահայության համար գործուն ծրագիր:

Պատասխան.

- Անհրաժեշտ է նախ Հայաստանի պաշտոնական քաղաքականության ծրագիր ստեղծել Վրաստանի նկատմամբ: Եվ արդեն այդ ծրագրի, կոնցեպցիայի մեջ մշակել վրացահայության քաղաքականությունը: Նրանց քաղաքականությունը չպետք է հակադրվի հայ-իրացական հարաբերությունների մշակվելիք ծրագրին:

Հարց (Ն. Սարուխանյան, պ.գ.թ., ՀԳԱ պատմության եւ մտածագիտության բաժննմունք).

- Ինչպես եք պատկերացնում վրաց-ռուսական հարաբերությունների հերկան եւ մոտավոր գալիքը:

Պատասխան.

- Համոզված եմ, որ այդ հարցին պատասխանեց Ելցինը՝ վրաց-արխազական հակամարտության ժամանակ իր գրաված դիրքով: Նա ապահովեց ապագա համագործակցությունը վրացիների հետ՝ բազմից մերժելով արխազների ցանկությունը մասնել Ռուսաստանի կազմի մեջ: Այս քաղաքականության մեջ ես փոխհամաձայնեցվածություն եմ տեսնում: Կարծում եմ, այսօրվա վրաց մշակույթը, գրականությունը եւ արվեստը շատ ավելի են հերձճակած ռուսական տարրով, քան հայկականը:

Պալել Չորամյան

(պ.գ.թ., ՀԳԱ Պատմության  
ինստիտուտ)

Հաշվի առնելով Վրաստանի հերկա էթնիկական եւ քաղաքական վիճակը, պետք է մշակել ազգային պետական վերաբերմունք: Պետք է նաև նկատի ունենալ հայերի ավանդական վերաբերմունքը Վրաստանի նկատմամբ եւ մյուս կողմից՝ վրացիների ավանդական պատկերացումը Հայաստանի մասին, որոնք իրենց հերթին խոչընդոտում են այդ հարաբերություն-

ների կարգավորմանը:

Հայաստանի կառավարությունը հայտարարել է, որ ճանաչում է Վրաստանի պետականությունը, բայց հարաբերությունները կարգավորելու համար, բացի այդ հայտարարությունից, հարկավոր են, կոնկրետ գործողություններ, որոնց ընթացքը դեռ նկատելի չէ: Այդ հարաբերությունները կարգավորելու համար անհրաժեշտ եր դեսպանատեր բացել: Հայաստանի կառավարության կողմից պետք է կարգավորվեն Վրաստանում ապրող հայերի գործողությունները այս դեսպանատերի միջոցով, պետական պաշտոնական ճանապարհով:

Այս ամենը Հայաստանի համար առաջնային նշանակություն ունի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք գտնվում ենք թշնամական շրջապատում: Հարկ է մշակել որոշակի վերաբերմունք Արխազիայի նկատմամբ, որի պապան գրեթե կանխորոշված է՝ բնակչության էթնիկական փոքրամասնություն կազմելու պատճառով:

Միաւ է հույս ունենալ, որ օգտագործելով Վրաստանի հերցին հակասությունները, կարելի է զիջումներ սպասել նրանից: Հայաստանը պարտավոր է իր քաղաքականությունը մշակել միասնական Վրաստանի գոյության փաստը ընդունելով, փոխադարձ ներկայացուցություններ, դեսպանատեր բացելով: Մենք պետք է շահագրգռենք նրան տնտեսական առումով, փոխադարձ համագործակցության եզրեր մշակենք: Այն հարցերը, որոնք կհայտնվեն հայկական դեսպանատան եւ վրացական իշխանությունների ոլորտում, շատ ավելի հեշտ կլինի լուծել:

Ազատ Համբարյան

(պ.գ.դ., պրոֆեսոր, ՀԳԱ  
Պատմության ինստիտուտ)

Հայ-վրացական հարաբերությունների մասին խոսելիս Ել-

կետ պետք է ընդունել այն, թե ո՞վ է ումից ավելի շատ կախված: Հայաստանը շատ ավելի է կախված Վրաստանից: Վրաստանում 500 հազ. հայություն կա, Հայաստանում՝ 500 վրացի է չկա: Հայաստանի ճանապարհներն անցնում են Վրաստանով, նրանց ճանապարհները այստեղով չեն անցնում: Երկրորդ հարցը: Արխազական հարցը ինձ համար այլ բովանդակություն ունի: Ինչո՞ւ վրացիներին կարելի է արդարացնել, արխազներին՝ ոչ: Եթե հարցը դեմք այն տեսակետից, որ վրացիները գերակշռում են, ապա պետք է արդարացնենք նրանց ոչ առողջ քաղաքանությունը: Այդ դեպքում մենք արդարացնում ենք փաստորեն այն, ինչ արեցին աղորեջանցիները Նախիջևանում: Ես մատծում եմ հետեւյալ կերպ. Եթե Արխազիան ունենա իր անկախությունը, ապա արխազ-վրացական հարաբերությունները կկայանան: Սա իդեալիստական բան է, բայց ուզում եմ, որ վրաց հարեանները նույնպես մտածեին՝ ինչո՞ւ իրենք իրավունք ունեն անկախանալ, սեփական պետություն ունենալ, իսկ արխազները՝ ոչ: Վրաստանում հայերը ապրում են Զավախքում, մասսամբ՝ Ախալցխայում, Թբիլիսիում եւ Արխազիայի ծովափնյա շրջանում: Այստեղ, որտեղ հայերը արխազների հետ են ապրում, հանդես են գալիս վրացիների դեմ, եւ հակառակ՝ վրացիների հետ ապրող հայերը հանդես են գալիս արխազների դեմ: Դա բնական է, եւ սխալ է պահանջել Հայաստանի կառավարությունից որոշակի մրտեցում նրանց նկատմամբ: Ուրիշ տեղեր այլ է մրտեցումը: Ախալքալաքում շատ հայեր են ապրում, որոնք կարող են ունենալ իրենց որոշակի մրտեցումը տարբեր հարցերի նկատմամբ: Այստեղ Հայաստանի կառավարությունը չէ, որ պետք է որոշիչ դեր խաղա: Հայերի բավական զարգացած համայնքը ինքը կարող է իր բախտը որոշել: Վճռական խոսք ասողը իրենք են, իրենք էլ պետք է լինեն քաղաքանություն վարողները: Հայաստանի ոչ մի դեկավար չի կարող իր վրա վերցնել ողջ պատասխանատվությունը եւ ասել, թե այս արե՛ք, այս մի՛ արե՛ք: Վրացիները ուզում են Ախալքալաքը նույնպես վրացականաց-

նել: Միակ բանը, որ իմ կարծիքով կանգնեցնում է վրացիների ծրագիրը, Ախալքալաքի դաժան, խիստ բնությունն է:

Պաշտոնյաների հարցում մենք պետք է ունենանք ոչ թե ազգային պատկանելիության մոտեցում, այլ՝ թե ինչ օգոստ կարող է բերել այս կամ այն անձը հայերին: Ախալքալաքին բավականաշափ վրացերեն չգիտի, որ խորհրդարանում ելույթ ունենա եւ իր ժողովրդի շահերը պաշտպանի: Կամ էլ պետք է վրացախոս կադրեր ածեցնել:

Ծատ զգույշ եւ մտածված քաղաքականություն է պետք վարել: Բավական է մի քիչ սրել հայ-վրացական հարաբերությունները, անմիջապես նրանք կարող են գործի անցնել, եթե ոչ Ախալքալաքում, ապա մյուս հայկական շրջաններում: Մեծ դեր կարող է ունենալ մտավորականությունը: Ես գալիս եմ այն համոզման, որ մտավորականությունը ժողովրդի միջեւ եւ՝ բարեկամության, եւ՝ դժբախտության, չարիքի պատճառ է դառնում: Եվ եթե տիրապետող ազգի մտավորականությունը մարդասիրական քաղաքականություն վարի, ազգը կշահի: Հիմա մենք Թբիլիսիում մտավորականություն չունենք, այնտեղ հայերը կամ արհեստավորներ են, կամ վաճառականներ:

Քաղաքականությունը մշակելիս գլխավոր շեշտը պետք է դնել մտավորականության վրա:

**Հայուսագնու Մարգարյան**  
(պ.գ.թ., «ԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ»)

Հայաստանի հարեւան երկրների շարքում Վրաստանը առանձնահատուկ տեղ է գրավում: Գանվելով միեւնույն կայսրության կազմում՝ այդ երկիրը (եւ այն բնակեցնող ժողովուրդը) մեզանում ավելի ճանաչված չի եղել, քան սահմանային անջրապետներով հեռացված Իրանն ու Թուրքիան: Ավելին. եթե

Թուրքիան եւ Իրանը մշտական հետաքրքրության առարկա են եղել, այդ երկրներում տեղի ունեցած իրադարձությունները աշխուժորեն քննարկվել են, ապա Վրաստանում կատարված դեպքերը երբեք լիարժեք չեն ներկայացվել: Վրաստանը մատուցվել է կայսրության շահերի տեսուակյունից, գերազանցապես ոռուական լրատվության միջոցով: Հետեանքը եղել է այն, որ Վրաստանի մասին մեզանում ծեսավորվել է թյուր, իրականության հետ քիչ կապ ունեցող ու անիրական պատկերոցումների ու ստերեոտիպների այնպիսի ամբողջություն, որը գրեթե անընկալելի է դարձնում մեր հյուսիսային հարեւանին:

Հնդիանրապես պետք է շցել, որ Վրաստանը հաճախ է հայկական գիտակցության մեջ ներկայացվել ակներեւ ծայրակերպություններով: Կարելի է առանձնացնել երեք գլխավոր ուղիներ, որոնք առավել մեծ չափով են ազդել Վրաստանի մասին մեր պատկերացումների ծեսավորման վրա: Առաջինը կենցաղային շփումներն են, առօրյա փոխհարաբերությունները, որոնք տեղի են ունենում գլխավորապես Վրաստանում՝ գերազանցապես վիրահայոց ու վրացիների միջև: Այս միջավայրում կազմավորված տեսակետը հօգոս վրացիների չէ, այն ընդգծված գացմունքային է, հաճախ արտացոլում է տվյալ պահի իրավիճակը: Վիրահայոց շրջանում վերջնական կերպարանը ընդունած պատկերացումները հետազոյում հաղորդվում են հայաստանաբնակ հայերին, որոնց անմիջական շփումները վրացիների հետ խիստ դիպվածային են, եթե չասենք, թե գրեթե բացակայում են: Առաջին ուղիով ծեսավորվող պատկերացումը վրացիների մասին ակնհայտորեն բացասական լիցքավորում ունի:

Երկրորդ ճանապարհը, որով ընթանում է վրացական աշխարհի ճանաչումը, վերացական իմացության, ընդիանուր փաստերի իմաստավորման ուղին է: Մենք ելակետ ենք ընդունում Վրաստանի քրիստոնեական երկիր լինելը, մահմետական երկրներով շրջապատված լինելու պարագայում միակ

հավատակից լինելը, հնարավոր դաշնակից հանդիսանալը եւ այս խմբին պատկանող այլ գործոնների առկայությունը: Այսպիսի, կոնկրետ իրականությունից կտրված, մոտեցումը իր ընդգծված դրական տրամադրվածությամբ հանդերձ, նույնքան անիրական է, որքան առաջին հայեցակերպը: Վրաստանը փաստորեն վերածվում է եթերային հասկացության եւ մնում է անձանաչչել:

Վերջին յոթ տասնամյակների ընթացքում մեզանում գոյություն ուներ նաև երրորդ, պաշտօնապես մատուցվող ու եռանդագին քարոզվող տեսակետը, որը լիովին կեղծ էր ու արժեզուրկ: «Եղրայրական Վրաստանի» հնարովի պատկերը առանձնակի հավատ չէր ներշնչում նաև խորհրդային կայսրության ժամանակաշրջանում, իսկ այսօր գրեթե մոռացության է տրված:

Ասվածից հետեւում է, որ մեր առաջնահերթ խնդիրը պետք է լինի ժամանակակից Վրաստանի ճանաչումը: Մեր ուշադրությունից չպետք է վրիպի այդ երկրում կատարվող քաղաքական, տնտեսական ու ազգային որեւէ տեղաշարժ: Այստեղ էլ հարկադրված ենք արձագանքել, որ մեր հնարավորությունները առայժմ խիստ սահմանափակ են: Եթե առանց այդ էլ Վրաստանը, նույնիսկ նախորդ տասնամյակներին, համեմատարար փակ հանրապետություն էր, ապա այժմ վրացական մամուլի ներհոսքը լիովին դադարել է: Հասունացել է ժամանակը, երբ Վրաստանի մասին տեղեկատվության ստացումը, մշակումն ու վերլուծությունը պետք է դնել պետական մակարդակի վրա: Այսօր, երբ ծեսավորվում են պետական փոխհարաբերություններ երկու հարեւան երկրների միջև, պետությունը իրավունք չունի անզործության մատնելու ու հույսը դնել գիտական մտավորականության վրա: Պետք է գործել անհապաղ եւ պետականորեն նպատակառությունը միջոցներով:

Վրաստան-Հայաստան փոխհարաբերությունների հեռանկարները գնահատելիս պետք է ելնել երկու պետությունների

ապագա կապերը պայմանավորող դրական ու բացասական գործուների սթափ գնահատությունից:

Եթե սկսենք դրականից, ապա առաջին հերթին պետք է հիշել պատմական ճակատագրի ընդհանրությունը ու երկու ժողովուրդների պատմական հիշողության անաղարտությունը: Հայաստանի ու Վրաստանի միջև երթելից կործանարար պատերազմ տեղի չի ունեցել, ազգային հոգերանության մեջ փոխադարձ ատելության պարագան բացառված է: Երկու ժողովուրդների անցյալում չկա մի այնպիսի անցուղարձ, յուրօրինակ խոչընդուա, որը հոգերանորեն անհաղթահարելի կդարձներ սերտ համագործակցությունը: Երկրորդը տնտեսական համագործակցության հեռանկարն է: Այս առումով հույսեր փայփայելը դեռևս վաղաժամ է, բայց տնտեսական գործոնի դերը չի բացառվում, այն կարող է աճել, մանավանդ որ երկու երկրների համար էլ անտեսական շրջափակումը գնալով ավելի ընդգծված է դառնում:

Բացասական գործուների մասին պետք է բացահայտորեն ու անկեղծ խոսել՝ միմյանց դիրքերը հստակորեն հասկանալու անհրաժեշտությունից ելնելով: Որքան հստակորեն երկու կողմերը առարկայորեն գիտակցեն միմյանց շահերի տարրերությունները եւ, թերեւ, նաև հակադրությունները, այնքան սթափ մոտեցում կարելի է մշակել:

Հայաստանում պետք է հաշվի առնեն, որ Վրաստանում գոյություն ունեն այնպիսի զանգվածային տրամադրություններ, պատկերացումներ, ազգային հոգերանության հետ կապված իրողություններ, որոնք անխուսափելիորեն ազդում են յուրաքանչյուր կառավարության վրա, այսինքն՝ կայուն ու մշտական գործուներ: Վրաստանում չեն թաքցնում, որ Կովկասում առաջնության հասնելու համար պայքար է ընթանում Հայաստանի ու Վրաստանի միջեւ: Ընդ որում, արմատացած է այն մտայնությունը, որ Աղբյուրշանը չի մասնակցում այդ մրցակցությանը, կամ թիւ հնարավորություններ ունի Կովկասում

առաջնություն ձեռք բերելու համար: Ուստի Վրաստանում որոշակի վտանգ են տեսնում Կովկասում, մասնավորապես Վրաստանում ու Արխագիայում, իայ բնակչության տարածման մեջ: Կովկասում առաջնության հասնելու ձգտումը Վրաստանում ունի նաև պատմական արմատներ, որը գալիս է այն ժամանակներից, երբ Թիֆլիսը ողջ փոխարքայության կենտրոնն էր: Այս իրողությունները անհրաժեշտ կլինի հաշվի առնել այն դեպքերում, երբ Հայաստանը կարող է հանդես գալ Կովկասում որեւէ ծրագիր իրականացնելու նախաձեռնությամբ: Վրաստանը հավանաբար հանդես կգա վերապահություններով, քանի որ վտանգ կարող է տեսնել Հայաստանի՝ Կովկասում առաջնություն ձեռք բերելու առումով:

Հայաստանի ու Վրաստանի փոխարքերությունների օրինաչափ զարգացմանը ի, վիճակի է խանգարել ներվրացական քարդ իրադրությունը: Վրաստանը միասնական չէ եթենիկական, դավանական առումներով: Առանձնահատուկ երեսութ է նաև տեղային-երկրամասային մտածողությունը: Ոչ միայն Վրաստանի արեւմտյան ու արեւելյան մասերը, այլև առանձին երկրամասերը զանազանվում են միմյանցից իրենց աշխարհնեկալմամբ, նիստուկացով, մշակութային ժառանգությամբ: Վրացական աշխարհը համախմբված է հանդես գալիս արտաքին աշխարհում, այդ պարագայում ետին պլան են մղվում ներվրացական տարածայնությունները: Ուստի, որպես վրացական աշխարհը հաւախմբող գործոն, կարող է հանդես գալ նաև հակահայկական քարոզչությունը, չեն բացառվում նպատակառության հակահայկական գործողությունները:

Սահմանավեճերի պարագան, որն այնքան կարեւոր էր 1918—1920 թվականներին, այժմ էլ որոշ չափով խաթարում է Հայաստան-Վրաստան հարաբերությունների լիարժեքացման ընթացքը, թեև կողմերը գերադասում են, գոնե իրապարակավ, այս կապակցությամբ առանձնապես չծավալվել: Գաղտնիք չէ, որ Վրաստանը մտավախություն ունի, թե Զավախքում եւս

անշատողական քայլեր կարող են ծավալվել եւ ապա՝ վերջնականապես փակված չի համարում Լոռու հարցը: Տարածքային հարցերը, թվում է, չպետք է անցանկալի սրություն ստանան եւ անհարթելի չեն:

Ամփոփելով «Հյաստան-Վրաստան հարաբերությունները պայմանագործող դրական ու բացասական գործուների հաշվառումը», հակված ենք կարծելու, որ, այնուամենայնիվ, գերակշռում են լավատեսությունն ներշնչող երեսույթներն ու իրողությունները: «աշվի առնելով տարածաշրջանի քաղաքական մշակույթի մակարդակը եւ ներկա իրադրությունը՝ Վրաստանը, մեծ չափով Հյաստանի «իդեալական հարեւան» դասնալու հեռանկար ունի: Վրաստանի հետ բարեկամական հարաբերությունների զարգացման հեռանկարի իրականացումը գգալի չափով պայմանագործած է նաև մեզանում տիրող թյուր պատկերացումների հաղթահարմամբ, հարեւան երկիրը ճանաչելու մեր պատրաստակամությամբ:

**Հակոբ Հակոբյան**  
(պ.գ.թ., դոցենտ, Երեւանի  
պետական համալսարան)

Եթե մի երկիր վաս գիտես, եւ իմացած կողմը կենցաղայինն է, պարզ է, որ նրա նկատմամբ, այն էլ արագորեն, հնարավոր չէ քաղաքականություն մշակել: Եվ այստեղ պահանջել, որ մի շարք շատ խճճված հարցերին միանցանակ պատասխան տրվի, արդարացի չէ: Բայց այն է, որ մեր հարեւանը մեր նկատմամբ ունի երկու մեծ առավելություն, որի շնորհիվ նա գտնվում է թելադրողի դիրքում: Առաջին, այն պահից հետո, երբ միությունը փլուզվեց, կոմունիկացիաները դադարեցին լինել ընդհանուր սեփականություն եւ դարձան առանձին պետությունների սեփականություն, միակ զարկերակը, որը մեզ կապում է արտաքին աշխարհի հետ, անցնում է Վրաստանով: Եվ մեր,

այսպես կոչված, անկախությունը Վրաստանը ուզած պահին կարող է կախված վիճակի մեջ դնել: Երկրորդ, Վրաստանում ապրում է, որքան ինձ հայտնի է, 437 հազ. հայ, որոնց հետ վրացիները կարող են անել ուզած քանը: Եթե մենք փորձենք ինչ-որ ձետվ միջամտել, նրանք կօգտագործեն առաջին գործունը՝ ճանապարհը, գուցե եւ ճնշում գործադրեն Ախալքալաքի հայերի վրա:

Իհարկե, Վրաստանն ունի լուրջ ներքին պրոբլեմներ և առաջին հերթին՝ էթնիկական: Երբ համեմատում ես 1926թ. մարդահամարի և 1975թ. մարդահամարի տվյալները, պարզվում է, որ այդ մոտ 50 տարիների ընթացքում անհետացել է 90 ազգություն: Դրանցից 5-ը՝ Վրաստանում: Վրաստանը Կովկասում գերիշխանության հասնելու ձգտումներ ունի: Մեր վիճակը չափից դուրս ծանր է, հակասական:

Մի կողմից Արխագիայում տեղի է ունենում այն, ինչ որ Ղարաբաղում, «յուախային Կովկասում տեղի է ունենում այն, ինչ որ Ղարաբաղում: Բայց «յուախային Կովկասում նեղույնինից է, որը մեր ազգային շահերին հարվածում է: Ինչպես վարվել: Եթե պաշտպաննենք Արխագիային, պետք է մտածենք Վրաստանի մյուս մասեռում բնակվող հայերի ճակատագրի մասին:

Կարծում եմ, որ անկախ նրանից, ուզու՞ն են, արդյոք, մեր իշխանությունները համագործակցել Գիտությունների ակադեմիայի հետ, թե ոչ, Ակադեմիան պետք է ստեղծի հանձնախումբ հայ-վրացական հարաբերությունների լավագույն գիտակներից, եւ նրանք պետք է այդ բարդ հարցի համար մշակեն որեւէ ելք:

**Գալուստ Գալոյան**  
(«ԳԱ ակադեմիկոս»)

Ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել հետեւյալի վրա, որն իմ կարծիքով այստեղ անտեսվեց: Հայտնի է, որ

ցանկացած քաղաքական որոշման ճշգրտության մակարդակը կախված է ինֆորմացիայի մակարդակից: Եթե ինֆորմացիան ստույգ է եւ համապարփակ, ապա որոշումները ճիշտ կլինեն: Այսօր խոսվեց Վրաստանի մասին եւ այնպիսի տպավորություն ստեղծվեց, թե խոսքը գնում է մի հզոր պետության մասին, որն ինքնուրույն կերպով լուծում է այսօր իր ներքին եւ արտաքին քաղաքականության հարցերը: Այդպես չէ: Եթե մենք հաշվի առնենք, որ այսօր Վրաստանի վրա (Ըունը կարելի է ասել եւ Հայաստանի մասին) լուրջ արտաքին գործուներ են ազդում՝ ներքին եւ արտաքին քաղաքականությունը մշակելիս, եւ գումարենք այդ ամենը այսօրվա մեր ասածներին, երեխ, ավելի ճիշտ դիրքորոշում կարելի կլինի ընդունել մեզ հուզող հարցերի վերաբերյալ: Պատմական մի գուգահեռ: Վրաստանը միացավ Ռուսաստանին եւ Գեորգի XII գահընկեց արվեց, Պարսկաստանը ավելի քան 15 տարի թագաժմ շանց Ալեքսանդրին կարողացավ օգտագործել Վրաստանը եւ Ռուսաստանը լարված պահելու համար:

Ավելի մոտ անցյալից: Նորահայտ փաստաթղթերը վկայում են, որ 1920թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ, անմիջապես, երբ Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա, Անգլիայի միջամտությամբ փակ բանակցություններ էին տեղի ունենում Հայաստանի եւ Վրաստանի միջև: Նախապատրաստվել էր արդեն ռազմական դաշինքի պայմանագիր: Ո՞վ էր շահագրգռված այս պայմանագիրը ստորագրելու: Արտաքին տեսքից թվում է, թե եթե հարձակում է տեղի ունեցել Հայաստանի վրա, ապա Վրաստանը շահագրգռված է Հայաստանը շգնելու, որովհետեւ նոյն վտանգը իրեն էլ էր սպառնում: Բայց պարզվում է, որ ավելի շատ շահագրգռված էր Անգլիան, եւ այդ քաղաքականությունը թելազրվում էր նրա կողմից: Մեր պատմագրության մեջ կոպիտ սխալ է թույլ տրված, երբ հայտարարել եւ գրել ենք, թե Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա կատարվել է

Անգլիայի դրդմամբ:

Անգլիական հետախուզության փաստաթղթերը վկայում են, որ Անգլիան շատ լավ հասկանում էր, որ այս պատերազմը նպաստում էր այն բանին, որ ոռա բոլշևիկները եւ քեմալականները իրար ձեռք մեկնեին: Անգլիայի համար դա խիստ անցանկալի երեսույթ էր, եւ այդ պատճառով Անգլիան որոշում է ընդունում հասնել հայ-վրացական դաշինքի կնքմանը, կանխել բոլշևիկյան եւ քեմալական ծրագրերը: Բայց հենց որ Անգլիան եւ Անտանտը լեզու գտան քեմալականների հետ, նրանք փոխեցին իրենց տակտիկան: Նրանք հաշվարկեցին, որ ինչքան խորը գնան թուրքական զորքերը Հայաստան, այնքան ավելի իրական կդառնար ռազմական բախման հնարավորությունը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջև: Այդ ակնկալությամբ նրանք անմիջապես վետ դրեցին հայ-վրացական դաշինքի վրա: Հայաստանի կառավարությունը գգտում էր արագացնել դաշինքի կնքումը: Վրաստանն սկսեց խոսանակել, պատասխանելով, որ վախ կա, թե այս դաշինքը կառաջացնի աջարների խիստ դգործությունը: Նրանց դուր չի գա, որ Վրաստանը դաշինք է կնքում Հայաստանի հետ ընդեմ Թուրքիայի: Այս բոլոր փաստերը փակի տակ էին եւ անհայտ Հայաստանի կառավարությանը:

Ինչո՞ւ եմ այս օրինակը բերում: Այսօր մեզ հայտնի չէ, թե արտաքին ինչ գործունենք են ազդում Վրաստանի իշխանությունների վրա: Ես չեմ բացառում, որ Շենարդնաձե-Գամսախուրդիա հակամարտությունն էլ դրսից ներմուծված քաղաքականության արդյունք է:

Հայաստանի նկատմամբ Վրաստանի քաղաքականությունը վերլուծելիս, այսօր մեզ ոչ այնքան գիտնականների կարծիքն է հարկավոր, որը նրանք կազմում են միայն սադիկ լսելով կամ թերթեր կարդալով, այլ լուրջ ինֆորմացիա է հարկավոր ունենալ, որն, իհարկե, պետական ծառայությունների գործն է: Մեզ անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես են ազդում այսօր

Վրաստանի վրա թուրքիան, Ռուսաստանը, Գերմանիան եւ այլն: Իմ նպատակն է հրավիրել վրացագետների ուշադրությունը արտաքին գործունի վրա: Վրաստանի ներքին իրավիճակը յուրաքանչյուր բռնկ կարող է փոխվել, եւ այդ փոփոխությունը կարող է թելադրված լինել դրսից:

**Հովհաննես Այվազյան  
«Զավախք» միություն**

Մեր խնդիրը Զավախքի հայությանը տեղում պահելն ու Զավախքի դժվարությունները հոգալն է:

Վրաստանի հետ հարաբերություններ հաստատելու հարցում մինչեւ այսօր գերիշխել է մի տեսակետ, որը լուրջ վերանայման կարիք է զգում: Խորհրդային Միության վիլուգումը այն պատկերացումը ստեղծեց, որ նույն վիլուգման ճանապարհին է նաև Վրաստանի նման փոքրիկ երկիրը: Կարծում էին, թե ուները, արխազները, ինչ-որ տեղ նաև հայերը, այն ուժն են, որը պետք է ծնկի բերի Վրաստանի միացյալ պետականությունը: Այդպես չեղավ եւ չի էլ լինելու: Ի՞նչ է կատարվում այսօր Վրաստանում: Այստեղ կա թիֆլիսահայի, արխազահայի, ախալցխահայի պրոբլեմ: Արեւելան Վրաստանի պրոբլեմը մեկ է, Զավախքինը՝ ուրիշ: Մի դեղատոմսով բոլոր հարցերը հնարավոր չեն լուծել:

Գամսախուրդիայի օրոք մշակվեց մի տեսակետ՝ Վրաստանը վրացիների համար: Այդ քաղաքականությունը շատ լավ էր դիտվում: Եվ եթե չիներ տեղի իշխանության, մարդկանց դիմադրությունը, տեղահանություն կարող էր սկսվել: Որոշ գյուղերից տեղահանվեցին ռուսները: Այսօր 3—4—5 նախկին ռուսական գյուղերում վրացական միջնակարգ դպրոցներ են բացված:

Որոշում կայացվեց 21կմ-ոց գումարի ստեղծելու: Դա նշանակում է, որ այդտեղ հողը չպիտի սեփականաշինորվի, բնակչությունը իրավունք չունի կապիտալ տներ կառուցելու, ժառանգության փոխանցման իրավունք չկա: Դրանից առաջ որոշում ընդունվեց, որով Ախալքալաքը հայտարարվում է կալանավայր: Սա ազգային արժանապատվության ոտնահարման բնորոշ օրինակ է: Դրա դեմ չխոսելը, չպայցարելը ճիշտ չէ:

Վրաստանը բզեստված պետություն չէ: Օսթիայի հարցը երեւի թե վրացիների օգտին լուծվի: Եթե վրաց պետության ղեկավարության հարցը կարգավորվի, ես չեմ կարծում, որ հայերի հետ, այսինքն, Զավախքի հետ, նրանք չփորձեն հարցերը պարզելու պրոցեսը վերսկսել: Զավախքը նրանց համար ուժ է, որովհետեւ միատարր է:

Մեր մասվորականությունը այսօր պետք է ինքը ակտիվ լինի, չսպասի, որ իրեն դիմեն, ինքը կենդանի մասնակցություն ցույց տա: Անպայման պետք է խորհուրդ ստեղծվի, որը կոնկրետ առաջարկություններ անի խնդիրները պետական մակարդակով լուծելու համար:

**Նիկոլայ Հովհաննեսիան  
(պ.գ.դ., պրոֆեսոր, ՀԳԱ  
Արեւելագիտության ինստիտուտ)**

Ցավում եմ, որ այսօր չկան մեր իշխանության ներկայացուցիչները, որոնց համար այս առաջության եղջյուրից հոսող կարծիքները, գաղափարները շատ անհրաժեշտ են հայ-վրացական քաղաքականությունը վարելու համար:

Մենք բոլորս համոզվեցինք, որ մեր չորս անմիջական հարեւանների մեջ Վրաստանը գրավում է բացառիկ տեղ: Սա եւ՝ պատմականորեն է արդարացված, եւ՝ ներկա իրականությամբ՝ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական առումով: Մեր ամբողջ

դժբախտությունն այն է, որ արտաքին քաղաքականության մեջ կա մի հասկացողություն, որը Հայաստանը չի կիրառում: Օրինակ, եթե խոսում են Անգլիայի մասին, ասում են՝ Անգլիայի արարական քաղաքականությունը: Ունի՞, արդյոք, Հայաստանը վրացական քաղաքականություն: Չունի՞: Այդ կապակցությամբ հետեւյալն եմ առաջարկում: Առաջին, թեև մեր իշխանությունները մեր մեկնած ձեռքին չեն պատասխանում, բայց մեկ անգամ էլ դիմենք կառավարությանը՝ առաջարկելով, որ Ակադեմիայի եւ նրանից դուրս գտնվող մասնագետների հետ միասին մշակվեն հայ-վրացական քաղաքականության սկզբունքները: Այդ սկզբունքների մեջ կներգրավվեն քաղաքական, տնտեսական, ազգային հարցերը եւ կորունդիկացիայի հարցը:

Երկրորդը դիվանագիտուսկան հարաբերությունների հաստատումն է: Ոչ թե ձեւականորեն, որը ստորագրվել է, այլ գործնական: Ինչով բացարել այս հարցում ակտիվ եւ գործնական քայլերի բացակայությունը: Հարցը երեւի թե Փինանսներից չի կախված, ինչպես այլ դեպքերում:

Սա ինչ-որ անհայտ քաղաքականության արդյունք է: Բոլոր դեպքերում առաջարկում են դիմել կառավարությանը, որպեսզի շրջափուլը կերպով դեսպանություններ բացվեն եւ ստեղծվի մարտեք դեսպանատան կազմ:

Երրորդ: Ֆրանսիացիները ասում են, որ տանգո պարելու համար առնվազն երկու հոգի է հարկավոր: Բայց պարելով թիւ է, պետք է նաեւ, որ պարելու ժամանակ մեկը մյուսի ոտքը չարորի: Եթե այս տեսակետից մոտենանք, ստացվում է, որ Վրաստանի քաղաքականությունը մեր նկատմամբ որոշ չափով մեզանից է կախված, այսինքն, թե մենք հարավում ինչ քաղաքականություն կվարենք: Այս կապակցությամբ մենք դարձյալ մոտենում ենք մեր հարաբերություններից Իրանի եւ արարական երկրների հետ: Եթե դա մենք դարձնենք խիստ կենսական գոտի, Վրաստանը տեսնի, որ այստեղից շահ կա

իր քաղաքական դիրքերի համար, քանի որ նա շատ լուրջ ճնշումների է Ենթարկվում, այդ դեպքում Վրաստանի համար պարզ կդառնա Հայաստանի հետ հարաբերությունները զարգացնելու եւ ամրապնդելու անհրաժեշտությունը: Վրաստանի հետ «տանգո» պարելով կստացվի, եթե մենք ունենանք այլն տրանքային տարբերակներ, կապված եւ՝ Իրանի, եւ՝ մյուս այլ երկրների հետ:

Չորրորդ, մենք միշտ պահանջողի դերում ենք հանդես գալիս, եւ շատ շուտ նեղացողի դիրք ենք ընդունում, թե ինչո՞ւ այս կամ այն երկիրը մեր ազգային շահը չպաշտպանեց եւ այլն: Որպեսզի մենք կարողանանք ծիշտ վրացական քաղաքականություն ունենալ, հարկավոր է Վրաստանի ազգային շահերը հարմարեցնել մեր այս կամ այն շահի հետ: Գուցե չափազանցության գիրկն եմ ընկնում, բայց կարծում եմ, որ անդրկովկասյան երեք հանրապետություններից ամենաաղետալի վիճակում գտնվում է Վրաստանը: Փաստորեն, այսօր Վրաստանի պետական միասնականության, Վրաստանի որպես միասնական պետության գոյության հարցն է դրված, ընդ որում, այստեղ տարրեր ուժեր են գործում: Վերցնենք Արխազիան: Այստեղ եւ՝ Ռուսաստան կա, եւ՝ Թուրքիա: Զնայած Ելիհնը պաշտպանեց Վրաստանին, բայց Ռուսաստանը չի թողնում, որ Վրաստանն իրեն լրիվ վստահ եւ ապահով գգա: Ռուսաստանը կօգնի այնքան, որքան դա իր շահերին է համապատասխանում: Աջարիան շատ մեծ սպառնալիք է Վրաստանի համար: Բաթումի գոտին բացելուց հետո Աջարիան դարձել է մի խսկական շուկա: Մի վտանգ էլ է սպառնում Վրաստանին, որի մասին թիւ են խոսում: Դա 500—600 հազ. ադրբեջանցիներն են, որոնք բնակվում են Վրաստանում: Եվ եթե Վրաստանը փորձի պաշտպանել Հայաստանին հայ-ադրբեջանական կոնֆլիկտում, Վրաստանում ապրող ադրբեջանցիներն անպայման գլուխ կրաքրացնեն: Սակայն այն, որը Վրաստանը Ադրբեջանին գենք եւ այլն չի մատակարարում, արդեն մեր

օգտին է: Կամ չպետք է մոռանալ, որ Վրաստանը չկտրեց իր տարածքով անցնող կոմունիկացիաները, որոնք թեկուզ եւ փոքր, բայց Հայաստանի միակ կապն են արտաքին աշխարհի հետ: Մեր այս քննարկումները, համոզված են, ստեղծում են համապատասխան հասարակական կարծիք, որը, վերջիվերջո, հզոր գործոն կդառնա: Նա ճնշում կգործադրի կառավարության վրա եւ վերջինս ստիպված կլինի երկնարանքի և աջեւ կանգնել. Կամ շարունակել կոյր, պատահականությունների վրա հիմնված քաղաքականությունը, կամ ձեռք մեկնել սեփական մտավորականությանը եւ օգտվել նրա գաղափարներից եւ ծրագրերից:

*Մելիք Եռոյան  
(տ.գ.թ., Երեանի  
գյուղատնտեսական ինստիտուտ)*

Ես պատմաբան չեմ: Ուզում եմ որոշ հարցերի մասին խոսել որպես քիչ թե շատ այդ հարցերով հետաքրքրվող վրացահայ: Այսօր մեր հանրապետությունում խիստ տարրեր կարծիքներ կան Վրաստանի մասին: Ինքը՝ Վրաստանը, շատ ավելի ծանր կացության մեջ է, քան Աղրբեջանը: Ոչ ոք չգիտի, թե Վրաստանի վիճակը այսօր ինչպիսին է: Զենք էլ մտածում, թե ինչպիսին կլինի: Այստեղ Ակադեմիայի նիստերի դահլիճում խոսել Վրաստանի մասին շատ հեշտ է:

Այսօր Վրաստանից եկած հայերը ավելի շատ վրացի են, քան Ախլայսայի վրացիները: Նույնիսկ Զավախքում, որ հայության ամենախիտ զանգվածն է, մտավորականություն չունենք: Այստեղ ծնված, հայկական դպրոց ավարտած ապագա մտավորականը գալիս է Հայաստան, եւ այստեղից է տեսնում Վրաստանը: Այստեղ ասվեց, որ Զավախքի վիճակը ոչ այնքան այնտեղի ժողովրդի հերոսության արդյունքն է, որքան

աշխարհագրական դիրքի: Այսօր Ախալքալաքից ավելի շատ հայություն է դուրս եկել, քան ցանկացած շոշանից, եւ վերադառնալու ցանկություն առանձնապես չունի: Այսինքն, աշխարհագրական դիրքը դեռ չի նշանակում, որ Վիճակը լավ է:

Վերջին 70 տարում ավելի շատ ասիմիլացված հայ կա, քան վրացի: Ես համաձայն եմ Ն. Հովհաննիսյանի առաջարկին, որ հարկավոր է մշակել լուրջ ծրագիր եւ ներկայացնել կառավարությանը, նաեւ Հ. Հակոբյանի այն մաքի հետ, որ եթե հայ-վրացական հարաբերությունները չեն դրվում պետական մակարդակի վրա, որեմն պետք է մտավորականությունը իր ձեռքը վերցնի այս հարաբերությունների կարգավորման հարցը:

Դետք է ուժեղացնել, սերտացնել կապերը վրացահայության հետ: Նրանք շատ կարու են ձեր խորհրդականության հետ:

Առաջարկում եմ, որ մեր մտավորականությունը կապ հաստատի վրաց մտավորականության հետ, խորհրդակցությունները հրավիրվեն, միասնական ծրագիր մշակվի: Մենք հարգում ենք Վրաստանի ամբողջականությունը, բայց Վրաստանն էլ պետք է հարգի հայերին:

*Ա. Բերիզյան  
(Հատուկ ծրագրերի  
պետական վարչություն)*

Ելույթներից պարզ է դառնում, որ ինֆորմացիայի պակաս կա: Բայց այս պակասի համար պետք չէ մեղադրել իշխանություններին, որովհետեւ հայ-վրացական հարաբերությունները շատ նուրբ հարցեր են, եւ ամեն ինչ չէ, որ մամուլում պետք է հրապարակվի: Վրաստանում մեզ միշտ ասում են. դուք ստեղծել եք միատարր հանրապետություն, մեզ էլ թույլ տվեք նոյնը անել: Սա ազգային բնավորություն չէ, սա աշխարհայացք է, որը գալիս է հանրապետության եթերիկական իրավիճակից: Բուն վրացիները ներսում փոքրամասնություն են կազմում: Այսօր Վրաստանը

կորցրել է Օսեթիան, կորցնում է Արխազիան: Պատահական չէ, որ Վրաստանում ստեղծվեց Զավախքի վերածննդի եւ վերագրավման (բառը այսպես է թարգմանվում) կազմակերպություն: Վրաստանը փորձում է Զավախքում վրացական գյուղեր ստեղծել: Դա իրենց պետությունն է:

Հայաստան պետության ձեռքը չպետք է երբեւիցե երես Վրաստանում: Զի կարելի այդ գործերին խառնվել:

Եթե հետեւնք այս 3—4 տարվա պատմությանը, ապա կտևնենք, որ Վրաստանը ճնշումը մեծացնում էր Զավախքում, բայց ոչ Թրիլիսիում:

Արխազիայի կոնֆլիկտին մենք ակախվ չենք կարող միջամտել:

Հայաստանը Վրաստանի հետ պայմանագիր կնքեց եւ հայտարարեց. Վրաստանից ոչ մի պահանջ չունի: Եվ տա աստված, որ Զավախքի հայերը երբեւ այդպիսի հարց չբարձրացնեն:

### Գագիկ Սարգսյան (ՀԳԱ ակադեմիկոս)

Մի նկատառում: Այստեղ այն հարցը շոշափվեց, որ մենք տասնամյակներ շարունակ չենք գրադիւն Վրաստանի մոտ անցյալի հարցերով: Պարզապես չեն թույլատրվում գրադիւն ուղիւ հանրապետությունների գործերով: Ուստի մեր այսօրվա հիմնական ելույթ ունեցողները Վրաստանի պատմության միջնադարագետներ են, որոնք այսօր իրենց ուժերի ներածի չափով փորձում են կողմնորոշել մեզ այս խնդիրներում: Իրենց որպես ընդդիմախոս հանդես եկավ պ. Բերիգյանը, որն ընդհակառակ՝ պրագմատիկ մոտեցման ներկայացուցիչ է: Մեր ընդհանուր խնդիրը է աչ թե վիճել հիմնարար եւ պրագմատիկ մոտեցումների առավելությունների մասին, այլ լծորդել ակադեմիական գիտելիքները այսօրվա տեղեկատվության հետ եւ այդ հաստատուն հիմքի վրա ստեղծել մեր կոնցեպցիաները:

### ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՂՐԲԵԶԱՆ

25.9.1992

#### Լենդրուշ Խորշուոյան

(ՀԳԱ թղթակից անդամ, Երեանի պետական համալսարան)

Այսօրվա քննարկվելիք պրոբլեմը երեխ թե այն գործոններից է, որոնք ամենակարեւորն են հայ պետականության ստեղծման ընթացքի համար: Ես կանդրադառնամ մի քանի հարցի: Առաջին: Այսօրվա մեր վիճակը պատմական անհրաժեշտություն է, թե՞ Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականության արդյունքը: Այսօր Հայաստանը գտնվում է, ճիշտ է, չհայտարարված, բայց իսկական պատերազմական վիճակում: Այդ պատերազմում Հայաստանը հանդես է գալիս պարտվող դերում: Կորցրել ենք Շահումյանը, գրեթե ամբողջ Մարտակերտը, Արծվաշենը: Սահմանամերձ շրջանները մշտապես գնդակոծվում են թշնամու կողմից: Ես ցանկանում եմ ընդգծել այն հանգամանքը, որ այն տարածքները, որոնք մենք կորցրել ենք, մենք կորցրել ենք գրեթե առանց կռվի: Ուրեմն, մենք գտնվում ենք պատերազմի մեջ:

Երկրորդ: Հայաստանի հանրապետության անկախության հռչակումից անցել է երկու տարի: Պետության առաջին ատրիբուուր բանակն է: Այսօր ոչ Ղարաբաղում, ոչ էլ Հայաստանում բանակ չկա: Կան հայդուկային ջոկատներ: Հնարավո՞ր է արդյոք հայդուկային ջոկատներով հայրենի հող պաշտպանել: Ոչ: 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին մենք չկարողացանք բանակ ստեղծել եւ հայդուկային շարժումով անհնարին եղավ Երկիրը պահել: Այսօր հայդուկային ջոկատների մեծ մասը չի ստեղծվել պետության կողմից: Այդ պատճառով այս ջոկատները պետության կողմից կառավարելի չեն: Պետական ոչ բոլոր որոշումներն են, որ այսօր Ղարաբաղում կարող են անցնել:

Աղրբեջանը պատերազմի առաջին իսկ օրից ձեռնամուխ եղակ բանակի ստեղծմանը: Նա այսօր թեկուզ եւ թույլ բայց կանոնավոր բանակ ունի, որին մենք, ըստ եռթյան, ոչինչ չունենք հակադրելու:

Երրորդ: Ի՞նչ արեց Հայաստանը այս երկու տարվա ընթացքում, որպեսզի կարողանա միջազգային հանրությանը իր կողմը գրավել: Ուսումնասիրելով այն նյութերը, որոնք մեր ձեռքի տակ են, համոզված եմ, որ մենք պարտություն ենք կրել այդ հարցում եա: Այն լրատվական աշխատանքը, որը սկզբնական շրջանում բավականին հաջող էր դրված, այսօր բոլորովին չի տարվում: Աղրբեջանիները, որոնք անգամ սփյուռք չունեն, շատ գեղեցիկ կերպով կարողացան այնպես կազմակերպել զարարայան պրորեմի մատուցումը, որ այսօր ե՛ Ամերիկան, ե՛ Անգլիան, ե՛ միջազգային կազմակերպությունները Հայաստանին մեղադրում են ազրեսիայի մեջ: Ոչ մի բան հակադրել երանց մենք չենք կարողանում:

Այս երեք կետերից ելնելով, եզրակացնում ենք, որ երկու տարի մեր իշխանությունները վարել են սխալ քաղաքականություն եւ Հայաստանը կանգնած է պարտության եզրին:

Հարց է ծագում, թե այսօրվա վիճակը, որի մեջ գտնվում են Ղարաբաղը եւ Հայաստանը, անխոսափելի՞ էր, թե՞ այլ քաղաքականություն վարելու դեպքում վիճակը բոլորովին այլ կլիներ: Ես կարծում եմ, որ այս շարժմանը մենք գաղափարական իմաստով պատրաստ չենք: Շարժման սկզբնական շրջանում պետք է մշակվեր այն, ինչ իհմա մենք անում ենք ուշացումով, այսինքն, ի՞նչ դեր պետք է խաղան Ղարաբաղը, Աղրբեջանը մեր քաղաքականության մեջ: Եվ պետք է սկզբից ոչ թե կուակցական ծրագրեր ստեղծեինք, այլ ազգային ծրագիր եւ մանրամասն մշակեինք աղրբեջանական քաղաքականության սկզբունքները: Մենք պետք է որոշակիորեն համոզվեինք, որ ինչ քաղաքականություն է վարեր Հայաստանը, միեւնույն է, Աղրբեջանը Ղարաբաղի հարցում պետք է գնար

պատերազմի ճանապարհով: Այս հարցը, իմ կարծիքով, ուրիշ տարրերակ չուներ:

Հայ քաղաքական բոլոր ուժերը այն կարծիքի են, որ շատ լավ կլիներ, եթե Հայաստանն ու Աղրբեջանը կարողանային լուծել վիճելի հարցերը եւ հաստատեին բարիդրացիական հարաբերություններ: Այսօր դա հնարավոր չէ: Հնարավո՞ր էր արդյո՞ք մեկ տարի առաջ: Կարծում եմ, որ ոչ Բոլոր վիճելի հարցերը գուց եւ հնարավոր է լուծել Աղրբեջանի հետ, բացի մեկից՝ հողային պահանջից, որը ես չեմ համարում լուծելի:

Բոլշեվիկների վարչակարգը կամայականորեն հանձնեց եւ՝ Ղարաբաղը, եւ՝ Նախիջևանը Աղրբեջանին: Հայ ժողովուրդը երեք չի համակերպվել որեւէ կորուսի հետ: Մեր շարժումը սկսվեց որպես Ղարաբայան շարժում: Այլ հանրապետություններ սկսեցին անկախության լոգունգներով: Սա ցուց է տալիս, թե ինչ տեղ է գրավում Ղարաբաղը մեր հոգու մեջ, մեր կյանքում, մեր ամրող մտածելակերպում: Ղարաբաղը մեզ համար միայն հող չի: Այն ազգային գաղափար է, գոյապահպանման գաղափար է: Ղարաբաղի իդեալի կորուսը կարող է բերել հայ ժողովորդի բարոյալըման: Սա ավելի մեծ նշանակություն ունի, քան այն մի քանի հազ. քառ. կմ-ը, որը պիտի միանա Հայաստանին:

Ի՞նչ ուղիներ կային Ղարաբաղի հիմնահարցը լուծելու համար: Նետաղարձ հայացք նետելով մեր անցած ուղուն, մենք տեսնում ենք, որ Ղարաբայան շարժման առաջին երկու տարում հոյսեր կային, որ խորհրդային կառավարությանը կարելի էր համոզել հայերի պահանջի արդարացիության մեջ եւ հասնել Ղարաբաղը Հայաստանին միացնելուն: Դա գուց քաղաքական միամտություն էր: Ռուսաստանը մեզ չէր օգնելու: Այստեղ թուրքական գործոնը կա: Այսօր այն առավել է գործում, որովհետեւ այսօր քայլայվող ելցինյան Ռուսաստանը, պաշտպանելով հայերին եւ գնալով Աղրբեջանի դեմ, կարող է պայթեցնել առանց այդ էլ պայթվող

## Ոռասատանյան Փեղերացիան:

Առաջին շրջանի դժվարությունները բերեցին միասնական մտքի բաժանմանը երկու թեւերի: Մի կողմում հայտնվեց ամրող հայ ժողովուրդը իր տարրեր քաղաքական կազմակերպություններով, իսկ մյուս կողմում՝ Հայոց համագային շարժումը:

Մեր ժողովուրդի քաղաքական միտքը եկավ այն եզրահանգման, որ ստեղծված դժվարությունների պայմաններում մենք պետք է պայքարենք ղարաբաղյան հարցի լուծման համար: Եվ եթե դա խաղաղ միջոցով չի լուծվելու, որեմն պետք է գնայինք ռազմական միջոցով լուծելու, բայց ի տարրերություն այս ուղղության, ՀՀ-ն հանդես է գալիս բոլորովին այլ տեսակներով, որը հետեւյալն է ղարաբաղյան հարցը եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների հաստատումը կարող է պայմանավորվել նրանով, որ Լեռնային Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում: Կարո՞ղ է սա արդյունք տալ: Ես անձամբ գտնում եմ, որ այս բոլոր ծգառունները՝ Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու եւ Ադրբեջանի հետ հարցի լուծման այս տարրերակը, գալիս է պատմություն շիմանալուց, քաղաքական տգիտությունից:

Ի՞նչ ուղղությամբ պետք է գնալ այս վիճակից դոկու գալու համար: Առաջին հերթին, պետք է երաժարվել այն քաղաքականությունից, որը վարել ենք այս երկու տարրում Ադրբեջանի եւ Ղարաբաղի նկատմամբ: Կինը՝ Ադրբեջանը կոմունիստական, դեմոկրատական, թե՛ այնտեղ ժողովրդական ճակատը կինէի, Հայաստանի նկատմամբ նա իր քաղաքականությունը երբեք չի փոխի:

Այսօր Ղարաբաղը հոչակել է իրեն անլ իս հանրապետություն: Սա երեխ ստեղծված իրավիճակի ամենածիշտ լուծումն է:

Հայաստանը պետք է այս հանրապետությունը ճանաչի:

Մի տարրերակ էլ կա: Ազգային քաղաքականության սկզբունքներից ելնելով, այդ տարրերակը արժանի է քննարկման: Նա Նախիջենանի հետ Լեռնային Ղարաբաղը փոխանակելու

## տարրերակն է:

Ղարաբաղի հարցի կապակցությամբ պետք է խոսել նաև Թուրքիայի եւ Ոռասատանի մասին: Ադրբեջանը մենակ չէ, նա սերտորեն առնչվում է այս երկու հիմնական ուժերի հետ: Թուրքիան որոշակիորեն եղել է, կա եւ կլինի Ադրբեջանի կողմում: Նա մինչեւ վերջ պետք է պայքարի Ղարաբաղը անվերապահորեն Ադրբեջանից թողնելու համար:

Ոռասատանը ամուր մտել է մեր կյանքի մեջ: Կայսրությունը ամեն բան կանի, որ Հայաստանը դուրս չգա իր ազդեցության շրջանակից: Ոռասատանը թույլ չի տա, որ Հայաստանը կործանվի, Թուրքիային կու գնա: Աշխատելով ամեն կերպ պահել Հայաստանը, Ոռասատանը նաև կաշխատի պահել Ադրբեջանը կայսրության կազմում: Ոռասատանը կաշխատի, որպեսզի կոնֆլիկտը սրվի, հետո պետք եղած դեպքում ձեռք կմեկնի մեկ Ադրբեջանին, մեկ Հայաստանին:

Մենք պետք է ելնենք մեր շահերից, եւ առաջին հերթին դա պետք է լինի մեր անկախության պահպանման խնդիրը: Մենք պետք է մշակենք մեր ազգային ծրագիրը:

Հարց (Լ. Հայկենըյան, ՀԳԱ թղթակից անդամ, ՀԳԱ Արվեստի ինսահմանադիր):

- Այս մի քանի տարվա ընթացքում ունեցել ենք մի նպաստավոր պահ, որը կորցրել ենք:

### Պատասխան

- Մեր շարժման մեջ նպաստավոր պահը կար եւ եղել է Վոլսկու կոմիտեն, որի վրա մենք պետք է կանգ առնեինք: Բայց դա բոլշեվիկյան վարչակարգի ստեղծածն էր: Այդ վարչակարգը մի տարուց հետո դադարեց գոյություն ունենալ, որին կոմիտեն այլևս հեռանկար չուներ:

Հարց (Վ. Բարիսուղարյան, ՀԳԱ թղթակից անդամ):

- Այնուամենայնիվ, ադրբեջանցիները չկարողացան այս երկու-երեք տարվա ընթացքում գրավել Ղարաբաղը: Այն դարավոր քաղաքականությունը, որը իրագործում էր Ադրբե-

ջանը նախկինում՝ կուսորածներ կազմակերպելը, այսօր արդեն իր արդյունքը չի տալիս:

#### Պատասխան.

- Ուզում եմ որոշակի առանձնացնել երկու քաղաքականություն: Մեկը բուն դարաքաղիների քաղաքականությունն է, որի արդյունքը մենք տեսնում ենք: Մյուազ՝ մեր կառավարության քաղաքականությունն է, որը հակադիր է Ղարաբաղի քաղաքականությանը: Այսօր, ճիշտ եք, Լեռնային Ղարաբաղի վարած քաղաքականությունը արդյունավետ է, իսկ երկրորդը՝ ոչ:

#### Հարց (Կ. Դալլաջյան).

- Շատ վախենում եմ, որ տարբերակներ փնտրելիս հանկարծ կիայտնավեճը խիստ խոցելի վիճակում: Իրավունք չունենք Ղարաբաղի հարցում տարբերակներ փնտրելու և փոխազիջման գնալու: Ի՞նչ կեշանակի միջազգային կարծիքի համար այն, որ մենք համաձայն ենք Ղարաբաղը փոխանակել Նախիջեանի հետ: Մենք գիտենք, որ երկուան էլ հայկական տարածքներ են: Իսկ փոխանակման հարցադրման հիմքում այն գաղափարը դրված կլինի, որ մենք ընդունում ենք, որ Նախիջեանը աղբբեջանական տարածք է: Այլևս ոչ մի սակարկություն այս հարցում մենք իրավունք չունենք անելու: Դա խիստ կործանարար հետեւանք կունենա:

#### Պատասխան.

- Ես չասացի, որ այդպիսի տարբերակ պետք է մշակել: Ես ասացի, որ պատմությունը կարող է Աղբբեջանին հասցնել այդ տարբերակին: Պետք է ուղղակի մտածել այդ տարբերակի մասին: Եթե իրենք առաջ քաշեն, ի՞նչ պետք է մենք անենք:

#### Հարց.

- Կա՞, արդյոք, ոռասական բնակչության արտահոսք Հայաստանից:

#### Պատասխան.

- Լոկից հետաքրքրվել եմ այդ հարցով. ոռասական բնակչության արտահոսք կա, պատճառը ոչ թե մեր վերաբերմունքն է, այլ այն,

որ Հայաստանը գտնվում է շրջափակման վիճակում, պատերազմ է:

#### Հարց.

- Բացառո՞ւմ եք այնպիսի մի հնարավորություն, որ միջազգային հանրության ձևաչափ Աղբբեջանը համաձայնի վերականգնել Ղարաբաղի ստատու քվոն, վարչական իրավունքներ տա եւ այդ վիճակով հասնել խաղաղության:

#### Պատասխան.

- Միջազգային հանրության ազդեցությունը կարող է լինել: Կարող են մեզ ստիպել, որ մենք հանենք մեր զորամիավորումները, իսկ աղբբեջանական ուժերին թույլ տան մնալ: Միջազգային հանրությունը այն կարծիքին է, որ պեսք է պահպանել Աղբբեջանի տարածքային ամբողջականությունը: Հնարավոր է, որ նախկին ստատու վերականգնվի:

#### Հարց.

- Ի՞նչ լուծում կա, որը կարող է բավարարել երեք շահագրգուժած կողմերին:

#### Պատասխան.

- Մեկ տարբերակ՝ հօջակվել է Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետություն: Պետք է պայքարենք այն պահպանելու համար:

#### Հարց.

- Մինչեւ Աղբբեջանի ժողովրդական ճակատի իշխանության գալը մեր շարժման որոշ ներկայացուցիչներ ասում եին, հենց որ, այս ճակատը իշխանության գա, Հայոց համազգային շարժումը նրանց հետ լեզու կգտնի: Նրանք նախնական որեւէ երաշխիքներ ունեին, թե՛, պարզապես, դա մոլորեցուիչ դրույթ էր:

#### Պատասխան.

- Իմ տպավորությունն այն է, որ այդ հանդիպումները Աղբբեջանի ժողովրդական ճակատի հետ եղել են ոչ պաշտօնական: Հավանաբար ինչ-որ խոստումներ եղել են: Մի համոզմունք կար բոլորի մոտ, որ եթե ոռաները այստեղից դուրս գան, մենք եւ աղբբեջանական ճակատը, մնալով

մեն-մենակ, այդ հարցը կլուծենք: Պատերազմը ցուց տվեց, որ դա ռոմանաթիկ մոտեցում էր:

#### Հարց.

- Աղրբեջանը երբեք չի համաձայնի Ղարաբաղի անկախությանը: Գիտակցում ենք արդյոք, որ եթե անգամ հաղթենք այս պատերազմում, Աղրբեջանը ձեռքերը ծալած չի նստի:

#### Պատասխան.

- Կարո՞ղ էր արդյոք լինել մի հոգի, որը Սարդարապատի ճակատամարտից առաջ ասեր, որ հայը կպարտվի: «Կայոց դիվանագիտության հիմնական գիծը պետք է լինի ապահովել Թուրքիայի եւ Ռուսաստանի չեզոքությունը հայ-աղրբեջանական հարցերի լուծման ժամանակ:

*Լարիսա Ալավերդյան  
(Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության Գերագույն  
Խորհրդի եւ ՀՀ Գլու Արցախի  
հարցերով փորձագետ)*

Ես կանգ կառնեմ որոշ հարցերի վրա, որոնք ունեն ոչ թե գլորալ, կոնցեպտուալ նշանակություն, ինչպիսին էին. ապ. Խորշությանի առաջ քաշած հարցերը, այլ ավելի առօրյա նշանակություն: Աղրբեջանական կողմի հետ թե՛ պաշտոնական, թե՛ ոչ պաշտոնական շփումների փորձը ցուց է տալիս, որ մենք ավելի շուտ հարցեր դնելու մասնագետներ ենք, այլ ոչ թե պատասխաններ տալու:

Ամենից առաջ, ես համաձայն եմ այն մաքին, որ ինչ քաղաքական ուժեր ել իշխանության գան Աղրբեջանում, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վերաբերմունքը կմնա միանշանակ: Վերին Ղարաբաղը Աղրբեջանի անքաժանելի մասն է, աշխարհագրական Ղարաբաղը՝ նույնը, եւ այդպիսով պատկանում է Աղրբեջանի հանրապետությանը: Սա անխախտելի

կոնցեպցիա է, որը բոլոր մակարդակներով ներշնչվում է աղրբեջանական ժողովրդին նրա ղեկավար մարմինների կողմից, եւ, կարծում եմ, հենվում է բավականին ուժեղ համաշխարհային կառուցվածքների վրա:

Մեր փորձագետների տեսակետից հայկական կողմը, սկսած ոչ պաշտոնական մարմիններից եւ վերջացրած գիտնականներով, ոչինչ չի արել, որպեսզի միջազգային հանրությանը բացատրի եւ ապացուի Աղրբեջանին, որ Լեռնային Ղարաբաղը երբեք չի պատկանել Աղրբեջանին: Այսինքն, Աղրբեջանի իշխանությունը երբեք չի տարածվել Ղարաբաղի վրա:

Այսօր աշխարհագրությունը, Աղրբեջանի քարտեզը ի վեաս մեզ են վկայում: Ցանկացած անտեղյակ մարդ, իսկ ոա փաստորեն ողջ աշխարհն է պիտելով այս քարտեզը, բացարձակապես համաձայն է Աղրբեջանի հետ, որ դարաբայան կոնֆլիկտը նրա ներքին գործն է: Այստեղ աշխարհագրությունը պատմություն է դատնում: Ինչպես ցուց է տալիս փորձը, մենք նույնիսկ չենք կիրառում չենքների քաղաքականությունը: Եթե այսօր դեռ Ելցինը Դուդաեւի հետ հաշվի է նստում, որոշումներ է ստորագրում, ոա ոչ միայն նավթային, տնտեսական շահերից է գալիս, այլ նաև այն բանի հետեանքն է, որ նրանք միանշանակ կարողացան ապացուել, որ Չեչենական մարզը Ռուսաստանին միացրած մաս է: Ղարաբաղի մասին շատ ենք գորել, բայց, ես համոզված եմ, որ մեր քաղաքագետները եւ կառավարությունը չունեին համընդիանուր կոնցեպցիա, տեսակետ, որտեղ միանշանակ հնչեր, որ Աղրբեջանի ինքնիշխանությունը միջազգային իրավական բավարար իիմքեր չունի պնդելու, որ Ղարաբաղը Աղրբեջանին է պատկանում: Մենք մեր բոլոր կորուսաների հաշվարկը սկսում ենք այս կետից: Այստեղ կա երկրորդ հարց, որը շաղկապվում է առաջինի հետ: Սա լրատվական է ինքնաշրջափակման հարցն է: Այստեղ մենք բոլորս ներսից մի հանգույց ենք զցել: Ոչ ոք չի կարող լրատվական շրջափակումը վերացնել, եթե մենք ինքներս ենք

այն ստեղծել: Լրատվական շրջափակում ասելով, ես միայն մամուլը նկատի չունեմ: Մենք բացարձակապես արհամարհեցինք անձնական շփումների գործոնը, գերատեսչական շփումների գործոնը: Հասարակական գործիչները, գիտնականները շատ շուտ ընդունեցին դրսից թելադրված այն ստերեոտիպը, որ դա նրանց գործը չէ: Այստեղ լուրջ աշխատանքի ասպարեզ կա, որը դեռեւս բոլորվին շոշափված չէ:

Երրորդ: Ցանկացած ազգային միավորի ուժը բացատրվում է ոչ այնքան նրանով, թե ինչպես է ազդում նրա վրա երրորդ ուժը (այս ուժի ազդեցությունը միանշանակ է՝ կու տալ այդ ազգային միավորը), որքան իր ներքին գործոններով, այն գործոններով, որոնցով ապացուցվում է, որ խոսքը զնում է ինկուպես պետական տարածքային մի կազմավորման մասին, որը վերահսկման տակ է պահում ողջ տարածքը եւ ողջ կառուցվածքները, քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, ռազմական ոլորտները: Այս երրորդ կետը ամենաթույլն է: Ինչպես Ղարաբաղի ներսում, այնպես էլ Հայաստանում, նաև Հայաստանի եւ Ղարաբաղի փոխհարաբերություններում, սկսած 1991թ. սեպտեմբերի 2-ից, երբ հօչակվեց Ղարաբաղի անկախությունը, պարզ դարձավ, որ մենք քաղաքական հասունություն չունեինք, ոռպեսզի կարողանայինք ուժեղացնել ներքին կառուցվածքները, ապահովեինք Հայաստանի եւ Ղարաբաղի հարաբերությունները որպես պետությունը պետության հետ: Ես չեմ կապում այս հարցը Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչելու հարցի հետ: Փորձը ցույց է տալիս, որ շատ երկրներ այն տպավորությունն ունեն, որ Հայաստանը ճանաչել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը, եւ սա ինքնին հասկանալի բան է: Փաստորեն, միջազգային հանրությունը անտարեր է այն բանի նկատմամբ, ճանաչել է, թե՛ ոչ Հայաստանը Ղարաբաղի անկախությունը: Ես խոսում եմ դե ֆակտո ճանաչման մասին: Չի կարելի անտեսել այն, ինչ Հայաստանը կատարում է

Լեռնային Ղարաբաղում բոլոր մակարդակներով:

Այսօր Աղրբեջանում չկա ոչ այն քաղաքական ուժը, ոչ էլ միասնությունը, որը մեզ թվում է, որ կա: Աղրբեջանում այսօր մի շատ ուժեղ գործոն կա: Դա նրա քաղաքական կառուցվածքների քայլայումն է, այն ուժերի, որոնք այսօր իշխանության գլուխ են եկել: Մենք շատ քիչ ենք օգտագործում այս հնարավորությունը: Քանի որ մենք հնարավորություն չունենք արագ հզորացման, մենք կարող ենք հզոր զենք օգտագործել: Դա լրատվական հարձակումների քաղաքականությունն է, որը մենք բոլորովին չենք օգտագործում: Լրատվությունը այսօր ծիշա այնպիսի հզոր զենք է, ինչպիսին ռազմական տեխնիկան է: Այդ հնարավորությունը մենք բաց ենք թողնում ծեռքից, այն դեպքում, երբ մեր հակառակորդը այն կրկնապատկում է: Աղրբեջանը օգտագործում է դեզինֆորմացիայի ուժը եւ արագության շնորհիվ նա անում է այն, ինչ մենք բոլորովին չենք կարողանում:

Հայաստան-Ղարաբաղ փոխհարաբերությունների մեջ մինչեւ այսօր համընդհանուր տեսակետային որոշում չկա: Անզամ ինքը Ղարաբաղը, մտածում է թե ի՞նչն է լավ՝ զնալ մինչեւ վերջ անկախության ճանապարհով եւ պաշտպանել հանրապետությունը, թե՛ վերադառնալ միացման գաղափարին: Վախենում եմ, որ մեր հիմնական դիրքերի անորոշությունը խանգարում է Ղարաբաղի հարցի լուծմանը:

Ի՞նչ կարելի է անել: Ծապասելով դե յուրե ճանաչմանը, մեր շատ ծեսական պաշտոնական հանդիպումներից (թող թույլ տրվի այսպես ասել), անցնել ուեալ համագործակցության: Հակառակ այն կարծիքի, որ հնարավոր է քաղաքական, տնտեսական ինտեգրացիա, որպես միակ հաջող ճանապարհ, ես կարծում եմ, որ տվյալ դեպքում (սա նոր գաղափար է, Ղարաբաղը կարող է ներկայացվել միջազգային հանրությանը որպես նոր տիպի պետական կազմավորում Կովկասում: Կովկասում ազգային պետականության ստեղծումը շատ ցավոտ

է ընկալվում, իբրև սեպարատիզմ, իբրև «քանանյան հանրապետությունների» սինդրոմ: Ես կարծում եմ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կոնցեպցիան պետք է մշակվի եւ ներկայացվի իբրև Վերազգային հանրապետություն: Այս տեսակետը ուզում եմ ձեր քննարկմանը ներկայացնել որպես գոյատեսման միակ հնարավորություն, եւ ոչ միայն ֆիզիկական, այլ նաև որպես ազգային պետական միավորման գոյատեսման հնարավորություն: Այս տիպը ամենամուտիկն է այսօր միավորվող Եվրոպային, կոնֆերացիա ստեղծող Թուրքիային, ինչպես նաև Ամերիկային: Անգամ իր անվան մեջ Ղարաբաղի Հանրապետությունը չունի ազգային բնույթ: Սա մի հարց:

Միշտ, երբ մենք պնդում ենք, որ Ղարաբաղը մեր ազգային հարցն է, որ Հայաստանի մաս է, որ ինքնորոշման իրավունք ունի, մեզ տալիս են շատ ցածր մակարդակի պատճառաբանումներ: Ասում են, ինքնորոշումը «մատրյոչկա է» (գեղջկատիկներ), այսինքն ինքնորոշվել կարելի է ընդուառ մինչեւ փողոցը: Դուք ինքնորոշվեք, իետո Շուշիի հայ եւ աղրեջանցի բնակչությունը կակսի ինքնորոշվել եւ այլն: Միանգամից այս տարբերակն է մատուցվում: Մեզ միշտ տեղափոխում են երեխկական բնույթ ունեցող կոնֆլիկտի շրջանակների մեջ: Եվ մեզ դիտում են ոչ այլ կերպ, քան Աղրեջանի մի մաս: Այստեղից էլ ծագում է կուլտուրավավոնոմիայի զաղափարը, Աղրեջանի իրավահավասարությունը եւ այլն: Տեսականորեն, ես բացարձակապես վստահ եմ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը այսօրվա միշազգային իրավունքի իմաստով, իր կառուցվածքով եւ գործունեությամբ միգուցէ ավելի է հիմնավորված որպես հանրապետություն, քան Աղրեջանը: Սա միշազգային իրավաբանության տեսակետից բացարձակ անթրի պետական միավոր է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Վերեթնիկական, Վերազգային պետություն է, նա երբեք չի եղել Աղրեջանի տարածք, եւ Ազգերի լիգայի կողմից 1921թ. վիճակով համար-

վել է վիճելի տարածք, որի հարցը պետք է լուծվեր տեղային կոնֆերանսում: Մեր երկրորդ առաջարկն է՝ պահանջել անկախ փորձագետների խմբի ստեղծում ՄԱԿ-ի կամ ԵԱՀՆ-ի սահմաններում, որը գրաղի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միշազգային իրավական հիմքերի հաստատմամբ: Պետք է հետ վերադառնալ մեր վեճի բուն երանգին, որ վեճը պետական-տարածքային է: Չնայած Հայաստանի մշտական հայտարարություններուա, որ նա տարածքային պահանջներ չունի Աղրեջանից, Լեռնային Ղարաբաղը դե ֆակտո գոյություն ունի:

Եթե անգամ Հայաստանը չունի աարածքային պահանջներ, ապա Աղրեջանը ունի եւ դրա մասին նա շատ որոշակիորեն հայտարարել է 1991թ. հոկտեմբերի 18-ին իր անկախության մասին ընդունված սահմանադրական ակտում: Այնտեղ ասվում է, որ Աղրեջանը 1918—1920թթ. հանրապետության ժառանգորդն է, իսկ 12-րդ հոդվածում ասվում է, որ նույն կպաշտապանի իր պատմական սահմանները: Այսինքն, սրանք Աղրեջանի «պատմական» սահմաններն են: Հայաստանը պետք է հարց բարձրացնի ՄԱԿ-ում կամ ԵԱՀՆ-ում, թե ինչ սահմաններով է Աղրեջանը մտել այս բարձրագույն ասյանները: Երբ այս հարցը ես ավեցի ԵԱՀՆ-ի ներկայացուցչին, պատասխանը եղավ՝ «Ինչպես որ քարտեզի վրա է»: Ասացի, որ ընդունման արարողության ժամանակ քարտեզ չկար, կային Աղրեջանի սահմանադրական հայտարարությունները եւ հավաստիացումները:

Հաջորդ հոդվածից պարզ է դաշտեղ դեպքում Աղրեջանը Լեռնային Ղարաբաղի համար նախատեսել է ազգային, այն էլ լավագույն դեպքում, ավտոնոմիա: Ի՞նչու: Որովհետեւ հաջորդ հոդվածում խոսվում է Աղրեջանի միացյալության (ունիտարության) մասին: Այն համարվում է համընդհանուր աղրեջանցիների պետություն: Այստեղ Օսմանյան կայսրության սահմանադրության նույն դրույթն է, որով Օս-

մանյան կայսրության քաղաքացին օսման է, թուրք է: Իմի-ջիայլոց, միջազգային համբությունը դա շատ լավ է ընդունում: Ով Ամերիկայում է ապրում, ամերիկացի է, Ֆրանսիայում՝ ֆրանսիացի, եւ նույնպես, ով ապրում է Ադրբեջանում, ադրբեջանցի է: Սա չի դիմում որպես ազգայնություն: Այս առումով առաջարկում եմ երեք կետ՝

1. Հռչակել, որ Լեռնային Ղարաբաղը ոչ էթնիկական միավոր է, առաջադիմական, նոր օրինակներով (Ամերիկա, Շվեյցարիա) ստեղծված պետություն է:

2. Ստեղծել անկախ փորձագետների հանձնաժողով.

3. Ի՞նչ սահմաններում է ինքը իրեն դիմում Ադրբեջանը Հայաստանի հարեւանությամբ: Սա կարող է իրավական պարզություն մացնել մեր փոխհարաբերություններում:

Հարց (Ռ. Մահմակյան).

- Ի՞նչ քարտեզ է ներկայացրել Ադրբեջանը միջազգային հանրությանը: Մինչեւ 1990, թե՛ 1990թ. հետո, երբ վերացվեց Ղարաբաղի ինքնավար մարզը:

Պատասխան.

- Ոչ մի քարտեզ երբեմն չի ներկայացվել: Ադրբեջանը շատ լավ է աշխատում եւ ցուցաբերում իրավական կիմքերի ձևաչփում: Եթե լիներ մի գիտական կազմակերպություն, որը գրադարձ այսօրվա Ադրբեջանի կողմից ընդունված օրենքներով, մենք շատ նյութ կունենայինք ապացուցելու, որ հակառակ բազմից հայտարարված դեմոկրատիայի, նա իր քաղաքականությունը եւ պետությունը կառուցում է ազգայնակցական կիմքերի վրա:

Հարց (Կ. Դալլաջյան).

- Այդ լրատվական շրջափակումը պարարտ հող է գտնում այսօրվա միջազգային հարաբերությունների կացության մեջ: Գրեթե ամբողջ աշխարհը հայ-ադրբեջանական այս կոնֆլիկտի պահին տեսականորեն եւ քաղաքականորեն պաշտպանում է Ադրբեջանին, որովհետեւ տարածքային ամբողջականությունը

ընդունվում է որպես առաջնային միջազգային քաղաքականության մեջ: Մանավանդ, երբ Եվրոպան, Ամերիկան կանգնած են Թուրքիայի թիկունքին:

Պատասխան.

- Իրոք, շատ կարեւոր է սահմանների անխախտելիությունը եւ դա առաջնային է: Մեր հարցի լուծումը կախված է այն հանգամանքից, թե ինչպես կկարողանանք ազգել միջազգային կարծիքի վրա: Ճնշում գործադրել քաղաքակիրթ ձետվ, անգամ շրջանցելով կառավարական մակարդակները:

Հարց (Վ. Հակոբյան).

- Դուք առաջարկեցիք մի տարրերակ, որ առաջին անգամ եմ լսում՝ Լեռնային Ղարաբաղը դարձնել վերազգային պետականություն, եւ այս ձետվ, գուցե, հարցը լուծել: Չե՛ք կարծում, որ վերազգային պետություն կարող է հռչակել իրեն Ադրբեջանը, եւ այս դեպքում այդ տարրերակը կգործի Ադրբեջանի օգտին, քանի որ այնտեղ դարաբաղյան հարցից բացի շատ ուրիշ հարցեր կան:

Պատասխան.

- Մենք չունենք փորձաքննության հանձնաժողով, որը գրադարձ Ադրբեջանի օրենքներով: Բայց անգամ այն, ինչ վերլուծության է ենթարկվել, ցույց է տալիս, որ հակառակ բոլոր հայտարարությունների, Ադրբեջանում կառուցվում է զուատեղական թուրքերի պետություն: Թող դա ձեռնաու լինի Ադրբեջանին: Եկեք քննարկենք կոնֆեղերացիայի հարցը: Եկ թող այդ առաջարկությունը արվի Լեռնային Ղարաբաղի կողմից, որ նա համաձայն է կոնֆեղերացիայի: Մենք պետք է այնպիսի բան առաջարկենք, որ Ադրբեջանը չկարողանա ասել՝ «ո՛»:

Հարց (Կ. Միքայելյան, ՀԱՅՔ հաստատության ներկայացուցիչ, սփյուռքահայության կոմիտե):

- Զեր ելույթից պարզ է դառնում, որ մեր պայքարը տարածքային է, Ղարաբաղի համար է, որը անարդարացիորեն

բռնակցման է ենթարկվել:

#### Պատասխան.

- Այո, դա բռնակցում է: Ես համարում եմ, որ ամենասկզբից, երբ դեռ կրակոցներ չկային, մենք պետք է պարզ են որոշակիորեն ասեինք, որ միջազգային իրավունքի սահմաններում վերջին, միակ օրինավոր ցեսիայի ակտերից հետո, որոնք տեղի ունեցան 1920—21թթ., մի կողմից Ադրբեջանը իրաժարվում էր Զանգեզուրից, Նախիջևանից եւ Լեռնային Ղարաբաղից, մյուս կողմից Հայաստանը օրինավոր կերպով միացնում էր այս տարածքները իր հանրապետության կազմի մեջ: Սրանից հետո են ընդունվում անօրինական որոշումներ, Կովբյուրոյի որոշումը, որը փաստորեն բռնակցում էր: Դրանից հետո, անձանաչելիորեն փոփոխությունների ենթարկված Լեռնային Ղարաբաղը դառնում է մաքուր ազգային-տարածքային կազմավորում Ադրբեջանի կազմում: Անգամ Ադրբեջանի փաստաթղթերում մինչեւ 40-ական թթ. վերջը այն համարվել է ազգային-տարածքային պետական կազմավորում: Այս կոնցեպցիայից հրաժարվելը շատ թանկ նստեց մեզ վրա:

Հարց (Ա. Շաքարյանց, Տարածաշրջանային ուսումնասիրությունների կենտրոն):

- Վերազգային պետականության օրինակներ կան, ցավոք ոչ ասիական, այլ Եվրոպական: Ասիական օրինակը իրենից ներկայացնում է անվերջ պատերազմներ, ցեղասպանություններ: Այսօր նոյնիսկ Եվրոպայում վերազգային նոր կառուցվածքները կենսունակ չեն: Բոսնիան եւ Հերցոգովինան դրա լավագույն օրինակներն են: Լեռնային Ղարաբաղը արդեն պատերազմի մեջ է: Ի վիճակի՝ ենք արդյոք մենք ապահովել վերազգայնության միջազգային ճանաչումը:

#### Պատասխան.

- Հենց այս վերջին հանգամանքը ստիպում է ինձ առաջարկել այս կոնցեպցիայի քննարկումը:

Դալի-զադեն Ադրբեջանի դեմոկրատական շարժման լիդեր-

ներից մեկը, ընդունել է, որ Ադրբեջանում գնում է հակահայկական մոլի քարոզություն, որ զարգանում է մի գաղափարախոսություն, որի անունն է հակաարմենիզմ: Բայց այդուհանդերձ, նրանք հայտարարում են պետական մակարդակով, որ իրենք դեմոկրատ են:

Եթե մեզ մեղադրում են անշատողական ձգումների մեջ, եկեք այս գաղափարը քննարկման դնենք: Չսպասենք, որ ուզմի դաշտում մեզ ձգմեն այլ փաստարկներով:

*Մեղադրայանց  
Տարածաշրջանային  
ուսումնասիրությունների  
կենտրոնի փորձագետա*

Գնահատելով հայ-ադրբեջանական հարաբերությունները եւ դիմելով նրանց զարգացման հնարավորությունները, միշտ չէ, որ հնարավոր է ստոյգ պատասխան տալ: Պատասխանը հաճախ խորը անցյալում է թաքնված:

Ոչ ոք չէր սպասում, որ Ադրբեջանի գործոնը մեզ համար կարող էր դառնալ հիմնական: Այս գործոնը, ի դեպ, համարվում է երիտասարդ գործոն, եւ երեւի թե խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում գոյություն չուներ, պատմագրության մեջ չի եղել ադրբեջանագիտության ենթարաժին:

Իհարկե, ոչ ոք չէր զբաղվում տարածաշրջանում հարաբերությունների ստրատեգիական ծրագրերի մշակմամբ: Հասունացել է պահը շատ լրջորեն ուսումնասիրելու Ադրբեջանը ոչ միայն պատմական տեսանկյունից, այլ ստրատեգիական ուսումնասիրությունների կենտրոնի շրջանակներում, որն իր հարցերը, նպատակները կմշակի, ելնելով հայ ազգի հեռանկարներից տվյալ տարածաշրջանում:

Հանրապետությունում այսօր այսպիսի միասնական կենտրոն չկա: Կան առանձին խմբակներ:

Այսօր մեր քաղաքական կուրսը շատ արագ է փոխվում, որ անհամատելի է լուրջ պետականության ստեղծման հետ: Տակտիկական ելքերը եւ հարվածները կարող են տարբերվել, բայց ստրատեգիական նպատակը միակը պետք է լինի:

Այսօր մենք չենք պատկերացնում մեր նպատակները Ադրբեջանի հետ: Խոսում եմ այդ մասին ոչ թե որպես մի անձ, որը անձամբ ներգրավված է այդ գործին, այլ եւելով շրջապատղ կյանքից, անգամ այս չորսօրյա քննարկման արդյունքներից: Այս դահլիճում մենք կտրվում ենք իրականությունից: Մենք չենք շփում կոնկրետ հայ քաղաքականություն վարողների հետ, չգիտենք այն հարցերը, որոնք նրանք շարունակում են քննարկել իրենց քաղաքական եւ աշխարհաքաղական ընդդիմախոսների հետ, շփումների բացակայությունը ստեղծում է մի վիճակ, որտեղ ամեն մեկը տապակվում է իր ցավով: Արդյունքում այն սխալներն են, որոնք մենք տեսնում ենք:

Եկեք բոլորս մեզ հարց տանք: Ի՞նչ ենք հասկանում Ադրբեջան ասելով: Եթե սկզբնապես այս հարցում չկողմնորոշվենք, մենք դժվար թե կարողանանք ուրիշ հարցեր դնել: Ի՞նչ է Ադրբեջանը հայի, հայ գիտնականի եւ հայ քաղաքագետի համար: Սա երկարատեւ գործոն է, կապված համագալակատիկական պրոցեսի որոշ հատվածի հետ: Ի՞նչ է Ադրբեջանը: Եթե ուսումնասիրենք հայ պատմաբանների հետազոտությունները, ստացվում է, որ սա արիեստական կազմավորում է: Եթե կարդում ենք ադրբեջանցի եւ թուրք պատմաբանների գրածները, մենք տեսնում ենք, որ սա շատ լուրջ եւ երկարատեւ կազմավորում է: Այսպիսով ստիպված ենք միջինը վերցնել:

Ինչպիսին է Ադրբեջանը երեսում արտաքին աշխարհին: Վերլուծելով արեւելյան եւ ռուսական մամուլի վերջին իրապարակումները, այնպիսի տպագրություն է ստեղծվում, որ այս պետական շրջաններում Ադրբեջանը, այդ թվում եւ Հայաստանը, դիտվում են որպես ժամանակավոր երեւոյթ: Սա մի գործոն

է, որը կաշխատի, կմշակվի, միգրոց եւ կանհետանա: Եվ սրա հետ միշազգային իրավաբանական նորմերը բոլորովին կապ չունեն: Որպես պրոֆեսիոնալ իրավաբան, կարող եմ ասել, որ միշազգային իրավաբանությունը իրականում ու մի ընդհանուր բան չի ունեցել վարվելակերպի նորմերի հետ: Ավելին, միշազգային իրավաբանական նորմերը մշակվել են հիմնականում պատերազմներից հետո, այսինքն, իրավունքը հաղթողն է թելադրել:

Մի բան պարզ է, որ պատահական չէ, որ փոքրիկ Հայաստանը շրջապատող միշավայրը լարված զբաղվում է սպառագինությամբ: Միայն Ռուսաստանը Իրանին զենք է վաճառել 5 մլրդ. դոլարի, իսկ Թուրքիային նույն Ռուսաստանը վաճառել է 300 մլն. դոլարի զենք: Ինչո՞ւ է նա զինում այս երկու պետությունները: Դժվար թե այն բանի համար, որ սրանցից մեկը դառնա իշխող այս տարածքում: Ավելի շուտ հակառակը: Աշխարհում դիտվում է մի միտում, մանրացնել խոշոր պետությունները, փոքրերի հետ հեշտ է վարվել:

Այսօր Հայաստանում չի բնակվում որեւէ եթենիկական միավոր, որը հայ ազգի ոչնչացման ծրագիր ունենար, մեզ թշնամաբար մտտենար:

Մեր թշնամիները այս խնդիրը դեռ պետք է լուծեն, եթե իրենց տան այդ հնարավորությունը: Մեզ թույլ են տվել: Աշխարհը Ռուսաստանի միջոցով հայ ժողովրդին տալիս է հաջորդ քայլի հնայլավորությունը: Եվ այս իմաստով Ադրբեջանը դիտել որպես ինքնուրույն գործոն, Հայաստանի համար նպատակահարմար չէ: Ադրբեջանը իրեւ պետական կազմավորում, այն կառուցվածքի շարունակությունն է, որը տվյալ ժամանակահատվածում պետք է գործի դրվի խոշոր պետական միավորի ապակենարոնացման համընդհանուր պրոցեսում: Իսկ Ադրբեջանի անկումը կորոշեն մեր փոխարեն նրանք, ովքեր որոշում են համաշխարհային քաղաքականությունը: Եվ այստեղ Հայաստանը դառնա պատահական է ամենափոքրագույն երազը:

Այսօրվա վիճակը շատ բարդ է: Ելնելով այս կոնցեպցիայից, Աղքարեցանի հետ մեր փոխհարաբերությունները պետք է շատ խիստ լինեն: Կարելի է հիշել ասացվածքը, ուզու՞ն ես բոլորս մեղավոր ենք այն բանում, որ մոռացել ենք սեփական պատմությունը, չենք գնահատել այն, ինչ գնահատել են մեր հակառակորդները Աղքարեցանում: Նրանք շատ վաղուց պատրաստվել են այս պատերազմին, վաղուց մշակում են հայերի տեղահանումը Ղարաբաղից:

Անպայման չէ, որ պատերազմը վարվի ռազմի դաշտում միայն: Դա կենդանի օրգանիզմ է եւ զարգանում է անգամ խաղաղ ժամանակ:

Նորից կոչ եմ անում կողմնորոշվելու: Եթե մենք մեր հարաբերությունները Աղքարեցանի հետ դիտում ենք որպես պատերազմ, ապա մեր գործողությունների շարունակությանը պետք է պատրաստվենք: Եթե սա պատերազմ է, եթե անգամ մենք հասնենք որոշ արդյունքի, ոեալ քաղաքականության մեջ արդյունք չի լինի:

Դիտել Ղարաբաղի եւ Հայաստանի հարաբերությունների ողջ համալիրը տարածաշրջանից զատ, առաջին հերթին Թուրքիայից, Իրանից զատ, սխալ մոտեցում է: Այստեղ նաև պետք է հաշվի առնեն փոխհարաբերությունները Ռուսաստանի հետ:

Ինչպես եմ պատկերացնում անձամբ ես հակամարտության լուծման ուղիները: Սա իմ սեփական կարծիքն է:

Մեր ազգի մի մասը, որը ապրում է Ղարաբաղում, արդեն ներգրավված է պատերազմի մեջ: Այս փաստից ելնելով, մենք պետք է կառուցենք մեր ապագա հարաբերությունները Աղքարեցանի հետ: Սա չի բացառում կոնտակտների, շփումների առկայությունը հակառակորդի հետ: Այս շփումները պետք է լինեն տարբեր մակարդակներով: Շփումները չեն կախված ռազմական գործողությունների բնական ընթացքից: Այսինքն, հարձակումը կամ նահանջը չեն կախված լինի Հռոմի

կամ Մոսկվայի հանդիպումից: Ռազմական գործողությունների ավարտից հետո միայն քաղաքագետները իրավունք կունենան որոշելու այս տարածքի ապագան: Դիվանագիտությունը եւ պատերազմը նոյն բաներն են, պարզապես պատերազմը դիվանագիտության շարունակությունն է: Եվ մենք մտել ենք այս պատերազմի մեջ: Արտաքին աշխարհը արդեն վաղուց որոշել է, որ Հայաստանն է պատերազմում:

### Լենսեր Աղալովյան

(Փիզ-մաթ.գ.դ.,  
«ԳԱ Մեխանիկայի ինստիտուտ»)

Արցախից եմ, շարժման սկզբից երա մասնակիցն եմ եղել:

Շարժման սկզբում մենք չենք պատկերացնում, որ դա համաշխարհային քաղաքականության գործիք է: Այդ քաղաքականության նպատակն էր Ռուսաստանը, որը լուրջ գիշացավանք էր ուրիշ պետությունների համար, բաժանել մասերի:

Վաղուց մշակվում էր Ռուսաստանը ներսից պայթեցնելու սկզբունքը, որի համար իիմք պետք է ծառայեր նաև ազգային հարցի սրվածությունը: Այդ նպատակով անհրաժեշտ էր, որպեսզի ինչ-որ օջախներ առանձնացվեին Ռուսաստանում, որոնք խաղաղին կատալիզատորի դեր: Հիմնական կատալիզատորներից մեկի դերը, դժբախտաբար, հատկացված էր Լեռնային Ղարաբաղին:

Ռուսաստանը մասնատելուց բացի կա նաև հարցի երկրորդ մասը՝ պայքար եներգետիկ (նավթ, գազ) եւ հումքային խոչոր ռեսուրսներ ունեցող նոր շրջաններ ներթափանցելու համար, որպիսիք Աղքարեցանն ու Միջին Ասիան են:

Հստակ ձետվ մենք պետք է որոշենք, թե ովքեր են մեր թշնամիները, ովքեր են մեր բարեկամները: Ինչ կտա մեզ կողմնորոշումը դեպի Ռուսաստան, կամ դեպի Ամերիկա: Ամերիկայի բարեկամի առաջին տեղը գրադարած է, դա

Թուրքիան է:

Ուսաստանը մնում է հզոր պետություն, նա պահում է իր սահմանները, եւ որտեղ որ ծագում է անշատվելու միտում, նա ստեղծում է հակամարտություն: Հայաստանը այստեղ կարող է լինել Ռուսաստանի առաջին բարեկամը: Այդ տեղը ազատ է եւ պետք է շտապել:

Մեր հիմնական քաղաքականությունը պետք է հստակեցվի: Դա, դժբախտաբար, չի արվում, կամ եթե արվում է, շատ բաներ կորցնելուց հետո: Մենք կորցրեցինք Գետաշենը այն պատճառվ, որ չգնացինք միութենական պայմանագրի նույնիսկ քննարկմանը:

Այսօր ռեալ հարց է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումը Հայաստանի կողմից: Երբ ճանաչումը տեղի ունենա, հիմք կստեղծվի նրա հետագա մասնատումը կանխելու համար: Երկրորդ: Մեր ճանաչումով Լեռնային Ղարաբաղը դառնում է պետություն: Հայաստանը, լինելով ՄԱԿ-ի անդամ կարող է պահանջել Անվանգության խորհրդի նիստ հրավիրել, մեղադրելով Աղրբեջանին ագրեսիայի մեջ անկախ պետության նկատմամբ: Այստեղ չպետք է խառնել Ղարաբաղի հարցը Կիպրոսի հարցի հետ: Կիպրոսը չի եղել առանձին պետություն: Իսկ եղել է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ, որը պետական միավոր է եւ նախկին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո միջազգային բոլոր նորմերով ինքնորոշվել է: Շատ պասիվ է մեր արտաքին գործոց նախարարությունը:

Վերջերս ստեղծվել է Արցախ-Հայաստան հասարակական-քաղաքական կազմակերպությունը, որի կորիզը կազմում է արցախցի մտավորականությունը եւ նպատակը Արցախի հիմնահարցի դրական լուծման հասնելը է: Ես կոչ եմ անում ողջ մտավորականությանը միանալ նրան:

Ալեքսանդր Մամայան

(ի.գ.թ., ՀԳԱ Փիլիսոփայության  
եւ իրավունքի ինստիտուտ)

Աղրբեջանը հա շվի չի նստում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման հետ: Նա ասում է այն, ինչ իրեն է հարմար: Մեր փոխարեն ոչ ոք չի ասի այն, ինչ որ մենք կասենք: Այս կապակցությամբ պետական կառուցվածքների նկատմամբ իմ դժգոհությունը արտահայտելով, ես ցանկանում եմ նաև դժգոհություն արտահայտել ոչ պետական կառուցվածքների, ՀԳԱ հասցեին, որի անդամը եմ ես: Որովհետեւ նա քաղաքացիական շարժումներին վատ է մասնակցում: Եկեք չընենադատենք միայն իշխանություններին, եկեք ընդունենք, որ մենք ոչինչ չենք անում: Ղարաբաղյան շարժման սկզբնական շրջանից մտավորականության բազմաթիվ ելույթներում, անզամ ուղիղ եթերով (խոսք Գերագույն խոր նրդի նիստերին, միջազգային եւ միութենական լսարաններում) ոչ մեկը չասաց, որ Ղարաբաղը բռնագրավված տարածք է:

Այս կապակցությամբ ավելի պակաս հնչեղություն ստացավ ԽՍՀՄ ինքնալուծարման պրոցեսի իրավական հիմնավորումը: Մի բառ այդ մասին չի ասված: Եթե մենք միջազգային իրավունքի նորմերի տեսակետից դիտարկեինք ԽՍՀՄ-ի փլուզումը, ինքնալուծարումը, մենք կանսնեինք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հօշակել է ոչ միայն միջազգային օրենքի նորմերին համապատասխան, այլ հենց ԽՍՀՄ փլուզով երկրի պատմության իմաստով: Այս գաղափարը նույնապես ոչ մի հնչեղություն չի ստանում:

**Սամվել Ստեփանյան**  
(պ.գ.թ., ՇԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ)

Հայ-ադրբեջանական հարաբերություններին անդրադառնախ, հնարավոր չեղացել այնպիսի մի հարց, ինչպիսին Ղարաբաղի կոնֆլիկտն է: Ի՞նչ իրադրություն է ստեղծվել Հայաստանում:

Բոլորին համար պարզ է, որ յուրաքանչյուր պատերազմ ունի երկու ասպեկտ՝ ռազմական և դիվանագիտական-քաղաքական:

Վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ տվյալ կոնֆլիկտային վիճակում ռազմական ուղին նույնպես կարող է փակուղի լինել: Որովհետեւ պարտություններին հաջորդում են հաղթանակներ, կրկին պարտություններ եւ հաղթանակներ, եւ թերեւա ոչ մեկը չի կարող ասել, թե արդյո՞ք ռազմական ձետվ կարելի է այս հարցը լուծել, թե՞ ոչ: Միակ քայլը, թերեւա, մնում է դիվանագիտական-քաղաքական կողմը, եւ այս հարցում է, որ ես գտնում եմ, որ Հայաստանի իշխանությունները կարող են անել այնպիսի առաջարկներ, որոնք կգրավեն միջազգային հանրության ուշադրությունը, եւ ինչ-որ ձետվ կնպաստեն դարարայան հիմնահարցի լուծմանը:

Ես ունեմ մի փոքրիկ առաջարկություն: Դիվանագիտական այնպիսի քայլ պետք է մտածվի, որը, ըստ եռվյան, չհակասի Ղարաբաղի ժողովողի շահերին: Ես գտնում եմ, որ տվյալ պահին, ժամանակավորապես, կարելի է ՄԱԿ-ի որոշմամբ, միջազգային դիմորդների ներկայությամբ՝ Ղարաբաղը սահմանափակ ժամկետով հայտարարել Հայաստանի եւ Ադրբեջանի պրոտեկտորատ: Ինչո՞ւ է պատճառաբանվում հենց Հայաստանի եւ Ադրբեջանի համապրոտեկտորատի հաստատումը: Ովքեր ծանոթ են ենթամանդատային համակարգին, գիտեն, որ տվյալ դեպքում ենթամանդատային պետությունը պահպանում է որոշակի իրավունքներ: Առավել ես, որ այս

դեպքում ընդունվում է այս վարչական տարածքի գոյությունը: Ղարաբաղը այստեղ կարող է շահել հետեւյալը: Նա պահպանում է իր վարչատարածքային միավորը, միեւնույն ժամանակ նա պահպանում է ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունը: Ադրբեջանը կարող է շահագրգռված լինել այնքանով, որքանով որ լիովին չի գրկվի Ղարաբաղի գործերին վերահսկողություն ունենալու իրավունքից: Հայաստանի իշխանությունները կարող են զգալի շահ ունենալ այն առումով, որ նույնպես անմիջականորեն կարող են մասնակցել Ղարաբաղի կյանքի կազմակերպմանը եւ թույլ չտալ Ադրբեջանի հսկողության ուժեղացմանը: Թերեւա ես այս առաջարկությունը չեի անի, եթե որեւէ մեկը ինձ փորձեր համոզել, որ հարցի լուծման ռազմական ուղին կարող է մոտ ապագայում, 4–5 տարում, թերեւ Ղարաբաղի հարցի լուծմանը առանց Հայաստանի շահերը վնասելու, այսինքն Ղարաբաղի պետականության ճանաչումը մյուս ուղին, այսինքն Ղարաբաղի պետականության ճանաչումը մյուս պետության կողմից կհանգեցնի կոնֆլիկտի ավարտին:

Մնում է ավելացնել, որ այս հարցում պետք է հսկայորեն մշակված մեխանիզմներ մտցվեն, որոնք այդ համապրոտեկտորատի համակարգը դարձնեն գործուն:

**Ռեմ Ղազանչյան**  
(ՇԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ)

Որպեսզի հարցադրումը ճիշտ լինի, պետք է ես գնալ: Մինչեւ 1918թ., ինչպես հայտնի է, Անդրկովկասի վարչական բաժանումը հաշվի չեր առնում ազգերի շահերը, որի հետեւնքով հայաբնակ Զանգեզուրը եւ Ղարաբաղը մտել են Ելիզավետպոլի գավառի մեջ: Երբ 1918թ. մայիսին Անդրկովկասում երեք

հանրապետություն ստեղծվեց, դրանցում իշխանության գլուխ անցած ամեն մի Ազգային խորհուրդ հայտարարեց, որ իր իրավասությունը տարածվում է այն շրջանների վրա, որտեղ իր ազգն է բնակվում, ելնելով ինքնորոշման սկզբունքից: Դրա հետեւանքով Հայոց ազգային խորհուրդը իրավագոր էր դառնում Ղարաբաղի ու Զանգեզուրի հայարձակ տարածքների նկատմամբ, իսկ Մուսուլմանական ազգային խորհուրդը հավակնում էր ամբողջ Ելիզավետպոլի գավառին: Հարցը մնաց առկախ Անդրկովկասի վրա ձեռնարկված թուրքական հարձակման հետեւանքով: Անդրկովկասը թուրքական զորքերից ազատագրելուց հետո այնտեղ տեր ու տաճորինություն անող անգլիացիները Ղարաբաղը կառավարելու հրավիրեցին ադրբեջանցու՝ Բաքվից: Լեռնային Ղարաբաղի բնակչության համագումարն, իր հերթին, արտահայտվեց Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու օգտին: Այսպես ծագեց «Ղարաբաղի հիմնախնդիրը», որն էլ ավելի խորացավ ՌԿ/Բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի հայտնի որոշումից հետո:

Այսօր հաշվի չառնել այս ամենը, ըստ իս, չի կարելի: Փաստորեն վեճն այստեղից է սկսվում:

Ես չեմ կարծում, թե այսօր՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, ներկայիս Ռուսաստանը նոյն շահերն ունի Հայաստանի նկատմամբ, ինչ ցարական կամ բոլշևիկյան Ռուսաստանը: Ուստի եւ մենք պետք է լեզու գտնենք մեր հարեւանների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ: Պատերազմը դադարեցնելու համար միակ լուծումը, ըստ իս, Ադրբեջանի կազմում Ղարաբաղի ինքնավար հանրապետության տարբերակն է՝ Հայաստանի հետ լայն կապերով: Դա շատ մեծ հնարավորություններ կարող է ընծեռել:

## Ալեքսանդր Ղազարյան (Լեռնային Ղարաբաղից)

Մենք գտնվում ենք երկու երկրների շահերի կենարունում: Դեմք է կարողանանք կողմնորոշվել, թե որ երկրի հետ են մեր շահերը համընկնում: Ամերիկայի շահերը չեն համընկնում Հայաստանի շահերի հետ:

### Ա. Մայության

Ելույթ կունենա ինֆորմացիոն բնույթ:

Չե կարող չխոսել, քանի որ այսօրվա քննարկումների ընթացքում բազմիցս խոսվեց Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների հետ կապված պանթուրանիզմի մասին:

Անշուշտ, ստեղծված իրավիճակում, Անդրկովկասի հանրապետությունների ձեռք բերած անկախությունից հետո, Թուրքիան չեր կարող չօգտագործել առիթից փորձելու լցնել ստեղծված քաղաքական վակուումը: Այստեղ նորից թուրքական քաղաքականության թղթապանակից հանվում է պանթուրիզմի թեզը: Տարբեր քաղաքական կարծիքներ ներկայացնող թուրքական մամուլը հեղեղված է նորից թուրքական միասնության այդ գաղափարով: Բազմաթիվ կուակցությունների կողմից առաջ է քաշվում լեզվի, մշակույթի միասնության գաղափարը: Լեզվի մեջ միասնությանը նրանք հասել են լատինատառը ընդունելով, դա հայտնի է: Մշակութային կապերը խորանում են:

Դեմիրելի կողմից ԱՄՆ նրա փետրվարյան այցի ժամանակ առաջարկվել է այսպես կոչված 13 կետանոց օգնության ծրագիր: Սա մի լայնածավալ ծրագիր է օգնելու նախկին ԽՍՀՄ թյուրքալեզու հանրապետություններին: Ֆինանսավորումը կատարվելու է ԱՄՆ-ի կողմից, կոորդինացումը դրված է Թուրքիայի վրա: Թվում է, այստեղ Թուրքիան ունի

առաջնություն: Սակայն, Ամերիկան իրեն մանելու հնարավորություն է թողել: Ելցինին Ամերիկա կատարած այցի ժամանակ ասված էր, որ այդ հանրապետությունները թողնվում են Ռուսաստանի ազդեցության տակ, եթե Ռուսաստանը հետեւ Ամերիկայի խորհուրդներին: Ամերիկան շահագրգռեց թե Թուրքիային, թե Ռուսաստանին:

Այն, որ Թուրքիայի համար Ղարաբաղը հիմնահարց է, նրանք չեն էլ թաքցնում: Սակայն պետք չէ նաև միանշանակ ընկալել այսօրվա Թուրքիան: Բանավեճերը Թուրքիայի պառլամենտում ցույց են տալիս, որ այնտեղ համաձայնություն չկա: Մեծամասնությունը կողմ է, որ Թուրքիան ուղղակիորեն օգնի Ադրբեջանին ընդհուպ մինչեւ ռազմական միջամտություն: Բայց կա նաև մի սրափ խումբ, որը Դեմիրելն է ներկայացնում. այն տարրեր տեսակի հակաֆաստարկներ է բերում Թուրքիայի միջամտությանը այս հարցում կանխելու համար:

Ու՞մ ազդեցության տակ է մնալու այս տարածքը: Միտում կա, որ այս գոտին Ռուսաստանի ազդեցության տակ է մնալու, ԱՄՆ-ի հսկողությանը ենթարկված: Առայժմ Ղարաբաղը անորոշ ստատուսով կմնա: Դա ձեռնաու է բոլոր այն գերութերին, որոնք հետաքրքրություններ ունեն այս տարածաշրջանում:

**Հակոբ Չաքրյան**  
(պ.գ.թ., ՀԳԱ Արեւելագիտության  
ինստիտուտ)

Մի քանի րոպեով ուզում եմ անդրադառնալ թուրք-ադրբեջանական հարաբերություններին:

Թուրքիան, որ չեզոք դիրք էր պահպանում մինչեւ Խոջալուի գրավումը, այս անգամ հանդես եկավ Ադրբեջանի իրավունքները միջազգային ասպարեզում պաշտպանողի դերում: Հակահայկական հիստերիա բարձրացրեց: Դեռ այն ժամանակ

մտավախություն կար Թուրքիայում, որ հայերը կգրավեն Շուշին ու Լաշինը, եւ Ղարաբաղը բացարձակապես կդառնա հայկական տարածք: Երբ Թուրքիայի մտավախությունը իրականացավ, նա Ղարաբաղի հարցը վերածեց ներքին հարցի: Ինչու՞: Որովհետեւ Թուրքիայի համար դարաբառյան հարցը հայ պահանջատիրության շղթայի առաջին օդակն է: Եթե Հայաստանը բացարձակապես հայերով բնակեցված Ղարաբաղը զիշի Ադրբեջանին, նա չի կարող այդքան հետությամբ հավակնել այն տարածքներին, որտեղ ոչ մի հայ չի բնակվում:

Ադրբեջանի իրավունքները միջազգային ասպարեզում պաշտպանելով, Թուրքիան թույլ ավեց նաև վրիպումներ, որոնցից մենք չկարողացանք օգտվել: Լաշինի միջանցքը բացելուց եւ Շուշիի գրավումից հետո Թուրքիան Ադրբեջանին խորհուրդ տվեց դիմել ՄԱԿ-ին: Եթե Ղարաբաղը Ադրբեջանի համար ներքին հարց է, ՄԱԿ-ին դիմելը անտրամարանական է: Ուրեմն, Ղարաբաղը ներքին տարածք չէ: Դա մեր կողմից չօգտագործվեց, փաստորեն այստեղ Թուրքիայի հնարավորությունները սպառվել եին: Վիմա փակուղուց դուրս գալու համար պետք է խաղարկել հայերի ազրեսիայի տարբերակը: Դրա հետ միասին մեջիսի օրակարգ մտավ ռազմական օգնություն ցույց տալու հարցը: Ինչպես գիտեք, Թուրքիայի մեջիսում բազմիցս հարցը քննարկվեց, որից հետո Բուրբուլիսը հանդես եկավ մի հայտարարությամբ, ըստ որի Ռուսաստանը հայերին պաշտպանելու միջոցառումներ է անցկացնում: Մի քանի օր անց Դեմիրելը մեկնեց Մոսկվա եւ ստորագրվեց ռուս-թուրքական բարեկամության եւ համագործակցության պայմանագիր: Այդ պայմանագրով նորոգվում էին մինչեւ այդ ստորագրված բոլոր պայմանագրերը: Բայց դա չէր կարետրը: Հայերի ազրեսիայի դեմ համատեղ պայքարի որոշում կար: Ելեւելով այն հանգամանքից, որ այդ հայտարարության տեքստը ոչ մի տեղ չիրապարակվեց, այն ստացավ գաղտնի պայմանագրի բնույթ: Այսպիսով, ռուսական դիվիզիաները գրավեցին Շահումյանը,

ապա Մարտակերաը, իսկ Թուրքիան նաեւ զինամթերք տրամադրեց, եւ ինչպես միշտ այս ռուս-թուրքական գործարքը շուտ եկավ մեր դեմ:

Միանգամայն համամիտ եմ պ. Խուրչույանի այն մտքի հետ, որ Եթե մեզ հաջողվեր, ապա առաջին հերթին պետք է չեզոքացվեին եւ՝ Ռուսաստանը, եւ՝ Թուրքիան: Մենք միշտ հակառակն ենք արել:

Ի՞նչ կարելի է անել: Իմ կարծիքով, ամենից առաջ ժողովրդին պետք է միավորել ազգային պետականության գաղափարի շուրջ, եւ ոչ թե օտարել սփյուռքը, բաժանել ժողովրդը դարաբաղցիների, աղետի գուտու, սահմանամերձ շրջանի, Երեանի բնակչության: Այնուհետեւ, պետք է որդեգրել ազգային քաղաքականություն, եւ ոչ թե այն համարել ազգի կործանման ամենակարծ ճանապարհը: Դեղատոմներ շատ կան: Օրինակ, Թուրքիայի հիստերիային ինչո՞ւ կարելի էր պատասխանել ԵԱՀԽ-ի շրջանակներում: Կարելի էր պատասխանել Թուրքիային Կիպրոսով, հիշեցնել Եվրոպային, որ Թուրքիան բազմից հարյուրավոր որոշումներ է ուսնակոյն արել:

ԵԱՀԽ-ին անդամակցելուց առաջ միթե՛ հայտնի չեր, որ այնտեղ տարածքային ամբողջականությունը մղվում է առաջին պլան: Եթե կար Ղարաբաղի ճանաչման հարցը, միթե՛ կարելի չեր անդամակցելուց առաջ այն ճանաչել: Կարելի է վիճել, թե ի՞նչ կտար ճանաչելը: Կտար այն, որ Հայաստանը կծագրած իր դիրքորոշումը: Անորոշ դիրքորոշումը բերում է Հայաստանի մեկուսացմանը: Եվ այսօր մենք միշտագգային հանրության կողմից մեկուսացվել ենք:

Այստեղ խոսվում է, որ ԱՄՆ-ը պաշտպանում է Թուրքիայի տեսակետը: Բայց ինչո՞ւ: Ի՞նչ ենք մենք անում, որ այսօր ԱՄՆ-ը Թուրքիայի տեսակետը չպաշտպանի: Այս տարի Ամերիկայում զնարություններ են, 800 հազ. հայերի ճայն կաթուշի դեմ Կալիֆոռնիայում: Մենք կարող ենք վճռել նրա ճակատագիրը: Ամերիկան միշտ չէ, որ պաշտպանում է

Թուրքիայի շահերը, Կիպրոսի հարցում նա հսկայական ճնշում է գործադրում: Գերմանիան, լինելով Թուրքիայի բարեկամը, բացահայտորեն պաշտպանում է քրդերի շարժումը:

Գաղիկ Սարգսյան  
(ՀԳԱ ակադեմիկոս)

Այս հավաքը, որը կազմակերպել էր «Հայք» հաստատությունը, փաստորեն սկսվեց որպես Արեւևագիտության ինստիտուտի ներքին կոնֆերանս: Բայց հետո, հիստից հիստ դարձավ «Հիստերնացիոնալ»: Ինձ մեծ գոհունակություն է պատճառում, որ մեր աշխատանքներին ներկա են արտգործնախարարության ներկայացուցիչները: Այս չորսօրյա հիստերը կարելի է բաժանել երկու մասի: Եթե Իրանին եւ Թուրքիային նվիրված հիստերում հանդես էին գալիս մասնագետներ, որոնք առաջ էի զրադվել են այդ հարցերով եւ հիմա, արդեն, իրենց մշակված, աշխատված տեսակետներն են արտահայտում, թեեւ նոր բաներ ել եղան, ապա 3-րդ եւ 4-րդ հիստերը հատկանշական դարձան նրանով, որ ի չգոյե նորագոյն պատմության մասնագետների, ելույթ էին ունենում միջնադարագետները (խոսքս Վրաստանի մասին է), արտահայտելով հետաքրքրական տեսակետները: Առանձնապես հատկանշված էր պ. Մարգարյանի ելույթը, որը բարձրացրեց այն հարցը, որի մասին ես հիմա խոսում եմ: Մենք չգիտենք այսօրվա Վրաստանը, չենք զրադվել: Գոնե նրանով, որ մենք հասկացնք, որ չգիտենք այսօրվա Վրաստանը, այդ հիստեր արդեն երեսույթ էր:

Աղբեջանի մասնագետ չունենք, կամ բոլորս էլ հավասարացեն նրա մասնագետներն ենք դարձել: Ամեն մենք մեզանից կարող էր այստեղ ելույթ ունենալ եւ բերել իր առաջարկները, իր դեղատոմները՝ տարբեր մակարդակով: Այդ էր պատճառը, որ Հայաստանի եւ Աղբեջանի հարաբերությունների հարցը

շոշափեց միմիայն Ղարաբաղի հիմնահարցի կապացությամբ: Ես կարծում եմ, որ ճիշտ կլիներ, եթե շոշափեց նաև Աղրբեջանի ներքին իրավիճակը, ինչ քաղաքական հոսանքներ, ինչ ուժեր են գործում այնտեղ, նրանց փոխհարաբերությունները, ինչ է տալիս դա մեզ Աղրբեջանի հետ ունեցած հարաբերություններում: Դիմի շոշափեց Հայաստանի շրջափակման խնդիրը, կամ Նախիջևանի հիմնահարցը:

Ինչ անենք, որպեսզի մեր հավաքների արդյունքները չվերջանան, երբ մենք այստեղից ցրվենք: Այսինքն, արդյունքը դարձնենք պիտանի եւ օգտակար: Անհրաժեշտ է հրատարակել հյութերը: Մամուլ կլոսաբանի մեր աշխատանքները, պ. Կիրակոսյանը նաև առաջարկեց, որ ներկայացնենք դրանք արտգործնախարարությանը: Ես ուրախ եմ այդ առաջարկի համար:

Կցանկանայի նշել, որ կառավարության կողմից այդպիսի առաջարկներ պետք է վաղուց արվեին, եւ ոչ միայն արտաքին հարաբերությունների հարցերի նկատմամբ, այլ բռնոր այն հարցերի, որոնցով գրավվում են հասարակագիտական ինստիտուտները: Զի արվել, չի արվում: Սխալ է գործում մեր դեկավարությունը, որը չի օգտագործում մեր պոտենցիալը: Նոր դեկավարությունը շատ որոշակիորեն որդեգրել է մեր հին դեկավարության ավանդները: Բայց մեծ տարբերություն կա օրյեկտիվ իրավիճակների միջև:

Այն ժամանակ մեր ինստիտուտները մեծ մասամբ կատարում էին վերուատ տրված առաջադրանքները եւ տալիս սպասվող պատասխաններ, այնպես որ պատվիրողները կարող էին անգամ չիտաքրքրվել աշխատանքների արդյունքով:

Այսօր վիճակը փոխվել է: Մենք ներկայանում ենք որպես ազատ, անկախ երկրի գիտություն, որը կախված չէ դրսից դեկավարող ուժից: Եթե այդ օրյեկտիվ վիճակին ընթացք արվի, եթե այն խրախուավի, ապա սուբյեկտիվն էլ, այսինքն՝ գիտ-

նականների վերաբերմունքը մշակվող խնդիրների նկատմամբ կփոխվի, գիտական կոլեկտիվները կաշխատեն լիարժեք արդյունքով եւ անգնահատելի նպաստ կրերեն ազգին: Եթե չի օգտագործվում այդ հսկայական ներուժը, դա սխալ է եւ պետք է ուղղվի: Եթե մենք ակտիվ չենք եղել, մասամբ նաև նրանց է, որ մեր ակտիվությունը չի ընդունվել: Ուրեմն, ինչ պետք է անենք՝

1. Դիմանի ձետվ օգտագործենք անցած նիստերի գիտական արտադրանքը, որպեսզի այն չմնա տեղում.

2. Մենք չունենք մասնագետներ արդի Վրաստանի եւ Աղրբեջանի գծով: Դետք է ստեղծենք եւ կստեղծենք: Խոսում եմ մեր ինստիտուտի մասին.

3. Դետք է այն գիտական կապերը, որոնք կան կամ շատ դեպքերում գրեթե չկան մեր հարեւանների հետ, ըստ հնարավորին զարգացնել: Դրանով մենք ներդրում կանենք այդ երկրների հետ Հայաստանի փոխհարաբերությունների զարգացման մեջ: Ի դեպ, գիտական այդ կապերը ավելի թույլ են, քան արտասահմանյան երկրների հետ: Վրաստանի հետ փորձեր արվել են, բայց տակավին արձագանք չեն գտել: Բայց դա չպետք է մեզ թեսաթափ անի: Նորից ու նորից պիտի փորձենք եւ կիասնենք հաջողության:

**Նիկոլայ Հովհաննեսիան -** Մեր ծրագրված աշխատանքներն ավարտվեցին: Չորս օր անընդմեջ մենք քննարկում էինք մեր հանրապետության համար վերին աստիճանի կարեւոր, քաղաքական եւ գիտական մեծ նշանակություն ունեցող խնդիրներ:

Ես մտադիր չեմ ամփոփել այս քննարկումների արդյունքները: Դա մի նարդու ուժերից վեր է եւ շատ բարդ խնդիր է: Սակայն, այդուհանդերձ, կցանկանայի իմ մի քանի նկատմաումները հայտնել:

Իմ ընդհանուր տպագրությունն այն է, որ քննարկումներն

անցան մեծ հաջողությամբ: Նման պնդման համար հիմք են տալիս հետևյալ հանգամանքները:

Առաջին, չորս օրվա ընթացքում չորս տարրեր խնդիրների շուրջ գնաց իրոք պրոֆեսիոնալ, գիտական վիճաբանություն: Այստեղ ներկայացված էր մեր մտավորականության սերուցք, ներկայացված էին մասնագետներ, որոնք տարիներ շարունակ բարեխղճությամբ ուսումնասիրել են խնդրո առարկա հարցերը: Նրանք անկաշկանդ արտահայտեցին իրենց տեսակետները եւ հիմնավորվեցին իրենց մոտեցումները քննարկվող պրոբլեմների նկատմամբ: Քննարկումները վկայեցին, որ մեր հանրապետությունն ունի հզոր գիտական պոտենցիալ, գիտական մտավորականություն մի բույս, որն ի վիճակի է մասնագիտական ամենալուրջ քննարկման ենթարկել ամենատարրեր քաղաքական խնդիրներ:

Երկրորդ, քննարկումների միջոցով մենք պետք է պարզեինք, թե արդյոք ունենք լուրջ եւ հիմնավորված կոնցեպցիաներ Հայաստանի արտաքին քաղաքականության առջեւ կանգնած բարդ խնդիրների վերաբերյալ: Ես չեմ ուզում թաքցնել իմ այն մտավախությունը, որ ունեի սկզբում: Ես մտածում եմ, թե հանկարծ մեր իշխանությունները չինի թե «սխալվեն» եւ ցանկանան համագործակցել գիտական մտավորականության հետ եւ Երանից պահանջեն լուրջ եւ հիմնավորված առաջարկություններ այս կամ այն պրոբլեմի վերաբերյալ: Կկարողանա՞նք արդյոք ներկայացնել լուրջ տեսակետներ կամ առաջարկություններ Թուրքիայի, Իրանի, Վրաստանի եւ Ադրբեյջանի հետ Հայաստանի հարաբերությունների վերաբերյալ: Քննարկումից հետո պարզ դարձավ, որ մենք ի վիճակի ենք այդ խնդիրը լուծելու: Մենք ունենք հիմնավորված տեսակետներ եւ լուրջ առաջարկություններ, որոնք կարող ենք ներկայացնել մեր կառավարությանը:

Փոսյթ չե, որ քննարկումների ընթացքում արտահայտվեցին հակադիր, երբեմն իրարամերժ կարծիքներ, դրսետրվեցին

աարբեր մոտեցումներ եւ առաջարկվեցին պրոբլեմների լուծման զանազան տարրերակներ: Դա միանգամայն բնականոն է գիտության, եւ թող թույլ արվի ասել, նաև քաղաքականության ասպարեզում: Կարեւորն այն էր, որ ասելիք կար եւ բոլոր ելույթ ունեցողները տոգորված էին մեր հանրապետության արտաքին ճիշտ քաղաքականություն մշակելու գաղափարով, նույնիսկ այն դեպքում, երբ քննադատական խոսքեր էին հնչում իշխանությունների հասցեին:

Երրորդ, համոզված ենք, որ քննարկումների ընթացքում արտահայտված առողջ տեսակետների եւ առաջարկությունների հիման վրա միանգամայն հնարավոր է հաստատել ստեղծագործական համագործակցություն հանրապետության իշխանությունների եւ գիտնականների, եւ այդ գիտնականների կենտրոնակետը հանդիսացող Գիտությունների ակադեմիայի միջեւ: Մեկ անգամ ես ցանկանում ենք ասել, որ գիտական մտավորականությունը համագործակցության ձեռք է մեկնում կառավարությանը եւ հուս ունի, որ այդ մեկնված ձեռքը օդում կախված չի մնա: Գիտնական մտավորականները անձնական ոչինչ չեն ուզում: Նրանց ուզածը իրենց կողմից առաջարկվող գաղափարները մեր անկախ հանրապետության շահերին ի սպաս դնելն է, եւ միայն այսքանը:

Չորրորդ, չորսօրյա քննարկումները համոզիչ կերպով ցույց տվեցին, որ Մերձավոր եւ Միջին Արեւելքը իրոք Հայաստանի գոյատարածքն է եւ առաջնակարգ նշանակություն ունեն Երահարաբերություններն իր անմիջական հարեւանների՝ Թուրքիայի, Իրանի, Վրաստանի եւ Ադրբեյջանի հետ: Կարծում եմ, որ ելույթ ունեցողները հիմնավորված կերպով ապացուցեցին, որ մեր երիտասարդ հանրապետության եւ համայն հայ ազգի անվտանգ գոյությունը զգալիորեն կախված է այդ հարաբերությունների բնույթից եւ տարածաշրջանում տիրող ուժերի հաշվեկշռից: Եվ այս հանգամանքի վրա հարկ է, որ Հայաստանի իշխանությունները բացառիկ ուշադրություն դարձնեն:

Հոառվ ենք, որ այս գիտական հավաքը ինքնանպատակ չէր, եւ նրա արդյունքները համապատասխան արձագանք կգտնեն մեր հասարակայնության տարբեր շրջաններում: Քննարկման նյութերը ամրողությամբ կտրվեն ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը՝ նրանց օգտագործման համար: Բացի դրանից, այդ նյութերը կիրատարակվեն առանձին պրակով, որի ծախսերը հոգալը սիրով իր վրա է վերցնում ՀԱՅՔ (ԱՄՆ) հաստատությունը:

Ցանկանում եմ միաժամանակ նշել, որ սույն թվի նոյեմբերի երկրորդ կեսին մենք կկազմակերպենք քննարկումների երկրորդ շարքը՝ նվիրված Ռուսաստանի եւ արարական երկրների հետ Հայաստանի հարաբերությունների արդի վիճակին եւ զարգացման հեռանկարներին: